ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱԾԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

Այս գրքոյկին մէջ ներկայացուած Նիկոլ Աղբալեանի գործերը նորութիւն մը չեն Դաշնակցութեան մէջ եւ անոր շուրջ ապրող ընկերներուն եւ համակիրներուն համար։ ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի մէջ 92 տարի առաջ լոյս տեսած «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին» յօդուածաշարը, ինչպէս նաեւ տասնամեակ մը ետք հրապարակուած միւս երկու յօդուածները, այսքան տարիներ ետք, կուսակցութեան Ծրագրի եւ Կանոնագրի որոշ փոփոխութիւններով հանդերձ, կը պահեն իրենց ամբողջական իմաստը եւ արժէքը։

Այս գրքոյկը, մեր կուսակցութենէն եւ անմիջական շրջապատէն հեռու գտնուող մարդոց համար, պատուհան մըն է դէպի ներսը Դաշնակցութեան՝ որպէս կազմակերպութիւն եւ կառոյց, եւ Դաշնակցականին՝ որպէս մտածելակերպ եւ ապրելակերպ։

Գրքոյկի վերահրապարակումը կը նուիրենք Հ.Յ.Դ. 130 ամեակին։

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
Դեկտեմբեր 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

-Դաշնակցականը.....1

Ընկերական Ջրոյցներ
Ա. Մեր կանոնագիրը
-Կանոնագրի դերը կազմակերպութեան մէջ.....109
-Կուսակցական համակիրն ու անդամը.....113
-Մեր կանոնագրի յօրինուածքը.....118
Բ. Կրկին մեր կանոնագիրը.....126
-Կանոնագիր եւ ազատութիւն.....127
-Կանոնական շեղումներ.....133
-Ո՞վ է ընկերը.....138

-Գառնիկ Բանեան. Նիկոլ Աղբալեան
(Ուրուագծեր կեանքի եւ գործի մասին).....144

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ

Շատ անգամ առիթ եմ ունեցած մտածելու մեր Կանոնագրի առաջին երկու կէտերի մասին, որ առում են. «Հ. Յ. Դաշնակցութեան անդամ կրնայ ըլլալ ամէն քաղաքացի, որ կ'ընդունի կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը, կ'ենթարկուի անոր կանոնագրին եւ որոշումներուն եւ ամէն ջանք կը թափէ իրականացնելու զանոնք»։ – «Իւրաքանչիւր դաշնակցական պարտաւոր է մտնելով խմբի մը մէջ՝ վճարել կուսակցական տուրք Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն»։ Որքան խորամուխ եմ լինում այս յօդուածների ներքին իմաստին, այնքան աւելի համոզւում եմ, որ նրանց կանոնագրական չոր ու ցամաք խօսքերի մէջ լիովին ուրուագծուած է կենդանի դաշնակցականի գաղափարական տիպարը։ Շատ հրահանգիչ դաս կը լինէր յետնորդների համար եթէ մէկն առնէր եւ ուսումնասիրէր մեր Կանոնագրի փոփոխութիւնները՝ ժամանակի ընթացքին։ Դա կը լինէր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան հետաքրքրական գլուխներից մէկը, ուր պարզ կ'երեւար դաշնակցական սերունդների ըմբռնումն իրենց գործի կազմակերպութեան եւ գործօն դաշնակցականի մասին։ Ես նպատակ չունեմ այդ պատմութիւնն անելու։ Ես կ'ուզէի այդ յօդուածների թելադրանքները ձեւակերպել եւ դաշնակցականի գաղափարական տիպարն ուրուագծել աւելի պարզ ու մեկին, քան կարելի է տեսնել վերը բերած յօդուածների հարեւանցի ծանօթութիւնից, ուրիշ խօսքով՝ ես կ'ուզէի մեկնել այդ յօդուածները, լուծել ու մանրել նրանց խտացած իմաստը։

Այսպէս, ուրեմն, Կանոնագիրը հինգ պահանջ է դնում ամէն մի քաղաքացու առջեւ, որ ցանկանում է անդամ դառնալ Հ. Յ. Դաշնակցութեան. ա) ընդունել դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը. բ) ենթարկուել կուսակցութեան կանոնագրին ու որոշումներին. գ) ամէն ջանք թափել իրականցնելու «զանոնք», այսինքն կուսակցութեան ծրագիրը, կանոնագիրն ու որոշումները՝ կուսակցական գործելակերպով. դ) որեւէ դաշնակցական խմբի անդամ դառնալ եւ ե) դրամական տուրք հատուցանել՝ Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն:

Կարելի՞ է այս հինգ պահանջներից որեւէ մէկը կատարել եւ «դաշնակցական» համարուել. կամ կարելի՞ է նրանցից մի քանիսը ընդունել եւ «դաշնակցական» նկատուիլ: Կանոնագրի տառն ասում է «ոչ». նա հինգ պահանջ է դնում եւ հինգին եւս գոհացում պարտադրում: Իսկ ես ասում եմ. ոչ միայն Կանոնագրի տառը, այլ, մանաւանդ, ոգին պահանջում է, որ այդ բոլոր պայմանները լրացուին՝ «դաշնակցական» նկատուելու համար. եւ լրացուեն ոչ թէ աստիճանաբար, այսօր մէկը, վաղը միւսը, հետեւեալ օրը մնացածը, այլ բոլորը միաժամանակ: Եթէ մերձուստ քննութեան առնենք իրական կեանքի պայմանները եւ կուսակցականի կոչումն ու դերը, մենք կը տեսնենք, որ ուրիշ կերպ կարելի չէ. որ ուրիշ «կերպերը» մեզ կը տան թերի դաշնակցականներ, մեր շուրջը կը համախմբեն համարկիրներ, գործակիցներ, օժանդակներ, բայց բնաւ «դաշնակցականներ» բառի բուն իմաստով եւ կանոնագրական առումով:

Առնենք, օրինակ, առաջին պահանջը, որ ասում է ընդունել կուսակցութեան «ծրագիրն ու գործելակերպը»: Նախ՝ ի՞նչ է «ծրագիր» ասածը: «Ծրագիրը» մի քաղաքական-տնտեսական բնոյթ ունեցող մտայղացում է, որ ունի մի

իմացական հիմնաւորում: «Ծրագիրը» նախ պատճառաբանում է, յետոյ այդ հիման վրայ կառուցանում մի քաղաքական եւ տնտեսական կենցաղի ուրուագիծ, որի իրագործումը համարում է ցանկալի եւ հնարաւոր: «Ծրագիրն», ուրեմն, մի ցնորք չէ կամ երազանք, այլ մի իրագործելի հնարաւորութիւն: Նա արդիւնք է որոշ մտածման եւ որոշ տենչերի: Նա ենթադրում է, թէ հնարաւոր է յեղաշրջել տիրող քաղաքական եւ տնտեսական կացութիւնը եւ տենչալի է համարում այդ յեղաշրջումը: Նա կարծում է, որ մարդկային անջատ ճիգերը կարելի է համադրել եւ այդ համադիր ճիգերով յեղաշրջում առաջ բերել տիրող կացութեան մէջ: Նա մի որոշ կարծիք ունի հանրային ուժերի բնական ընթացքի մասին, ինչպէս նաեւ անհատական եւ խմբական կամեցողութեան դերի մասին: Նա կարծում է, որ հանրային կեանքի «բնական» համարուած ընթացքը կարելի է շեղել եւ կազմակերպուած զանգուածների գրոհի տակ՝ նոր հունով վարել. եւ այլն, եւ այլն: Մի խօսքով, նա ոչ միայն որոշ պահանջների յայտագիր է, այլ եւ որոշ մտածումի յայտարար:

Արդ՝ երբ Կանոնագիրը պահանջում է ընդունել «ծրագիրը» (թողնենք առժամապէս «գործելակերպը»), նա պահանջում է ոչ միայն յարել որոշ քաղաքական եւ տնտեսական պահանջների, այլ եւ որոշ մտածման: Այս հանգամանքը լաւապէս կը պարզուի, եթէ այստեղ ուրուագծենք ենթադրական թեկնածուների մի քանի տիպարներ:

«Ծրագիրն ու գործելակերպն ընդունելու» պահանջի հանդէպ կարող է երկու վերաբերում լինել. մէկը կարող է ընդունել «ծրագիրը», բայց չընդունել «գործելակերպը». եւ հակառակը – ընդունել ու հաւանել «գործելակերպը», բայց

մերժել «ծրագիրը»:

Իսկ «ծրագիրն» ընդունելու պահանջի հանդէպ նոյնպէս երկու վերաբերում կարելի է ենթադրել. մէկը, որ ընդունում է «ծրագիրն» իբր կառուցում, բայց մերժում է «մտածումը», որի արդիւնքն է այդ ծրագիրը. եւ միւսը, որ համամիտ է մտածման եղանակին եւ ընթացքին, բայց մերժում է «ծրագիրն» իբր յղացում: Այս չորս տիպարի «քաղաքացիները», որ «ընդունում են» մեր Կանոնագրի առաջին պահանջը մասամբ կամ լիովին, բայց չեն ենթարկւում կանոնագրին ու որոշումներին, անդամ չեն որեւէ խմբի, կուսակցական տուրք չեն վճարում եւ ջանք չեն թափում մեր ծրագրի, կանոնագրի եւ որոշումների իրացման համար՝ – կարելի՞ է սրանց «դաշնակցական» համարել:

Ենթադրածս չորս տիպարները մտացածին չեն. սրանք գոյութիւն ունեն կեանքի մէջ եւ անգամ իրանց «դաշնակցական» են ծախում: Նրանցից այ՛ն մէկը, որ ընդունում է «ծրագիրն» առանց որդեգրելու դաշնակցական մտածումը՝ իր քաղաքական-ընկերային տենչերով մեզ հետ է, առանց մեր մտածումն ունենալու: Նա նոյն կարծիքին է հայութեան ապագայ բարեկեցութեան մասին, բայց նոյն համոզումը չունի հանրային ուժերի զարգացման, նրանց հոսանքի շեղման, նրանց կառուցողական կարողութեան եւ այլ խնդիրների մասին: Նա կարող է այն հաւատաւոր միամիտներից մէկը լինել, որ կարծում են թէ ամէն ինչ ընթանում է ճիշտ այն ուղղութեամբ, որ պէտք է. եւ որ հանրային ուժերի զարգացումը ինքնաբերաբար եւ բնական ընթացքով տանում է դէպի «ծրագրի» իրացումը եւ, ուրեմն, մեր «ծրագիրը» նրա համար մի ճշմարիտ գուշակութիւն է գալոց օրերի, մի նախատեսութիւն այն վախճանի մասին,

ուր պիտի հանգի ընկերային ուժերի «բնական» խաղը: Մեր «ծրագրով» նա լուսաբանուած է համարում ընկերային շարժումների ներկան եւ նրանց արդիւնքի ապագան եւ, ուրեմն, որեւէ կազմակերպութեան եւ հաւաքական ճիգի կարիք չի տեսնում: Սա մի լաւատես երազող է: Մեր «ծրագիրը» ուրուագծում է նրա երազը միայն, առանց խթանելու նրա կամքը եւ գործի մղելու: Ամենաշատը նա կարող է համաձայնել, որ «ծրագիրը» լայնօրէն քարոզուի, որպէսզի լայն զանգուածներ յոյսով սպասեն... Կանոնագիրը այդ տիպարներին «դաշնակցական» չի ճանաչում եւ իրաւունք ունի: Դաշնակցութիւնը լաւատես երազողների խմբակցութիւն չէ, այլ հանրային պայքարի կազմակերպութիւն: Նա ճիգի եւ աշխատանքի կուսակցութիւն է, որ կարծում է թէ համադիր ճիգով ու աշխատանքով հնարաւոր է կեանքի կերպարանքը փոխել՝ «ծրագրի» իրացման ճամբով: Նրա համար «ծրագիրը» մտամարզանք չէ, կամ մարգարէացում գալիք օրերի, այլ ցանկալի ապագայի յօրինուածք եւ պայքարի ուղեցոյց: Նա չի վստահում իրերի «բնական» ընթացքին. իր վճիռն ու կամքը նա համարում է պատմակերտ մի ազդակ, որ կարող է այդ ընթացքը փոխել:

Կան այն միւսը, որ համամիտ է մեզ, բայց մերժում է մեր ծրագիրը: Սա հաւատում է անհատի դերին եւ զանգուածների կազմակերպած ուժին: Փոփոխելի է համարում հանրային զարգացման հունը՝ գիտակից ճիգերի ազդեցութեան տակ: Պատմական շարժումների հանդիսատես չէ միայն, այլ հետամուտ է իր դերը խաղալու այնտեղ եւ իր դրոշմը դնելու նրանց վրայ՝ անձամբ կամ համակիր ու համամիտ ընկերների գործակցութեամբ: Բայց հայութեան ապագան նա այլ կերպ է յօրինում իր մտածման մէջ եւ այլ տենչերի իրացման է ձգտում իր ճիգով: Նա մեզ նման է իբր մտածող եւ գործող,

բայց ծրագրում է ուրիշ նպատակ ու գործ: Իբր տիպար նոյնանում է մեզ, իբր ազդակ զարկւում է ուրիշ ուղղութեամբ: Նա կարո՞ղ է «դաշնակցական» համարուել: «Ո՛չ», ասում է Կանոնագիրը, ով չէ ընդունում Դաշնակցութեան ծրագիրը, նա «դաշնակցական» լինել չի կարող, թէկուզ եւ մտածէ իբր «դաշնակցական» եւ իբր գործող տիպար նման լինի մեզ: «Ո՛չ», ասում եմ ես. ոչ թէ «դաշնակցական», այլ հակառակորդ միայն կարող է լինել այդպիսի մէկը, որ մտքի նոյն ուժով եւ մտածման նոյն ուղղութեամբ, կամքի նոյն վճռականութեամբ կոչուած է յետ մղելու ինձ իբր խոչընդոտ, երբ պայքարի ճամբին հանդիպենք իրար. որովհետեւ մենք նոյն տիպարներն ենք իբր մտային եւ բարոյական կառուցուածք, բայց գնում ենք դէպի տարբեր նպատակներ: Այն ուժերը, որ յենարան են ինձ՝ խոչընդոտ են նրա համար, որովհետեւ տարբեր «ծրագիրներ» հետապնդելով, մենք տարբեր գնահատութիւն ենք տալիս եղած ազդակներին՝ մեր «ծրագրի» իրացման տեսակէտով: Ինչ որ կարծում եմ թէ պէտք է պահել իբր դրական արժէք իմ «ծրագրի» համար, նա կարծում է, որ պէտք է խորտակել իբր արգելիչ ոյժ, որ խանգարում է իր «ծրագրի» իրացման: Մտածումի եւ տիպարի նոյնութիւնն այսպիսով բաւական չէ «դաշնակցական» լինելու համար. պէտք է նաեւ «ծրագրի» նոյնութիւն: Մի «ծրագիր» «հնարաւոր» նկատել եւ «իրագործելի»՝ դեռ չի նշանակում «ցանկալի» համարել. լինել տիպար հանրային գործիչ, դեռ չի նշանակում համամիտ լինել: Հակառակորդները կարող են նոյնարժէք լինել իբր բարոյական եւ մտային կառուցվածքներ, բայց դրանով չեն դադարի հակառակորդ լինելուց: Տարբեր «ծրագիրները» այդ տեսակ մարդկանց կարող են դարձնել ազնիւ եւ անողոք թշնամի, իսկ միեւնոյն «ծրագիրը» – անձնուէր ընկեր:

Իսկ այն երրորդը, որ ընդունում է մեր «ծրագիրն»

ամբողջովին, բայց մերժում է «գործելակերպը». այսինքն իր մտածումը նման է մերինին, ընկերային շարժումների մասին նոյն կարծիքն ունի, պատմական անցեալին նոյն գնահատութիւնն է տալիս եւ ապագայի հանդէպ նոյն տենչերն է սնուցանում իր հոգում, բայց չի կարծում, որ հնարաւոր է այդ ցանկալի «ծրագիրն» իրացնել մեր ընտրած ճամբով։ Որովհետեւ ի՞նչ է «գործելակերպը», եթէ ոչ գործելու այն եղանակները, որ տանում են դէպի որեւէ նպատակի իրացում։ Դաշնակցական թեկնածութեան այս տիպարը համամիտ է մեզ եւ համատենչ։ Նա կարող է պաշտպանել մեր տեսակէտները եւ ապագային մեր կառուցումը իբր տեսա-կան խնդիրներ, բայց դժգոհ կը մնայ մեր գործի հանդէպ։ Նրա բանաձեւն է. «պէտք է ձգտել «ծրագրին», անշուշտ. այդ «ծրագիրն» ամենից աւելի լաւ է լուծում հայութեան կեանքի բոլոր հիմնական հարցերը. բայց այդ կարգի գործերով չէ, որ կարելի է հասնել մեր նպատակին»։ – Ուրիշ խօսքով նա ինձ հետ է, քանի դեռ գնահատում եմ ներկան եւ յօրինում ապագան իբր մտայղացում, բայց թողնում է ինձ մենակ, երբ ես ծրագրից ու խօսքից անցնում եմ գործի։ Նա երազող մէկը չէ, եւ ոչ անտարբեր է հանրութեան բախտին, բայց նա ինձ հետ չէ պայքարի ճամբին։ Նա կարող է շատ օգտակար գործեր կատարել, որ նպաստաւոր դառնան իմ աշխա-տանքին, բայց նա իմ գործը չէ, որ կատարում է։ Լաւագոյն դէպքում նա գործնապէս դէմ չէ ինձ. գուցէ դէմ լինէր, եթէ կարենար, համարելով իմ գործը չարիք։ Բայց նա զատ է ինձանից. իմ ընկերը չէ։ Նա կարող է լաւ հայ լինել եւ ընկերվար մտածում ու տենչեր ունենալ, բայց կարծել, որ ընկերվար ծրագրի հասնել կարելի է ոչ յեղափոխական գործելակերպով։ Նա կարող է կողմնակից լինել «Միացեալ եւ անկախ ընկերվար Հայաստանի» ստեղծումին, բայց մտածել, որ դա հնարաւոր է միմիայն «դիւանագիտական»

ճամբով. կամ որեւէ ուրիշ եղանակով, սակայն, բնաւ դաշնակցական գործելակերպով։ Կարելի՞ է այս տեսակ մէկին «դաշնակցական» համարել։ Կանոնագիրն ասում է. «ոչ»։ Նա, որ մտածում է ինձ նման, ծրագրում է ապագան ինձ պէս, ընդունում է անհատի եւ զանգուածների ազդեցութիւնը պատմական իրադարձութեանց ընթացքի վրայ, բայց կուսակից է հոլովութական գործունէութեան եւ հակառակ յեղաշրջական գործելակերպի, նա կարող էր գուցէ լաւագոյն անդամներից մէկը լինել Հայ Դաշնակցութեան, բայց բնաւ անդամ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան։ Ամենաշատը նա կարող է մեր գաղափարական համակիրների շարքում տեղ բռնել, բայց մեր բուն գործին մասնակից լինել չի կարող։ Մինչդեռ Կանոնագիրը «դաշնակցական» է ճանաչում այն մարդուն, որ ոչ միայն նոյն մտածումն ու ծրագիրն ունի, այլ եւ նոյն գործելակերպը։ Դեռ չեմ ասում, որ այդքանն իսկ բաւական չէ նկատում «դաշնակցական» կոչումը մէկին տալու համար. դեռ պէտք է ենթարկուել Կանոնագրին ու որոշումներին, կուսակցական տուրք վճարել եւ այլն։ Պէտք է այսպիսով «համամիտը» տարբերել «անդամից»։ Համամիտը գործակից եւ ընկեր չէ. նա պարզապէս համամիտ է։ Նա քեզ հետ չէ պայքարի ծանր օրերին եւ պատասխանատուութեան բաժին չունի քո գործում։ Նա մտածում ու ծրագրում է քեզ նման, բայց իր գործով զատ է քեզանից։

Վերջին թեկնածուն այն մէկն է, որ ընդունում է «գործելակերպը», բայց մերժում է «ծրագիրը»։ «Ընդունել» ասածն երկու միտք ունի. կարելի է մի գործելակերպ ընդունել տեւապէս, իբր մի խնդրի լուծում, եւ գործնապէս՝ իբր հարկադրանք։ Մշակում է մի «ծրագիր». ենթադրում է, որ այդ ծրագիրն իրագործելի է։ Հարց է դրում.– ի՞նչ ճամբով կարելի է իրացնել այս գործադրելի ծրագիրը։

Մէկը կարող է այս հարցը լուծել իբր տեսական խնդիր. ուշադրութեան առնել հանրային գործունէութեան արտաքին պայմանները, ճանաչել ու գնահատել գործօն ուժերի չափն ու կշիռը եւ գալ այն եզրակացութեան, որ մշակած ծրագիրը կարելի է իրացնել յեղափոխական գործելակերպով: Կարող է այսպէս լուծել խնդիրը եւ... տեղը նստել: Սա նոյնպէս գործելակերպ «ընդունել» կը նշանակէ. այսինքն համամիտ լինել, որ այո՛, այս ինչ նպատակին կարելի է հասնել այս ինչ ձեւի գործելու կերպով եւ մինչեւ իսկ միմիայն այդ ձեւի գործելու կերպով: Հասկանալի է, որ Կանոնագիրն այս տեսակ «ընդունողներին» «դաշնակցական» ճանաչել չի կարող: Նա պահանջում է ոչ միայն ընդունել մեր ծրագիրն ու գործելակերպը, այլ եւ «ամէն ջանք թափել իրականացնելու զանոնք»: Ուրեմն, Կանոնագիրը ոչ թէ որոնում է տեսական լուծումների ընդունակ անդամներ, այլ գործնական ուղիներով աշխատող ընկերներ: Այս տիպարի թեկնածուն նման է «համամիտ» դաշնակցական թեկնածուներին այն տարբերութեամբ, որ նրանք «ընդունում են» «ծրագիրը», իսկ սրանք «գործելակերպը»: Բայց նրանք այն առաւելութիւնն ունեն, որ աշխատում են նոյն «ծրագրի» օգտին թէեւ տարբեր գործելակերպով, մինչդեռ սրանք միայն վկայում են մեր որդեգրած գործելակերպի ճշտութիւնը, առանց մտահոգ լինելու ոչ «ծրագրով», ոչ նրա իրացման ճակատագրով: Սրանք «կարծիք» ունեն, առանց «գործ» ունենալու: Սրանք կարող են մեզ գնահատել, համարելով հանրային «ծրագրի» իրացման տանող շիտակ ուղիները գծողներ, առանց, սակայն, ներքուստ ապրելու մեր պայքարի տառապանքն ու վայելքը եւ առանց մասնակցելու մեր գործին ու պատասխանատուութեան:

Բայց կան ուրիշ տիպարներ, որ ընդունում են

«գործելակերպը» ոչ իբր հանրային գործունէութեան տեսական լուծում, այլ իբր գործնական պարտադրանք, այսինքն ոչ միայն գործելու մեր կերպը համարում են շիտակ ու նպատակայարմար, այլ եւ պարտադիր իրանց համար: Այս տիպարները երկու տեսակ են. մէկն այն է, որ մեր «ծրագիրը» թէեւ չի ընդունում լիովին, բայց տենչացող է այնպիսի կարգերի, որ մեր «ծրագրի» մի մասն են կազմում: Կ'ուզէր օրինակ, Միացեալ Հայաստան, բայց ոչ անկախ, համարելով անկախութիւնն անհնարին կամ անցանկալի. կամ կողմնակից է Միացեալ եւ Անկախ Հայաստանի, բայց դէմ է ընկերվար կարգերին. կամ գոհ կը լինէր լայն ռամկավար կարգերի՝ առանց անկախութեան ու միացման, եւ այլն: Միաժամանակ, «գործելակերպի» վերաբերմամբ նա մեր տեսակէտն ունի, այսինքն կարծում է, որ այդ ամենին կարելի է հասնել յեղափոխական ճանապարհով: Ուրեմն, նա յեղափոխական է իր գործով եւ հետամուտ է յեղաշրջական նպատակների, բայց դէմ է մեր ծրագրի ամբողջութեան: Կարո՞ղ է այսպիսի մէկը դաշնակցական համարուել: Կանոնագրի տառին նայելով պէտք է ասենք՝ – «ո՛չ»: Նաեւ ոգին ժխտական պատասխան է տալիս: Իսկ եթէ նա կազմակերպութեան անդամ է, տուրք է վճարում եւ ենթարկւում է կանոնագրին. այսքանը բա՞ւ է, որ նա ճանաչուի «դաշնակցական». – «Ո՛չ», ասում է Կանոնագիրը. նա պէտք է ենթարկուի նաեւ կուսակցութեան որոշումներին, եւ «ամէն կերպ աշխատէ իրականացնել զանոնք»: Իսկ այդ որոշումները կարող են վերաբերել «ծրագրի» ա՛յն կէտերին, որ ինքը չի ընդունում եւ, ուրեմն, նրանց իրացման համար «ամէն ջանք թափել» չի կարող: Ստեղծւում է մի կեղծ կացութիւն: Մենք ստանում ենք ոչ թէ կարգապահ ընկեր, այլ անհնազանդ մի դաշնակցական: Այսպիսի մէկը կարող է ուղեկից լինել մեզ եւ գործակցել մինչեւ մի որոշ տեղ եւ մինչեւ մի որոշ ժամա-

նակ։ Նա կարող է մեզ սրտանց համակիր լինել եւ օժանդակ, քանի դեռ պայքարում ենք մեր ծրագրի իր ընդունած կէտերի համար։ Բայց կեանքի մէջ յաճախ են պատահում առիթներ, երբ հետապնդում ենք նոյն ծրագրի ուրիշ կէտերը. այն ժամանակ նա դադարում է ներքուստ մեզ հետ լինելուց։ Նրա համար Դաշնակցութիւնը մի կազմակերպութիւն է, որին մասնակցելով կարող է ծառայել իր գաղափարներին։ Այսպիսով նա զատում է իրան կուսակցութիւնից եւ յարում է նրան իր գործի համար։ Դաշնակցութեան գործերի տեսակից է կախուած նրա գործակցութիւնը։ Նա ոչ թէ տան անդամ է համարում իրան, այլ հիւր մի տեսակ։ Նա ոչ թէ իր անձն ու կորովը տրամադրում է Դաշնակցութեան, այլ օգտագործում է Դաշնակցութիւնը իր հանրային նպատակներին հասնելու համար։ Նա շատ բանի մէջ համամիտ է մեզ, բայց ոչ մեր բոլոր որոշումները համարում է պարտադիր. եւ այնքան ժամանակ գործակից է մեզ, որքան ժամանակ համամիտ է մեզ։ Շատ կը լինէր ասել թէ նա մեր դաշնակիցն է, քանի որ նա մի անհատ է եւ ոչ կազմակերպութիւն, բայց կարելի է ասել, թէ նա մեր աջակիցն է. եւ այնքան վստահելի, որքան իր հաւանած գործն ենք կատարում եւ այնքան անտարբեր, չասենք հակառակ, որքան հետամուտ ենք մեր ծրագրի իր չհաւանած կէտերին։

Սրանց համակրանքն ու աջակցութիւնը ընտրանքով է, ոչ անվերապահ։ Սրանց չի կարելի վստահել կուսակցութիւնը. որովհետեւ նրանք զօդուած չեն «ծրագրի» նոյնութեամբ, այլ կապուած են այս կամ այն «գործով»։ Այդ «գործն» իր կատարման համար կարող է տարիներ պահանջել եւ սրանք մեզ հետ կը լինեն տարիներ շարունակ ու մեր կողքին կը կատարեն իրենց պարտականութիւնը կուսակցութեան հանդէպ, որ հնար ունենան նրա միջոցով ծառայելու իրենց

նախընտրած եւ գերադասած խնդիրների լուծման: Այդ «գործը», սակայն, կարող է մի հերթական խնդիր լինել, մի «հայ-թաթարական ընդհարում», մի «եկեղեցական կալուածների գրաւում», որ կարող է տեւել համեմատաբար կարճ ժամանակ: Այս կարգի տիպարներն այդ օրերին գունդագունդ մտնում են կազմակերպութեան մէջ. քանի որ համամիտ են կուսակցութեան ե՛ւ գործին ե՛ւ գործելակերպին: Կանոնագիրն իմաստութեամբ նախատեսած է այս ամենը եւ՝ նա զլանում է «դաշնակցականի» կոչումը այս կարգի մարդկանց, որոնք ոչ թէ անդամ են դաշնակցական մեծ ընտանիքի, այլ հիւրեր են նրա կոչունքին: Վերջանում է գինարբուքը, մարում են ջահերը, եւ նրանք քաշւում են իրենց տները, բոլոր թրմացքն ու մնացորդները թողնելով տան տէրերին մաքրելու... Սրանք հռչակ ու փառք են ստեղծում Դաշնակցութեան եւ իրանց համար, բայց Դաշնակցութեան պահակները չեն եւ լինել չեն կարող. որովհետեւ կուսակցութիւնը ոչ թէ նրանց տունն է, այլ նրանց գործ հայթայթողը: Նրանք «ծրագրով» չեն կապուած, այլ գործելակերպով կամ «մի քանի» գործերով: Նրանք լաւագոյնն են համակիրներից, որովհետեւ ոչ թէ խօսքով, այլ գործով են համակիր. բայց նրանք կուսակցական չեն բառի կանոնագրական առումով: Լիովին ընդունելով «գործելակերպը», նրանք մասամբ միայն ընդունում են «ծրագիրը». իսկ կանոնագիրն ասում է. դաշնակցական կարող է լինել նա, որ ընդունում է կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը ոչ թէ ընտրանօք, այլ լիովին:

Գործելակերպն ընդունողների միւս տիպարը շատ ուշադիր չէ «ծրագրին». մինչեւ իսկ բնաւ մտահոգ չէ այն մասին թէ կա՞յ «ծրագիր»: Նա ընդունում է գործելակերպը ոչ թէ նրա համար, որ նա տանում է դէպի մի որոշ ծրագրի

գործադրութիւն, այլ որովհետեւ գործելու այդ կերպը դիւր է իր սրտին: Նրա համար «ծրագիրը» անարժէք է կամ սակաւարժէք, գործն է նրան գրաւում եւ գործելու եղանակը: «Դաշնակցական» գործը նա համարում է եռանդի սպառման մի միջոց, իսկ գործելու կերպը հարմար իր խառնուածքին: Նա ոչ թէ յեղափոխական նպատակներ ունի, այլ յեղափոխական խառնուածք: Եթէ «յեղափոխական» գործեր կատարելու համար թատերական տոմսի հետ անհրաժեշտ է, որ մէկը ծրագիր ընդունի, կանոնագրի որոշումների ենթարկուի, եւ մինչեւ իսկ տուրք վճառէ – նա պատրաստ է սիրով. բայց այդ ամէնը անկարեւոր են նրա համար. կարեւորը «գործն» է եւ գործելու եղանակը – մի ահաբեկում, մի արշաւանք, ծպտուած փախուստներ ոստիկանական հետապնդումից, ազատ կեանք լեռների վրայ՝ արկածաւոր եւ վտանգալից – սրա՛նք են նրան գրաւում: Այս «գործերն» անելու համար, այ՛ս կեանքն ապրելու համար արժէ, որ մարդ «դաշնակցական» գրուի եւ «ծրագիր», Կանոնագիր ու որոշումներ ընդունի: Սա մի ուրոյն տիպար է. մի մարզական, որ վտանգի եւ արկածի ճաշակն ունի եւ հաճոյք է զգում կեանքի հետ խաղալով: Սովորաբար սրանք խիզախ ռազմիկներ են, համարձակ ահաբեկիչներ, հաւատարիմ ընկերներ եւ կարգապահ զինուորներ, պատրաստակամ՝ վտանգաւոր գործերի համար: Ակնածում են կուսակցական մարմիններից ու ղեկավարներից, բայց սիրում են իրենց ընկերներին. իրենց մտքի մէջ նրա՛նք են «իսկական դաշնակցականները». միւսներն՝ այ՛նպէս... Կարելի՞ է սրանց «դաշնակցական» համարել: Լեզուս չի դառնում, որ ասեմ թէ՝ - «ո՛չ» : Բայց կանոնագիրը ասում է համարձակ, «ո՛չ»: Եւ իրաւունք ունի, եթէ լաւ մտածենք: Սրանք «գործ» են որոնում եւ թալկանում են առանց «գործերի»: «Անգործութեան» շրջաններում նրանց թւում է, որ Դաշնակցութիւնը մեռաւ. քաշվում են մի կողմ, քրթմնջում

են շարունակ եւ խօսում են կուսակցական կեանքի չքացման մասին։ Կամ դառնում են արկածախնդիր, ստեղծում են «գործեր», այս անգամ ոչ կուսակցական։ Որովհետեւ նրանք կապուած էին «գործով» եւ ոչ «ծրագրով», այսինքն ոչ իրենց մտածումով ու հեռաւոր նպատակներով։ Դադրում է «գործը», դադրում են եւ կուսակցական կապերը. մնում է միայն ընկերների սէրն ու յիշատակը։ Պէտք է մի կուսակցութիւն լինի, «գործեր» ձեռնարկէ, որ նրանք հանդէս գան։ Պէտք է մէկը նպաստաւոր ծրագիրներ մշակէ՝ նրանց գործօն խառնուածքին կեր տալու համար։ Նրանք կուսակցական չեն բառի բուն առումով, բայց կուսակցութեան լաւագոյն աջակիցն են ու գործակիցը։ Այս կարգի տիպարները չեն որ կուսակցութիւն են ստեղծում ու պահում, բայց նրանց գործակցութեամբ է, որ կուսակցութիւնը դեր է խաղում եւ մեծանում։ Սրանք «դաշնակցական» չեն յարատեւութեան տեսակէտով, բայց «դաշնակցականն» իր գործի մէջ պէտք է սրանց նման լինի, սրանց պէս խիզախ, համարձակ, ընկերասէր, անձնուէր։

Թէ նրանք, որ «ծրագիրը» մասամբ են ընդունում, բայց լիովին յարում են գործալակերպին եւ թէ նրանք, որ «ծրագրին» կարեւորութիւն չեն տալիս, այլ միայն «գործելակերպն» են որդեգրում՝ – որոշ տեսակէտով նման են իրար՝ Դաշնակցութեան հանդէպ ունեցած վերաբերումով։ Մէկն ուզում է «դաշնակցական» դառնալ, կազմակերպութեան ուժին կռթնած՝ իր հանրային նպատակներին ծառայելու համար, միւսն ուզում է «դաշնակցական» համարուել իր յեղափոխական խառնուածքին ճարակ գտնելու համար։ Ոչ մէկը եւ ոչ միւսը «դաշնակցական» չեն դառնում կուսակցութեան «ծրագրի» համար, բայց երկուսն էլ կողմնակից են միայն «գործելակերպին» եւ որոշ «գործերի»։ Ոչ թէ գալիս

են ամէն ինչ զոհելու կուսակցութեան նպատակներին, այլ ամէն ինչ առնելու իրենց նապտակների համար – մէկը՝ հանրային, միւսը՝ զգացական։ Այն ուրիշ խնդիր է, որ թէ մէկի եւ թէ միւսի «գործերից» շահում է կուսակցութիւնը, ծաւալում է կազմակերպութիւնը, մեծանում է ազդեցութիւնը, բայց սրանք չեն եկած այդ արդիւնքին հասնելու համար։ Եթէ գտնուի մի ուրիշ զօրաւոր կազմակերպութիւն, որ նոյն կարգի «գործեր» ձեռնարկէ՝ նրանք կարող են թողնել Դաշնակցութիւնը եւ յարել նոր խմբակցութեան. որովհետեւ նրանց որոշ նպատակներ եւ որոշ գործեր են հետաքրքրում եւ որոշ գործելակերպ. եւ ոչ թէ կուսակցութեան «ծրագիրն» ամբողջովին կամ կուսակցութեան դերը մեր կեանքում։ Նրանք կարող են լինել եռանդուն եւ անձնուէր գործիչներ, կազմակերպութեան կարգապահ անդամներ, հոչակ վաստակել անձամբ եւ փառք բերել կուսակցութեան, բայց մինչեւ այն ժամանակ, քանի դեռ մեզ հետ են. քանի դեռ մենք իրենց հաւանած նպատակներին ենք հետամուտ եւ իրենց նախասիրած «գործերն» ենք անում։ Բայց երբ հետապնդում են նպատակներ, որ ծրագրային են, բայց իրանցը չեն, կամ կատարում են «գործեր», որ անհրաժեշտ են, բայց դիւր չեն իրենց խառնուածքին՝ վերաբերումը փոխւում է. որովհետեւ նրանց համար «ծրագիրն» իր ամբողջութեամբ եւ «գործերն» իրենց բոլոր տեսակներով պարտադիր չեն։ Ինչպէս տեսնում էք. չկայ «դաշնակցական» առանց ամբողջական «ծրագրի». կան եւ կարող են լինել Դաշնակցութեան աջակիցներ։

Իսկ նրանք, որ «ծրագիր» են ընդունում առանց «գործելակերպի», կամ «գործելակերպ» են ընդունում առանց պարտադրանքի–նրանք նոյնպէս որոշ տեսակէ-տով նման են իրար։ Նրանք տեսական համակրանք ունեն, առանց գործնական աջակցութեան։ Նրանց գոհացնում է

մեր «ծրագիրը» իբր որոշ տենչերի ձեւակերպութիւն եւ մեր «գործելակերպը» իբր որոշ նպատակների հասցնող, բայց իրա՛նք են որ չեն գոհացնում մեր Կանոնագրի պահանջները: Որովհետեւ կուսակցութիւնը տեսական մտածումի մարզավայր չէ, այլ հանրային գործերի աշխատանոց. «ծրագիրն» ու «գործելակերպը» մտային վայելքի առարկաներ չեն՝ իբր յօրինուածք ու խնդրի լուծում, այլ գործնական կեանքի պարտադրանք են՝ իբր նպատակ եւ վարմունքի կանոն: Բաւական չէ մտովին համամիտ լինել «ծրագրին» ու «գործելակերպին», որ մարդ համարուի «դաշնակցական». պէտք է նաեւ գործնապէս աշխատել այդ «ծրագրի» իրացման համար, եւ «դաշնակցական գործելակերպով»: Ինչպէս տեսնում էք, չկայ «դաշնակցական» միմիայն «ծրագրով» ու տեսական «գործելակերպով». կան եւ կարող են լինել Դաշնակցութեան ծրագրին ու գործելակերպին համակիր մարդիկ:

Այսպէս՝ քննելով դաշնակցական թեկնածուների այլազան տիպարներ, որ ընդունում են մեր Կանոնագրի առաջին պահանջը – «ծրագիրն ու գործելակերպը», մենք տեսնում ենք, որ միմիայն մի պահանջին գոհացում տալով որեւէ քաղաքացի «դաշնակցական» դառնալ չի կարող: «Գործը» պէտք է, որոշ «ծրագրի» հասնելու համար. «ծրագիր» պէտք է գործերին իմաստ տալու համար: «Գործեր» կատարել, առանց «ծրագիր» հետապնդելու եւ «ծրագիր» դաւանել, առանց «գործերով» իրացնելու՝ երկուսն եւս «դաշնակցական» վերաբերում չեն կեանքին: Յեղափոխական նպատակներ ունենալ առանց յեղափոխական գործելակերպի. կամ դաշնակցական գործելակերպ որդեգրել առանց դաշնակցական ծրագրի՝ նոյնպէս «դաշնակցական» վերաբերում չէ կեանքին: Նա որ կամենում դաշնակցական լինել՝ անխուսափօրէն պէտք

է դաշնակցական ծրագիր եւ գործելակերպ որդեգրէ՝ անվերապահ եւ լիովին։ Ու պէտք է նաեւ, որ դաշնակցական մտայնութիւն ունենայ, քանի որ՝ թէեւ տարամիտ մարդիկ կարող են միատեսակ նպատակներ ու գործ ունենալ, բայց ոչ միշտ նոյն նպատակներն ու միշտ նոյն գործը։ Նրանք կարող են մինչեւ որոշ տեղ եւ մինչեւ որոշ ժամանակ իրար հետ գնալ, բայց այնուհետեւ անխուսափօրէն պիտի շեղեն իրենց ուղին, քանի որ նրանց առաջնորդում է ոչ նոյն մտածումը։ Մի քանի գործեր միայն բերում են նրանց իրար մօտ։ Եթէ կուսակցութեան մէջ զօրաւոր տարր չկազմեն այն անդամները, որ կապուած են իրար միեւնոյն «ծրագրով» եւ որդեգրած են միեւնոյն «գործելակերպը» – որ ասել է թէ նոյն մտայնութիւնն ունին – Դաշնակցութիւնը կը դառնայ տարբեր դաւանանք ունեցող մարդկանց մի խմբակցութիւն, որ չունենալով գործունէութեան միեւնոյն տենչերը՝ շուտով կը շեղի իր ճամբան եւ դիւրաւ կ'երթայ դէպի քայքայում։ Այստեղ օգնել չի կարող մինչեւ իսկ այն պարագան եթէ բոլոր տարամիտ անդամները ենթարկուեն կուսակցութեան միեւնոյն կանոնագրին եւ որոշումներին։ Որովհետեւ Դաշնակցութեան կանոնագրին ու որոշումներին ենթարկուել՝ դեռ չի նշանակում «դաշնակցական» լինել։ Կանոնագիր ու որոշում արդիւնք են մի որոշ մտայնութեան։ Կանոնագիրը կազմում է որոշ «ծրագիր» հետապնդելու համար եւ որոշումները կայացւում են նոյն նպատակով։ Բաւական չէ դաշնակցական Կանոնագիր մշակել եւ դաշնակցական որոշումներ կայացնել, իսկ սրա համար պէտք է դաշնակցական մտայնութիւն ունենալ եւ Դաշնակ-ցութեան «ծրագիրն» ընդունել։ Որ կողմ եւ դառնանք, մենք տեսնում ենք, որ «դաշնակցական» կոչուելու համար նախ անհրաժեշտ է ընդունել Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը՝ անվերապահ եւ լիովին։

Ընդունենք հիմա, որ մեր թեկնածուն լիովին համամիտ է

մեզ ու անվերապահ ընդունում է Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը: Տեսանք, որ այսքանը բաւական չէ «դաշնակցական» կոչուելու համար: Պէտք է գոհացում տալ եւ միւս պահանջին, որ ասում է. «ենթարկուիլ Կանոնագրին եւ որոշումներուն»: Ուրեմն, ոչ թէ «ընդունել» տեսաբար, այլ ենթարկուիլ գործնապէս. որովհետեւ Դաշնակցութիւնը գործի կազմակերպութիւն է. մի գործ, որ կատարւում է միասնական աշխատանքով, այսինքն զատ-զատ ճիգերի համադրութեամբ եւ մի որոշ ուղղութեամբ՝ մի որոշ նպատակի հասնելու համար: Արդ՝ ճիգերի այդ համադրութիւնը ենթադրում է կախումներ մարմինների եւ սոսկական անդամների միջեւ – թէ՛ իրար հանդէպ եւ թէ՛ իրար մէջ – ընկեր ընկերի եւ մարմին մարմնի հետ եւ ընկեր ու մարմին իրար հետ: Այդ կախումները բարոյական յանձնառութիւնն են, որ իրաւական ոյժ են ստանում գործի ընթացքին: Միւս կողմից «գործերը» կատարւում են իրաւասու մարմինների վճռով եւ ընկերների ձեռքով: Մարմինների որոշումները պարտադիր են ենթակայ ընկերների համար: Չի կարող գոյութիւն պահել մի կազմակերպութիւն, ուր ամէն ոք ինքն է որոշում իր անելիքն ու իր կախումը: Սա կը լինէր անիշխանութիւն եւ անկարգութիւն. ամբոխ եւ ոչ թէ կազմակերպութիւն. եւ այդ իսկ պատճառով ենթակայ ամէն տեսակ քայքայման եւ անատակ որեւէ նպատակ հետապնդելու: Ընդունել ծրագիր ու գործելակերպ, բայց գործել եւ որոշել անջատօրէն իբր «ազատ» քաղաքացի, իբր «անկախ» միաւոր – սա անարժէք է կուսակցական տեսակէտից: Եւ «դաշնակցական» համարուել չի կարող մէկը, որ այս ըմբռնումն ունի հանրային գործերի մասին: Սրանք անձնապաստան մեծամիտներ են, որ յաւակնութիւն ունին կուսակցական «ամբոխն» իրենց յետեւից քաշելու, կամ պատահական ուղեկիցներ են, որ խառնւում են գործակատար «ամբոխին»: Լաւագոյն դէպքում սրանք

առժամեայ գործակիցներ են, ինչպէս անցորդը, որ օգնում է կառքը շրջած կառապանին։ Բայց կառապանն իր ճամբան ունի եւ իր նպատակը, անցորդն՝ ի՛ր ճամբան։ Այս տեսակ անկազմակերպ ուժերը, որքան եւ համակիր ու համամիտ լինեն մեզ, անարժէք են կուսակցական տեսակէտով, եթէ մինչեւ իսկ հազարների հասնեն։ Դրանք չեն կարող կուսակցութեան յենարան լինել, քանի որ կապուած չեն իրար կանոնագրապէս եւ ենթակայ չեն միեւնոյն որոշումներին։ Ինքնաբաւ անհատներ են, ազատ ու անկախ, եւ այդ իսկ պատճառով իրարամերժ։ Նրանք գերադասում են իրենց կարծիքը ընկերների որոշումներից եւ իրենց կամքը՝ որոշումների պարտադրանքից։ Հնազանդիլը նրանց թւում է «ստրկութիւն» եւ կարգապահութիւնը՝ «տափակութիւն»։ Ճկում են գլուխը գերազանց անհատական ուժի առջեւ, ծառանում են հաւասարի դէմ ստեղծելով կագ ու կռիւ, եւ բռնանում են թոյլերի վրայ եւ իրենց քմայքը օրէնք հռչակում։ Սրանք ըմբոստ անդամներն են կազմակերպութեան, եթէ մտած են արդէն շարքերը եւ անխուսափելի տարերքն են մասնակի մարմինների քայքայման եւ ընդհանուր կուսակցութեան պառակտման։ Եւ կանոնագիրն իրաւամբ պահանջում է – դեռ եւս Դաշնակցութեան շէմքը չկոխած – որ թեկնածուն յանձնառու լինի ենթարկուելու կուսակցութեան «Կանոնագրին եւ որոշումներուն». այսինքն պատրաստ լինի հրաժարուելու իր «կարծիքից» ու «կամքից» ընկերների մշակած կարծիքն ու կամքը որդեգրելու համար. մէկը տարածելու եւ միւսը՝ գործադրելու։ Այլապէս նա հրաժարւում է «դաշնակցական» կոչումը տալ այդպիսի մէկին, թէկուզ եւ նա ընդունի մեր ծրագիրն ու գործելակերպը լիովին եւ նոյն մտայնութիւնն ունենայ ինչ որ մենք։

Սրանով, սակայն, չի վերջանում Կանոնագրի պահանջը

մեր թեկնածուներից: Բաւական չէ նոյն ծրագիրն ու գործելակերպն ունենալ եւ նոյն Կանոնագրին ու որոշումներին ենթարկուել: Կանոնագիրը պահանջում է նաեւ «ամէն ջանք թափել իրականացնելու զանոնք»: Սա մի հիմնական պահանջ է: Կանոնագիրը գործօն անդամին է շնորհում «դաշնակցական» կոչումը եւ ոչ կրաւորական ենթակային: Նա հնազանդութիւն է պահանջում Կանոնագրին եւ որոշումներին ոչ թէ անդամների կորովը մեռցնելու համար, այլ նրանց աշխատանքը ընդհանուրի որոշած հունով վարելու համար: Որովհետեւ Դաշնակցութիւնը ոչ թէ կրաւոր անձերի խմբակցութիւն է՝ ենթակայ զօրաւոր անհատների կամեցողութեան, այլ գործօն անդամների կազմակերպութիւն է՝ Կանոնագիր եւ որոշումներ «ընդունող»: Դաշնակցականը ոչ թէ հլու հնազանդ է Կանոնագրի եւ որոշումների, այլ նա «ընդունում» է Կանոնագիր ու որոշում. այսինքն՝ հնազանդում է գիտակցաբար եւ դարձնում է նրանց իր ներքին խթանը, որով իր «հնազանդութիւնը» դառնում է «համամտութիւն» եւ իր գործը «անձնական», «սեփական» կամքի գործադրութիւն:

Աւելորդ է խօսել այն տիպարների մասին, որ Կանոնագիր ու որոշումներ «ընդունում են» միայն տեսապէս, առանց գործնական հարկադրանքի. որ այդ ամէնը լաւ են համարում եւ նպատակայարմար իբր գործնական խնդիրների տեսական լուծումներ, բայց ոչ պարտադիր իրենց համար: Սրանք չեն կարող «դաշնակցական» նկատուիլ որովհետեւ ընդունել ծրագիր, կանոնագիր ու որոշումներ եւ ջանք չթափել նրանց իրացման համար, դա մի մտամարզանք կը լինէր, ոչինչ աւելի: Այս կարգի անդամներով կուսակցութիւնը կը դառնար բարեացակամ երազողների մի խմբակցութիւն եւ ոչ թէ քաղաքական մի ազդակ: Դա կը լինէր դաշնակցական անպտուղ մի մտայնութիւն եւ ապարդիւն կազմակերպութիւն:

Որովհետեւ ծրագիր, կանոնագիր, որոշումներ – այս ամէ՛նը գործով են կենդանի եւ այ՛նքան արժէք ունին, որքան գործի վարիչ ուժեր են։ Թուղթի վրայ նրանք սակաւարժէք են, աւելի շուտ՝ անարժէք։ Նրանք կարող են բնորոշել մի որոշ ժամանակի մտայնութիւնը, ցուցադրել այդ շրջանի գաղափարներն ու տենչերը, բայց առանց գործ դառնալու՝ նրանք երազանքից տարբեր չեն։ Որովհետեւ գործերն են կազմում պատմութեան բովանդակութիւնը եւ գործերով են յեղաշրջումներ կատարւում, թէեւ ամէն գործի նախորդում է մի ծրագիր ու մի որոշում եւ ամէն համադրական ճիգ կատարւում է մի գրաւոր կամ անգիր կանոնագրի համաձայն։ Մինչեւ իսկ գաղափարները յեղաշրջելու համար պէտք է որոշ գործ կատարուի, ուր մնաց գաղափարներն իրացնելու համար։ Կուսակցութիւնը ծրագրում ու որոշում է կենսական փաստեր ստեղծելու համար։ Անշուշտ, ծրագիր ու որոշում նոյնպէս «փաստեր» են, բայց մտաւորական պատմութեան փաստեր եւ ոչ թէ քաղաքական եւ ընկերային պատմութեան։ Կուսակցութիւնը, սակայն, քաղաքական եւ ընկերային գաղափարներ յղացող ու յեղաշրջող կազմակերպութիւն չէ միայն, այլ, մանաւանդ, քաղաքական եւ ընկերային կացութիւններ յեղաշրջող կազմակերպութիւն է. իսկ այդ պատմական աշխատանքը միմիայն գործով, քաղաքական եւ ընկերային ակտերով հնարաւոր է կատարել։ Այսպիսով բաւական չէ ընդունել ծրագիր, կանոնագիր ու որոշումներ «դաշնակցական» դառնալու համար, պէտք է, մանաւանդ «ամէն ջանք թափել իրականացնելու զանոնք»։ Նա որ «ընդունում է» առանց գործադրելու՝ դաշնակցական լինել չի կարող. իսկ եթէ սպրդում է կուսակցութեան մէջ՝ թերի դաշնակցական է։ Ոչ միայն «ընդունել» այլ եւ «ամէն ջանք թափել» իրացման համար – այս է Կանոնագրի պահանջը։

***

Ունենալ նոյն մտայնութիւնն ու ծրագիրը, ենթարկուիլ նոյն կանոնագրին ու որոշումներին եւ ամէն կերպ աշխատել նրանց իրացման համար արդէն բաւական է, որ մարդ համարուի «դաշնակցական»: Բայց Կանոնագիրը երկրորդ յօդուածով դնում է լրացուցիչ երկու պահանջներ. նրանք եւս պէտք է գոհացուին լրիւ դաշնակցական կոչուելու համար: Առաջինն ասում է, որ «իւրաքանչիւր դաշնակցական» (նկատէ՛ք, որ Կանոնագիրը երեք հիմնական պահանջներին գոհացում տուողին արդէն անուանում է «դաշնակցական») պարտաւոր է անդամակցիլ որեւէ դաշնակցական խմբի: Յանձն առնելով «ենթարկուել» Կանոնագրին եւ որոշումներին՝ դրանով իսկ թեկնածուն պարտադրաբար պէտք է կատարէ եւ այ՛ս պահանջը, քանի որ սա Կանոնագրի յօդուած է եւ հետեւաբար՝ կուսակցական որոշում: Բայց այս պահանջը պէտք է գոհացուի ո՛չ ձեւական պատճառով միայն: Այս պահանջին անհրաժեշտ է գոհացում տալ որովհետեւ Դաշնակցութիւնը համամիտ մարդկանց մի պատահական խմբակցութիւն չէ, այլ մի կազմակերպութիւն է, այսինքն մի մնայուն մարմին է, որ ամէն օր եւ ամէն ժամ իր գործն ունի եւ հետապնդում է իր ծրագիրը: Նա չի գործում պոռթկումներով եւ ընդհատ, այլ հետեւողէն ու շարունակ: Իր անդամները չեն հաւաքւում երբեմն, որոշ գործի համար, իրար հետ խորհրդակցում, որոշում կայացնում, գործի ձեռնարկում, յաջողում կամ ձախողում եւ ապա ցրւում մի ուրիշ անգամ, ուրիշ տեղ, ուրիշ առիթով նորից հաւաքուելու եւ ուրիշ գործ կատարելու համար, այլ նրանք կապուած են իրար որոշ կանոնագրով եւ հետապնդում են որոշ ծրագիր՝ շարունակ եւ հետեւողէն: Դաշնակցականը մեկուսի ասպետ չէ պայքարի դաշտում, այլ ասպետական մի կարգի անդամ: Կանոնագիրը չի ճանաչում մեկուսի անհատներ, իրարից անկախ աշխատաւորներ որ մի օր միացած են ու գործակից, միւս օրը բաժան եւ անձնընթաց:

Նրանց աշխատանքը կազմակերպուած է, ճիգերը համադրուած են, պարտականութիւնները ճշտուած են, իրաւունքները որոշուած են եւ ոչ թէ մի օրուան ու մի գործի համար, այլ մի Ծրագրի եւ ամէն օրուան համար։ Դաշնակցականն անդամ է մի «կուսակցութեան», այսինքն զինուոր է մի քաղաքական բանակի։ Այս պատճառով Կանոնագիրը պահանջում է, որ ամէն մի դաշնակցական որեւէ խմբի անդամ լինի, անկախ իր դիրքից կուսակցութեան մէջ։ Նա պահանջում է, որ ամէն անդամ կազմակերպօրէն կապուած լինի իր ընկերների հետ եւ ոչ թէ մնայ մեկուսի որքան եւ շքեղ լինի այդ մեկուսացումը։ Կուսակցութեան անդամները «ընկեր» են իրար ոչ միայն այդ պատճառով որ նոյն Ծրագիրն ու Կանոնագիրը ունին, այլ որ նոյն կազմակերպութեան անդամ են՝ որեւէ խմբի միջոցով։ Նոյն ծրագիրն ունենալ – նշանակում է համամիտ լինել եւ համախոհ. նոյն կանոնագիրն ու որոշումներին ենթարկուիլ – նշանակում է նոյն իրաւունքն ու պարտականութիւնն ունենալ. բայց նոյն խմբին անդամակցել ու դրանով միեւնոյն գործին սպասարկել – նշանակում է «ընկեր» լինել եւ նոյն կազմակերպութեան իսկական անդամ։ Կազմակերպութեան մէջ խմբից դուրս չկան ուրիշ «ընկեր» անող կազմութիւններ. մնացածները «մարմիններ» են. գործեր վարելու համար եւ «ժողովներ»՝ որոշումներ հանելու համար։ Խմբի անդամ լինելով է, որ մէկը դառնում է Դաշնակցութեան անդամ եւ «դաշնակցական»։ Մարմնի անդամ լինելը առժամեայ հանգամանք է. այսօր դո՛ւն ես վարիչը գործերի, վաղը կարող եմ ե՛ս լինել։ Սա ոչ թէ կոչման, այլ կարողութեան խնդիր է։ «Դաշնակցական» կոչուելու համար հարկ չկայ որ մէկը դաշնակցական մարմնի անդամ լինի, մինչդեռ անկարելի է իսկական դաշնակցական նկատել մէկին, որ խմբի անդամ չէ։ Ինչպէս հանրային առաքինութիւնները նախ ծլում ու զօրանում են ընտանիքի մէջ, յետագային փարթամօրէն

աճելու համար հանրային կեանքի լայն դաշտում, այնպէս էլ կուսակցական առաքինութիւնները ծլում ու զօրանում են խմբերի օրրանում, յետագային աճելու համար գործի լայն ասպարէզում։ Կուսակցութեան հիմունքը խմբերն են կազմում եւ նրա զօրութեան գրաւականը այն բարոյական շաղախն է, որով խմբի անդամները սերտօրէն կապւում են իրար։ Խմբերի շնորհիւ է, որ կուսակցութիւնը մնացած է եւ մնում է անխորտակելի, հակառակ ահաւոր փորձութեանց։ Կայծակը կարող է զարկել հաստաբուն կաղնուն եւ խորտակել նրա կատարը կամ այս ու այն բազուկը, բայց նուազ կարող է ազդել նրա արմատներին, որ թաղուած են հողի տակ։ Նրանք են, որ կենսատու հիւթը դարձնում են անսպառ եւ համեստ ու յարատեւ աշխատանքով դարմանում են փոթորկի աւերը։ Ահա թէ ինչու Կանոնագիրը իմաստնօրէն պահանջ է դնում, որ «դաշնակցականը» որեւէ խմբի անդամ լինի եւ դրանով մաս կազմէ հանուր կազմակերպութեան։ Կանոնագրի տառն ու ոգին իսկական «դաշնակցական» չեն համարում այն մարդուն, որ դաշնակցական դաւանանք ու գործելակերպ որդեգրելով՝ անդամ չի դառնում որեւէ խմբի եւ մնում է մեկուսի։ Խմբից դուրս անդամը կարող է անհատապէս մեծարժէք լինել ու երբեմն մեծ ծառայութիւն մատուցանել կուսակցութեան, բայց որեւէ խմբի չանդամակցելով՝ նա անհաղորդ է մնում սոսկական ընկերների առօրէական չար ու բարուն, որ կուսակցութեան ամէնօրեայ կեանքն է եւ նրա շնչառութեան տուր եւ առը, եւ դրանով մի տեսակ ուծացման է գնում՝ հանդիսաւոր կամ վճռական օրերին միայն հրապարակ իջնելով։ Խումբը կենդանի բջիջն է կենդանի կազմակերպութեան. նրան անդամակցիլ՝ նշանակում է կուսակցութեան կենդանութեան մասնակցիլ, նրա կայունութեանը զարկ տալ, նրա հիւսուածքները թարմ եւ առողջ պահել եւ դրանով ընդունակ՝ իր հանրային դերը

խաղալու: Խմբերի մէջ է, որ անդամները «ընկեր» են դառնում եւ «ընկերների» միջավայրն է, որ հերոս ու նահատակ է սնուցանում:

***

Կանոնագիրը դնում է վերջին պահանջը – «կուսակցական տուրք վճարել Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն»: Ինչպէս որեւէ խմբի անդամակցելը, այնպէս եւ այս պահանջը տուրքի վճարման, մի ստորադաս պահանջ է առաջին երեքի համեմատութեամբ եւ բխում է երկրորդ հիմնական պահանջից, որ ասում է թէ պէտք է ենթարկուիլ Կանոնագրին եւ որոշումներին, ինչպէս եւ երրորդ պահանջից՝ «ամէն ջանք թափելու» մասին:

Կանոնագիրը որեւէ շրջանի գերագոյն ժողով ճանաչում է վայրի Շրջանային Ժողովը: Նրա որոշումները պարտադիր են շրջանի բոլոր ընկերների համար: «Դաշնակցականը» պարտաւոր է ենթարկուիլ իրաւասու ժողովների որոշումներին: Այդ որոշումները վերաբերում են նաեւ սակին, որի համեմատ պէտք է կուսակցական տուրք վճարել: Հետեւապէս սակի մասին եղած որոշումները նոյնպէս պարտադիր են «դաշնակցական» մարդու համար: Եւ, ուրեմն, կուսակցական տուրք հատուցանել՝ նշանակում է դաշնակցական պարտականութիւն կատարել: Բայց տուրքի պահանջը այս ձեւական կողմից չէ, որ արժանի է ուշադրութեան: Կանոնագիրը «ամէն ջանք թափել» պարտադրելով, կարող էր եւ տուրքի հատուցումը «ամէն ջանք»ի մէջ հասկանալ, բայց նա այդ մէկ «ջանքը» զատած է եւ կանոնագրական յատուկ կէտի նիւթ է դարձրած, հետեւապէս հարկ է համարած յատուկ յիշատակելու:

Կանոնագիրն իրաւունք ունի այս մասնաւոր պահանջը առանձնապէս շեշտելու, որովհետեւ տուրքի հատուցումը նիւթականից աւելի բարոյական մեծ կշիռ ունի: Ոչ մէկ հանրային գործ կարելի է կազմակերպել ու վարել առանց նիւթական միջոցների, իսկ մի լայն ու տեւական ազատարար շարժում՝ առաւել եւս: Այսպէս է նաեւ կուսակցութիւնն ու իր գործը: Դաշնակցութեան նպատակները համազգային են եւ համամարդկային: Ոչ ամենքը գիտակից են մեր կուսակցութեան այս բնոյթին ու դերին: Դաշնակցականը, սակայն, պարտաւոր է գիտենալ իր կուսակցութեան արժէքն ու դերը մեր եւ մարդկային կեանքում: Մենք կարող ենք ակնկալել, որ «ազգը» երբ եւ իցէ կը հասնի այն գիտակցութեան, թէ Դաշնակցութիւնը պատմական ազդակ է հայոց կեանքի մէջ եւ իր գիտակցութեան չափով՝ նիւթապէս կը նպաստէ նրա գոյութեան ու գործին. բայց մենք ոչ մէկ պահանջ կարող ենք ուղղել «ազգին», որքան եւ նա տիտղոսաւոր եւ դրամատէր տարրեր ունենայ: Դաշնակցութիւնը, սակայն, որ գիտակից է իր կուսակցութեան արժէքին ու դերին մեր կեանքի մէջ, պարտաւոր է այդ գիտակցութեան համեմատ նիւթապէս նեցուկ դառնալ իր կուսակցութեան: Այդ «գիտակցութիւնը», սակայն, անհատական չէ, այլ խմբական, ժողովական: Ոչ մէկ սահման կայ նիւթական զոհողութեան առջեւ դէպի վեր, բայց դէպի վար սահմանը գծում է Շրջանային Ժողովը: Նա որոշում է «նուազագոյնը», որ պարտադիր է «դաշնակցական» մարդու համար եւ թողնում է «առաւելագոյնը» ամէն մի «դաշնակցականի» գիտակցութեան չափին: Այսպիսով նիւթական զոհաբերութեան քանակը մի տեսակ չափանիշ է դառնում կուսակցական գիտակցութեան. ոչ միակ չափանիշը, բայց նիշերից մէկը եւ ամենից տարրականը: Այսպիսով Շրջանային եւ Ընդհանուր Ժողովների սահմանած սակերը յայտարար են ընկերների եւ շրջանների «դաշնակցական»

գիտակցութեան աստիճանին, իսկ «ազգի» բերած կողմնակի օժանդակութիւնը յայտարար է նոյն «ազգի» գիտակցութեան ու գնահատանքին՝ Դաշնակցութեան դերի եւ նրա կատարած գործի արժէքի մասին. ոչ թէ բացարձակ առումով՝ իբր պատմական դեր ու գործ, այլ «ազգի» գիտակցութեան չափով։

Կուսակցութեան տուրքը նուազագոյն պարտականութիւնն է, որ մի «դաշնակցական» պէտք է կատարէ իր կուսակցութեան հանդէպ։ «Ամէն ջանք թափելու» յանձնառութեամբ կուսակցութեան անդամակցողը ամենից առաջ «ջանքերի» այս նուազագոյնը պարտաւոր է կատարել։ «Ամէն ջանք թափելու» գաղափարի մէջ շա՜տ աւելի ծանրակշիռ պարտականութիւններ են մտնում, քան կուսակցական տուրքի հատուցումը. անտեսումն ընտանեկան եւ անձնական բարօրութեան, արհամարհանք դիրքի եւ ազդեցութեան, ժխտում ամէն բարեկեցութեան եւ ապահով կենցաղի, վերջապէս գերագոյնը – մահ՝ բոլորը մտնում են «ամէն ջանքի» մէջ։ Սրանց համեմատութեամբ կուսակցական տուրքը իրօք որ մի տարրական պարտականութիւն է։ Սա առաջին դասն է նուիրումի, առաջին ցոյցը համոզումի անկեղծութեան։ Նա որ տուրքը տալիս է սրտանց՝ կարող է յետագային իր աշխատանքն ու ժամանակը զոհաբերել եւ այդ ճամբին առաջանալով՝ հասնել մինչեւ կեանքի զոհաբերութեան։ Բայց նա, որ թերանում է այս տարրական պարտականութեան մէջ, յուսալի չէ, որ չթերանայ, երբ կուսակցութիւնը նրանից աւելին պահանջէ քան տուրքի հատուցումն է։ Ուստի կանոնագիրը «ամէն ջանքերից» տարրականը – տուրքի հատուցումը – զատում է ու դնում է իբր փորձաքար «դաշնակցական» մարդու որակը ճանաչելու։ Նա, որ կատարում է Կանոնագրի միւս պահանջները ու թերանում է այս մէկի մէջ, նա չի կարող

իրաւամբ «դաշնակցական» նկատուել եւ դժուար է ընդունել, որ նա միւս պահանջների հանդէպ նուազ թերացող լինի, քան այս մէկի դէմ։

Աւելի եւս «դաշնակցական» համարուել չի կարող այն մարդը, որ ինքն իր կամքով դրամական տուրք է սահմանում եւ պարբերաբար ու անթերի հատուցանում է կազմակերպութեան, առանց նրա միւս պահանջները գոհացնելու։ Որքան եւ մեծ լինի նրա տուածն իբր գումար, նա համակրանքի նուէր է միայն, բայց ոչ կուսակցական տուրք։ Նա մի «համակիր է», ոչ դաշնակցական։ «Դաշնակցական» ասածը ուրոյն տիպար է, որ ունի մտածման յատուկ եղանակ, ապագայի մասին յատուկ ծրագիր, գործի եւ վարմունքի յատուկ կերպեր, անդամ է որոշ կազմակերպութեան՝ խմբի միջոցով, ենթակայ է որոշ Կանոնագրի եւ հետամուտ ժողովական որոշումների իրագործման՝ իր անձնական մասնակցութեամբ եւ բազմատեսակ զոհողութեանց գնով, ուր դրամական տուրքը յետին տեղն է գրաւում։ Չկայ «դաշնակցական» առանց տուրքի, բայց եւ չկայ միմիայն տուրքով։

Ինչպէս տեսնում էք, ընդունել Ծրագիր առանց մտայնութեան՝ նշանակում է տարամիտ լինել. ընդունել մտայնութիւնն առանց Ծրագրի – նշանակում է հակամիտ լինել. ընդունել Ծրագիր ու մտայնութիւն առանց գործելակերպի – նշանակում է միմիայն հակամիտ լինել. ընդունել գործելակերպն առանց Ծրագրի նշանակում է արկածասեր լինել. ընդունել Ծրագիր ու գործելակերպ, առանց Կանոնագիր ու որոշումներ պարտադիր համարելու՝ նշանակում է ուղեկից լինել եւ ոչ տեւաբար լծակից։ Ծրագիր, գործելակերպ ու Կանոնագիր ընդունել առանց խմբի

անդամ լինելու նշանակում է մեկուսանալ եւ ուծացման գնալ. կուսակցական տուրք չվճարել եւ կազմակերպութեան անդամ նկատուիլ – նշանակում է տարրական պարտականութիւն չկատարել, եւ ասպետական կարգի անդամ կարծել իրեն: Եւ միայն նա, որ Կանոնագրի բոլոր պահանջներին հանձնառու է գոհացում տալ անվերապահ ու լիովին՝ նա միայն իսկապէս «դաշնակցական» է Կանոնագրի ոգուն ու տառին համաձայն:

Այսպիսով Կանոնագիրն իր չոր ու ցամաք երկու յօդուածով ուրուագծում է «դաշնակցական» մարդու գաղափարական տիպարը: Կարող եմ ասել, թէ նա գծում է իսկական կուսակցական մարդու տիպարը՝ անկախ կուսակցութեան բնոյթից: Տասնամեակների հարուստ փորձ է խտացած այդ երկու յօդուածների մէջ: Նրանք նախորոշած են բոլոր գալիք փորձութիւնները եւ հաւասարկշռած են բոլոր հնարաւոր յաւակնութիւնները: Մտաւորականին, որ ապաստանած է իր տեսական իմացութեան ուժին՝ Կանոնագիրը պարտադրում է հեռու մնալ մեկուսացումից, մտնել որեւէ խմբի մէջ իբր համեստ ու պարզ անդամ, Կանոնագիր, որոշում ու տուրք պարտադիր համարել նաեւ ի՛ր համար եւ «ընկերների» մշտական շփումով՝ կենդանի պահել դաշնակցական ոգին ու բարքն իր մէջ.– այլապես զլանում է նրան «դաշնակցական» կոչումը: Գործնական ուժերին պարտադրում է չապաստանել միմիայն գործին եւ դրանով արտօնուած համարել իրանց՝ միւս պահանջներն անտեսելու: «Գործն» այնքան արժէք ունի, որքան ծառայում է մի նպատակի: «Գործն» իր իմաստը Ծրագրից է ստանում: «Գործը» մի մարզանք է, ոչինչ աւելի, եթէ չի հետապնդում մի որոշ հանրային գաղափար: Գուցէ ինքն է բուն իսկ վարիչն այդ գործի. գուցէ հերոսը. բայց դա նրան մեկուսացման իրաւունք չի տալիս: Կազմակերպութ-

իւնն այն պատուանդանն է, ուր նա արձանանում է իբր հերոս ու վարիչ։ Կուսակցութեան գոյութիւնն անհրաժեշտ պայման է իր հերոսութեան, նրա Կանոնագիրը՝ իր գործավարութեան. եւ կուսակցութիւնն է, որ ստեղծում է վարիչ ու հերոս եւ ոչ հերոսն ու վարիչը՝ կուսակցութիւն։

Ճիշտ է, իր փառքը ճառագայթում է հեռուն ու նաեւ կուսակցութեան վրայ, բայց կուսակցութեան բորբոք հնոցի մէջ է շիկանում փառքի մետաղը, ճառագայթելու համար հերոսի վրայ եւ հեռուները։ Կանոնագիրը սահնձահարում է եւ այն մարդկանց, որ կարծում են թէ այնքան աւելի երախտիք ունին կազմակերպութեան վրայ, որքան աւելի նիւթական մեծ զոհողութիւն են արած։ Նրանց յիշեցնում է, որ համեստ խմբերի պարզ անդամները, որ տեւական տուրքերով եւ աշխատանքով կանգուն են պահում կազմակերպութիւնը՝ նուազ երախտաւոր չեն քան ինքը, որ դրամ է վճարում, առանց միւս յանձնառութեանց։ Կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրն ընդունող եւ «ամէն կերպ» գործադրող պարզ ընկերը շատ աւելի մեծ արժէք ունի քան նա, որ կուսակցութեան ներսն է, բայց իր դերը տուրքով համարում է վերջացած. կամ դուրսն է եւ աջակցում է իբրեւ համակիր։ Կանոնագիրը ներշնչում է նրանց, որ կուսակցութեան դերն ու բախտը ոչ թէ նրա նիւթական միջոցներից է կախուած, այլ նրա կազմակերպական շաղախից եւ անդամների պատրաստակամ եւ համադիր ճիգերից. որովհետեւ՝ ուր կայ կուռ ու գործօն կազմակերպութիւն՝ այնտեղ միշտ հնարաւոր է նիւթական միջոցներ գտնել, բայց ուր կան նիւթական միջոցներ՝ դեռ չի նշանակում, որ կարելի է գաղափարական կազմակերպութիւն ու մթնոլորտ ստեղծել։ Կարելի է մի առժամեայ շահախնդիր խմբակցութիւն առաջ բերել եղած դրամը վատնելու համար եւ դրամի վատնումով կը վերանայ

նաեւ «կազմակերպութիւնը». որովհետեւ դրամը մեծարժէք է գաղափարներ հետապնդելու համար, բայց առանց գաղափարների եւ նուիրման կուսակցութիւն լինել չի կարող: Ծրագիրն աւելի հիմնական է քան դրամը. Ծրագիրը կարող է դրամ գտնել, բայց դրամը կուսակցական Ծրագիր ստեղծել չի կարող: Վերջապէս, այն մարդկանց համար, որ առանց մտայնութեան նոյնութեան եւ Ծրագրի միութեան, լոկ «գործերի» սիրուն սպրդած են կազմակերպութեան մէջ եւ կուսակցութիւնը համարում են մարզավայր՝ – Կանոնագրի յօդուածները տեւական եւ արթուն սպառնալիք են, որ հսկում են նրանց քայլերին: Թոյլ տալով, որ մինչեւ մի որոշ ժամանակ իրենց գործակցութիւնը բերեն մեր կուսակցութեան, յաճախ հասցնելով նրանց կուսակցական, հանրային եւ պետական բարձր դիրքերի՝ Կանոնագիրն իր անողոք խստութեամբ իջնում է նրանց համբաւի վզին իբր պատուհասող սուր եւ ործկում է իբր անմարսելի կերակուր, երբ նրանք փորձ են անում իրենց ոչ կուսակցական մտայնութեամբ կուսակցութեան ճամբան թեքելու եւ իրենց ոչ կուսակցական բարքերի դրոշմը կուսակցութեան գործերի վրայ դնելու:

Կանոնագրի երկու հիմնական յօդուածները ցուցափայտեր են, որ մատնանշում են «դաշնակցականի» ուղին. նրանք չեն փակում ճամբան, այլ ազդարարում են, որ չշեղուին: Նրանք յիշեցնում են շարունակ «դաշնակցականի» կոչումը եւ դրդում են շարունակ առաջ գնալ «ամէն ջանք թափելու» ճամբով: Նրանք արգելք չեն, որ մտաւորականը միշտ աւելի խորանայ տեսական խնդիրների քննութեան մէջ եւ միշտ աւելի լաւ հիմունքներ ու ձեւակերպութիւն գտնէ Ծրագրի եւ Կանոնագրի համար: Նրանք քաջալերում են գործնական ուժերին միշտ ազդու եւ յարաճուն գործունէութիւն հանդէս բերելու եւ որքան գործիչը հմտանում ու մտերմանում է իր

գործին՝ այնքան աւելի դիրք է գրաւում կուսակցութեան մէջ եւ ընկերների յարգանքը շահում։ Կանոնագիրը դրդում ու քաջալերում է զոհողութեան ոգին եւ «դաշնակցականին» գնահատում է նրա զոհողութեան չափով։ Կուսակցութիւնը չի ճանաչում ազդեցութեան որեւէ նիւթական աղբիւր. «դաշնակցականը» հեղինակութեան հասնում է անվերապահ նուիրումով։ Իսկ նրանք, որ զոհաբերում են մեծագոյնը աշխարհում – իրենց կեանքը – կուսակցութիւնը դասում է նրանց իր նահատակների շարքը եւ պաշտամունք է ստեղծում նրանց անուան ու յիշատակին շուրջը։

Այսպիսով, Կանոնագիրն անողոք ու խիստ է շեղընթացների հանդէպ եւ հովանաւոր ու քաջալեր նրանց, որ ճգնում են ուղիղ ճամբան քալելու։ Նա գնահատում է սլացքը դէպի գաղափար եւ պատուհասում է շեղումը Ծրագրի ճամբից եւ ընդհանրապէս հանդուրժում է սիրով այն բոլոր անդամներին, որ շարունակ աշխատում են միշտ աւելի արդարացնել իրենց «դաշնակցական» բարձր կոչումը։

***

Տեսանք, թէ ինչպէս «դաշնակցական» կոչուելու համար ամէն ոք պէտք է գոհացում տայ Կանոնագրի հինգ պահանջներին միաժամանակ։ Ինքնին հարց է ծագում թէ ի՞նչպէս կարող է մի նորեկ անդամ, այդքան պահանջների մի անգամից գոհացում տալ։ Եւ մի՞թէ բոլոր դաշնակցական համարուածները գոհացո՞ւմ են տալիս այդ պահանջներին։ Մի՞թէ ամենքը, որ «դաշնակցական» անունն են կրում՝ գաղափարական տիպարներ են անթերի։ Եթէ ուշադիր քննենք Կանոնագրի հինգ պահանջները, կը տեսնենք, որ նրանցից մէկն է միայն, որ անմիջապէս պէտք է գոհացուի. մնացած-

ները յանձնառութիւն են եւ վստահացում։ Թեկնածուն պէտք է անպայման որեւէ խմբի անդամ արձանագրուի։ Այսքան։ Այնուհետեւ նա պէտք է աշխատի իր յանձնառութիւնները կատարել եւ վստահացումն արդարացնել՝ կեանքի բերումին զուգահեռ։ Թեկնածուները մուտքի ժամանակ յատուկ քննութեան բովից չեն անցնում. նրանք չունեն քաղաքական դասընթաց, որից պարտաւոր լինէին քննութիւն տալու՝ նախ քան ընդունուին կազմակերպութեան մէջ։ Միշտ կարծել են, որ դա անհրաժեշտ է. բայց կեանքը բերած է ուրիշ եզրակացութեան։ «Դաշնակցութիւն» շնչելով, «Դաշնակցութիւն» անելով՝ թերավարժները դարձած են «դաշնակցական», ինչպէս լողանալով է, որ մարդ լողորդ է դառնում։

Այս տեսակէտից նայելով գործին՝ ընդհանուր կազմակերպութիւններից միայն մէկն է, որ լաւագոյն զուգահեռն է մեր կուակցութեան.– եկեղեցին։ Իբր կազմակերպութիւն՝ նրանք շատ նման են իրար։ Երկուսն էլ «հաւատացելոց» ժողով են, թէեւ հաւատում են տարբեր բաների։ Երկուսն էլ ունեն ծրագիր, գործելակերպ ու Կանոնագիր, թէեւ տարբեր բնոյթի եւ բովանդակութեան։ Երկուսն էլ նոր անդամներ ընդունում են առանց խորին քննութեան եւ գոհանում են պարզ հարցումով եւ յանձնառութեամբ։ Երեխային ուղղած հարցումին քավորն է պատասխանում թէ՝ երեխան ուզում է. «հաւատ, յոյս, սէր եւ մկրտութիւն. Սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց եւ ծառայել Աստուծոյ»։ Քավորի դերը կուսակցութեան մէջ խումբն է կատարում, որ յանձնարարում է նոր անդամին եւ վստահեցնում, թէ նա ուզում է ընդունել ծրագիրն ու գործելակերպը, ենթարկուել Կանոնագրին ու որոշումներին, ամէն ջանք թափել իրականացնելու «զանոնք», մտնել խմբի մէջ եւ կուսակցական տուրք վճարել։

Ինչպէս քավորը բարոյական յանձնառուն է իր սանիկի ուղիղ ընթացքի, այնպէս էլ խումբը բարոյապէս յանձնառու է իր առաջարկած անդամի համար։ Եւ ինչպէս քահանան քավորի յանձնառութեան վրայ տալիս է մկրտութիւն, այնպէս էլ մարմինը խումբի յանձնառութեան հիման վրայ ընդունում է նոր անդամին։ Քավորը սովորաբար բնաւ չի հասկանում իր յանձնառութեան իմաստը, առաւել եւս երեխան, որ արդէն անկարող է հասկանալ։ Սա մի մեծ ծես է, որ կատարւում է։ Մինչեւ իսկ եթէ «երեխան» հասակաւոր է, նա եւս յաճախ չի հասկանում թէ ինչ – ինչոց է։ Նոյնը պատահում է եւ կուսակցութեան մէջ, ուր յանձնարարողն ու յանձնարարուածը լաւ չեն հասկանում գործի էութիւնը։ Արտասանելով երդման բանաձեւը, թեկնածուն շատ անգամ լաւ չի ըմբռնում թէ ի՞նչ ծանր յանձնառութեանց տակ է մտնում՝ կուսակցութեան անդամ դառնալով։

Բայց ինչպէս հասակավոր «երեխան» կամ կաթնակեր մանուկը մկրտութեամբ դառնում են մի դարաւոր հաստատութեան անդամ, այնպէս էլ թեկնածուն երդման բաանաձեւն արտասանելով դառնում է մի պատկառելի կուսակցութեան անդամ։ Եւ ինչպէս եկեղեցու անդամութեան տեսակէտով տարբերութիւն չունեն նորադարձն ու հին անդամը, այնպէս էլ կուսակցութեան տեսակէտով «Դաշնակցական» են թէ նա, որ երէկ մտաւ կազմակերպութեան մէջ եւ թէ՛ նա, որի մազն արդէն ճերմակած է։ Երկուսն էլ լիազոր եւ նոյնիրաւ անդամ են հաւաքական ընկերային կազմութեան. մէկն՝ իր եկեղեցու, միւսն՝ իր կուսակցութեան։ Նվաստ գիւղացին եւ գերագահ կաթողիկոսը երկուսն էլ անդամ են նոյն եկեղեցու, թեկուզ մէկը գլուխն է եկեղեցական կազմակերպութեան, միւսը հազիւ ոտքի եղունգը, բայց երկուսի միութեամբ է, որ ստեղծվում է եկեղեցու միութիւնը։

Այդպէս է նաեւ կուսակցութեան մէջ. թեկուզ եւ մէկը վարիչ է բովանդակ շարժման, իսկ միւսը պարզ մասնակիցը, բայց այդ երկուսի միացումով է կուսակցութիւնը ձեւ ու մարմին ստանում: Կարողութեան, երախտիքի, փորձառութեան ու զոհաբերութեան տեսակէտով նրանց մէջ կարող է սար ու ձոր լինել, բայց կոչման տեսակէտով նրանց մէջ տարբերութիւն չկայ. երկուսն էլ կուսակցութեան անդամ են, երկուսն էլ «դաշնակցական» եւ «ընկեր»:

Եթէ հիմա մտամուխ լինենք բուն գործի էութեան, կը տեսնենք, որ եկեղեցու հասուն անդամները հազիւ գիտակցութիւն ունեն իրենց կոչման եւ պարտականութեանց մասին: Այդ «կուսակցութեան» անդամները ընդունում են նրա «Ծրագիրն ու գործելակերպը, ենթարկւում են նրա Կանոնագրին ու որոշումներին», բայց ընդհանրապէս «ծրագրի» մասին գաղափար չունեն, այսինքն չգիտեն իրենց նպատակն ու դաւանանքը, իրականի մէջ հետեւում են տարբեր գործելակերպի, քան հրահանգում է եկեղեցին, Կանոնագրին ենթարկւում են տհաճութեամբ եւ որոշումները կատարում են տասից մէկ անգամ: Բայց եւ այնպէս նրանք համարւում են եկեղեցու անդամ. նրանց համախումբ միութիւնն է, որ դարձնում է եկեղեցին մի ազդակ. եւ յաճախ նրանք են, որ իրենց արիւնով շաղախում են եկեղեցու հիմունքները եւ դարձնում անսասան: Ոչ ոք կարող է պնդել, որ դրանք գաղափարական տիպարներ են եկեղեցու մէջ, բայց եւ ոչ ոք կարող է ասել, թէ նրանք անդամ չեն եկեղեցու: Նրանք «ընդունում» են եկեղեցու պահանջները եւ կատարում են իրենց ըմբռնումի համեմատ: Յաճախ յօժարութիւնը չէ որ պակասում է, այլ ճիշտ ըմբռնումը: Եթէ գիտակցում են իրենց թերիին գաղափարական տիպարի համեմատութեամբ՝ – ունեն մեղքի գիտակցութիւնը եւ զղջումի ապրումը:

Այսպէս է նաեւ կուսակցութեան մէջ։ Կանոնագիրը գծում է դաշնակցականի գաղափարական տիպարը եւ թեկնածուն յանձնառու է լինում այդ տիպարին համապատասխան ընթացք ունենալ։ Քանի դեռ ճանաչում է տիպարը պարտադիր, բայց իրան թերացած՝ նա կուսակցութեան անդամ է իրօք։ Քանի դեռ ճգնում է միշտ աւելի մօտենալ «դաշնակցական» տիպարին, նա «դաշնակցական» է անառարկելի։ Որովհետեւ յանձնառութիւնն է նրան «դաշնակցական» դարձնում եւ այդ յանձնառութեան կատարման ձգտելն է «դաշնակցական» պահում նրան։ Այն օրը, որ գաղափարական տիպարը դադարեց հմայիչ լինել կամ այն օրը, երբ նա դադարեց այդ տիպարին մօտենալու ճիգ անել – նա դադարում է «դաշնակցական» լինելուց, թէկուզ եւ մնայ կազմակերպութեան մէջ։ Նա մեռած անդամ է կենդանի կուսակցութեան, մի մեռած բջիջ կենդանի մարմնի։

Յանձնառութիւնն այն տոմսն է, որ իրաւունք է տալիս Դաշնակցութեան շէնքը մտնելու, բայց յանձնառութեան կատարման չափով թեկնածուն տեղ է գրաւում կուսակցութեան մէջ եւ դառնում նրա յենարանը։ Ամենքը կոչուած են ձգտելու «դաշնակցականի» բարձր տիպարին եւ քանի դեռ գործով ձգտում են նրան՝ համարւում են հաւատարիմ անդամ եւ ընկեր կուսակցութեան մէջ։

Կարեւորն այն չէ, որ մտած վայրկեանին դաշնակցական դաւանանքի բոլոր ծալքերն իմանաս, նրա ծրագրի բոլոր կէտերը խորապէս ըմբռնես եւ նրա Կանոնագիրը գոց գիտենաս։ Լաւ է, որ այդպէս լինի, բայց այդ չէ կարեւորը։ Կարեւորը այն է, որ շիտակօրէն յանձնառու լինես նրա Ծրագիրն ըմբռնելու եւ գործադրելու, մտածումդ նրա աշխարհայացքին յարմարելու, նրա Կանոնագրին հնազանդելու

եւ նրա որոշումները կատարելու. մի խօսքով մտածելու եւ գործելու՝ կուսակցութեան մշակած հրահանգների համաձայն: Մտնելով կուսակցութեան մէջ ընկեր մարդկանց յորդորով կամ ինչ որ ներքին մթին մղումի անսալով՝ թեկնածուն ժամանակի ընթացքին, գործի եւ շփումների մէջ կարող է իր գիտակցութիւնը պայծառացնել եւ իր բարոյական աշխարհը վերակազմել՝ հետեւելով փորձ-ընկերների օրինակին կամ անձամբ հասու դառնալով Կանոնագրի պահանջներին: Կարեւորը շիտակ եւ անվերապահ յանձնառութիւնն է: Սա մի ուխտ է, որ անում է մարդ ընկերների առջեւ, ինչպէս ամուսնացողը եկեղեցում: Փեսացուն չգիտէ թէ կեանքի մէջ ինչեր կարող են պատահել իրան, բայց քահանայի հարցումին թէ՝ «Տէր ես» – պատասխանում է վստահ. «Տէր եմ». եւ դրանով յանձն է առնում յետագայ բոլոր փորձանքների ժամանակ տէր կանգնել իր կնոջը, որ տալիս են նրան վկաների ներկայութեամբ: Ու նաեւ կինը խոստանալով «հնազանդիլ», չգիտէ առաջուց թէ իր կեանքում ինչ կացութիւններ կարող են պատահել, ուր նա պէտք է արժեցնէ իր հնազանդութեան խոստումը, բայց նա խոստանում է «հնազանդիլ» վկաների ներկայութեամբ եւ իր պարտականութիւնն է իր տուած խօսքը պահել:

Ճիշտ այսպէս է կուսակցութեան թեկնածուն: Արտասանելով հանդիսաւոր երդման բանաձեւը, նա դրանով խոստանում է Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ եւ պարտաւոր է յետագային կատարել իր տուած խոստումը: Եւ նա՛ է «դաշնակցականը», որ փորձութեան օրերին հաւատարիմ է մնում իր յանձնառութեան եւ կուսակցութեան մէջ մտած օրից անդադրում աշխատում է միշտ աւելի կատարեալ չափով գոհացում տալ Կանոնագրի պահանջներին:

Մենք տեսանք «դաշնակցականի» գաղափարական տիպարը, որ գծում է մեր կանոնագիրն իր երկու յօդուածներով: Կուսակցութեան Ծրագիրը եւ կանոնածիր կուսակցականը գաղափարական կառուցումներ են: Բայց մինչդեռ տիպար կուսակցական դառնալու համար բաւական է անձնական ճիգը, տիպար Ծրագիր իրագործելու համար անհրաժեշտ է հազարաւոր ճիգերի ներդաշնակ զուգորդութիւն եւ արտաքին նպաստաւոր պայմաններ: Բայց ինչպէս կուսակցութիւնն այնքան ժամանակ կենդանի է եւ ազդու, որքան հետամուտ է իր Ծրագրի իրացման, այնպէս եւ կուսակցականը այնքան ժամանակ «դաշնակցական» է, որքան հետամուտ է իր տիպարի լրացման, այսինքն Կանոնագրի հինգ պահանջի գոհացման:

Պէտք չէ կարծել ուրեմն, որ «դաշնակցական» լինել նշանակում է ամսական տուրք վճառել եւ երբեմն ժողով գնալ: «Դաշնակցական» կոչումը շատ աւելի դժուարին ու բարդ գործ է, քան կարծում են շատերը: Գիտենք, որ դժուար է նաեւ քրիստոնէայ լինել. բայց ամէնքս «քրիստոնէայ» ենք փառք Աստուծոյ. բայց վա՜յ մեր քրիստոնէութեան: Պէտք չէ այնպէ՛ս կուսակցական լինել, որ ասի. «վա՜յ մեր Դաշնակցութեան»... «Դաշնակցական» կոչումը մի յարազդու խթան է, որ առաջ է վարում մարդուն միշտ աւելի լաւ ըմբռնելու իր ծրագիրը, միշտ աւելի ճիշտ գործադրելու իր Կանոնագիրն ու կուսակցութեան որոշումները, միշտ աւելի ուշադիր հետեւելու հանրային կեանքի ընթացքին եւ միշտ աւելի որոշ դիրք բռնելու հանրային խնդիրների հանդէպ՝ նւիրելով աւելի ժամանակ ու եռանդ եւ ցուցադրելով աւելի մեծ զոհողութիւն:

***

Ես աշխատեցի պարզել «դաշնակցական» մարդու գաղափարական տիպարը: Ուշադրութեան արժանի է մի «Դաշնակցական» մարդու մի տիպար միայն: Իր գաղափարական առումով Դաշնակցութիւնը համատեսակ տիպարների միութիւն է, որ նշանակում է, թէ բոլոր դաշնակցականները աւելի կամ պակաս նոյն կաղապարով ձուլուած մարդիկ են: Այս հանգամանքը շատերն են նկատած եւ ամէն օր կարելի է ստուգել, բանալով աշխարհի հեռաւոր վայրերում լոյս տեսնող կուսակցական թերթերը եւ տեսնելով միօրինակ վերաբերում միեւնոյն խնդիրների հանդէպ: Սա արտաքին յայտարարն է մտայնութեան նոյնութեան: Թերթերը չեն գրում ամենօրեայ հրահանգի համաձայն, խմբագիրնե՛րն են, որ մտածում են որոշ ուղղութեամբ: Որոշ կաղապարով ձուլուած մտայնութեան հետ է մեր գործը եւ ոչ թէ որոշ կարգադրութեան հնազանդ մարդկանց: Եթէ քննութեան առնենք «դաշնակցական» գործերը, ուր եւ կատարուեն, մենք կը նկատենք նոյն ընթացքը նաեւ գործի մէջ, որ յայտարար է «գործելակերպի» նոյնութեան: Այստեղ եւս կարգադրութիւն չէ, որ կատարում են մեր ընկերները,– քանի որ ամէն շրջան իր գործերն ունի եւ կուսակցութիւնն ապակենտրոն է – այլ նոյն կաղապարով ձուլուած կամքերի արդիւնք է այդ երեւոյթը: Կուսակցական կաղապարն է նոյն, ուստի եւ ձուլուածքները նման են իրար: Սա նշանակում է թէ Դաշնակցութեան անդամները իմացական ու բարոյական կառոյցի հիմնական գծերով մօտաւորապէս նման են իրար: Այս հիմնական հէնքի վրա ամէն մի «դաշնակցական» իր նկարն է գործում՝ գորգի զարդերի նման: Տարբեր են գոյները, տարբեր՝ նկարն ու դասաւորութիւնը, տարբեր՝ մեծութիւնը, բայց նոյնն է եւ բոլորն էլ գորգ են:

Այս պատճառով Դաշնակցութիւնը թէեւ ընկերային

կազմակերպութիւն է, բայց նա նման չէ պետական կազմակերպութեան: Արտաքուստ նայելով թւում է թէ նա շատ զուգահեռ ունի պետութեան հետ, բայց խորքը դիտելով՝ մենք տեսնում ենք, որ աննման են իրար: Դաշնակցութեան մէջ չկայ մասնագիտացում եւ պէտք չէ, որ լինի: Այսօրուան խմբագիրը վաղը կարող է քարոզիչ դառնալ, միւս օրը խմբապետ, երրորդ օրը մաուզերիստ: Այս ճկուն կերպարանափոխութիւնը արդիւնք է նրա «դաշնակցական» կոչման, սա ճառագայթումն է նրա տիպարի: Կարող է մէկի մէջ շեշտուած լինել ռազմիկի կարողութիւնը, միւսի մէջ տեսական մտքի ուժը, երրորդի մէջ խօսքի շնորհքը, չորրորդի մէջ կազմակերպելու տաղանդը, բայց երբ հարկը պահանջեց՝ ամէնքը պարտաւոր են զէնք առնելու եւ կռւի դաշտ իջնելու, թողնելով մէկն իր յօդուածը, միւսն իր բեմը, երրորդն իր ժողովը: Կամ ընդհակառակը, երբ պէտք է Կանոնագիր մշակել եւ որոշումներ կայացնել, այստեղ ձայն ունեն ե՛ւ տեսաբանը, ե՛ւ բեմասացը, եւ կազմակերպիչը եւ մարտիկը: Չկայ մի ասպարեզ, որ վերապահուած լինի միմիայն որոշ ընկերների եւ գոցուած լինի միւսների հանդէպ: Կանոնագիրը պահանջում է «ամէն ջանք թափել» իրականացնելու ծրագիրն ու որոշումները, եթէ դրա համար պէտք է, որ մէկը խօսէ եւ չկայ ընկեր, որ խօսքի շնորհքն ունենայ՝ բեմ է բարձրանում լեռների մարտիկը. եթէ պէտք է ահաբեկում կատարուի եւ հարմարագոյն մարդը չկայ, գնում է գործի՝ կուսակցութեան հիմնադիրն ու տեսաբանը:

Դաշնակցութեան մէջ չկայ եւ չի կարող լինել մասնագիտացում, որովհետեւ մեր կուսակցութիւնը ոչ թէ մասնագետների միութիւն է, այլ հանրային որոշ տիպարների ընկերութիւն. մարդիկ, որ սուր ականջ ունեն հայութեան տառապանքի ճիչը լսելու, ուր եւ նա հնչէ եւ

որ շարունակ իրենց ծրագիրն ունեն աչքի առջեւ: Նրա իրացումը պահանջում է բազմազան աշխատանք, ուստի կուսակցութեան մէջ չէ եղած եւ պէտք չէ, որ լինի որեւէ գործից հրաժարում: Կարող է առարկութիւն լինել այս ու այն անդամի յարմարութեան մասին, բայց խօսք չի կարող լինել կուսակցութեան պահանջը մերժելու մասին: Այս ոգին է, որ կուսակցական համեստ ընկերներին դարձնում է հերոս, պարտադրելով կատարել գործեր, որ առաջին նվաղ թւում են անհնարին նրանց ուժերի համար: Համարձակութիւն չի լինի եթէ ասեմ, թէ «դաշնակցականի» համար անհնարին բան չկայ իր ծրագրի իրացման ճամփին: Հիշեցէք կուսակցութեան անցեալը եւ պիտի հանդիպէք փափկասուն մարդկանց, որ «դաշնակցական» կոչումին հաւատարիմ՝ դարձած են խստաբարոյ եւ լեռնակեաց մարտիկին հաւասար ընկեր, մոռանալով իրենց սովոր հանգիստը եւ դիւրատար պայմանները: Անշուշտ, ղեկավար մարմինների գործն է ընկերներին դասաւորել այնպէս, որ նրանք լաւապէս օգտակար լինեն, բայց «դաշնակցականը» պարտական է գնալ ամէն գործի, որ պահանջում է կուսակցութիւնը, որովհետեւ նա մի հանդիսաւոր ժամի յանձնառու եղած է «ամէն ջանք թափել» իրացնելու կուսակցութեան ծրագիրն ու որոշումները:

Կուսակցութեան հաւատարիմ ընկերները գիտեն, թէ յաճախ որքա՜ն անողոք է եղած Դաշնակցութիւնը եւ կը յիշեն անշուշտ հարիւրաւոր ընկերներ, որ հնազանդ ու սիրով ենթարկուած են կուսակցութեան անողոք որոշումներին: Այս անողոք դպրոցին մէջ են մարզվում «դաշնակցական» մարդու կուսակցական բարձր առաքինութիւնները, որ ոչ միայն կուսակցական են, այլեւ մարդկային: Իրենց դաժան գեղեցկութեամբ նրանք իշխում են մարդու հոգուն եւ գերում են

առմիշտ՝ ստեղծելով նահատակներ ու հերոսներ։ Այս մուրճի տակ է, որ կոփվում են անձեւ հոգիները եւ այս բովի մէջ է, որ պողպատում են երերուն կամքերը։ Դաշնակցութիւնն այսպիսով, ոչ միայն դառնում է քաղաքական զօրաւոր ազդակ, այլեւ հայ տիպարի ազնվացման ազդու մարզարան։ Եւ որքան աւելի «դաշնակցական» են դառնում մեր ընկերները, այնքան աւելի խորանում է նրանց բաժանող խրամատը հայութեան միւս տիպարից։ Այս երեւոյթը ոմանք տհաճութեամբ են դիտում, մինչդեռ պէտք է գոհութեամբ լցներ ամէնքիս սիրտը, որովհետեւ ոչ ամէն խրամատ ու պառակտում աւերիչ են. կայ շինարարութիւն, որ միայն պառակտումով հնարաւոր է եւ խրամատով զօրացող։ Ազգային նկարագրի ազնւացումը այդ շինարար գործերից մէկն է։ Ոչինչ առնչութիւն կարող է լինել անողնաշար սրիկայի եւ գաղափարատենչ մարտիկի միջեւ։ Ազգային ծագումն արգելք չէ, որ նրանք իրար հիմնապէս ժխտեն։ Սրիկան միայն վախ եւ ատելութիւն կարող է սնուցանել իր հոգում գաղափարական մարդու հանդէպ. իսկ սա արգահատանք եւ արհամարանք՝ նրա ճկուն կենցաղի դիմաց։ Մէկն ստիպուած է կեղծ ու թաքուն գործելու. միւսը շիտակ է եւ ինքնավստահ, որովհետեւ նա հետամուտ էր իր անձնական բարիքին եւ խորշանք ունի բարոյական ճիգի դէմ, իսկ սա սլացք է դէպի գաղափար եւ իր թռիչքի ընթացքին հազիւ նկատում է կեանքի բարիքը։ Եւ որքա՜ն շահաւէտ ու փայլուն ասպարէզներ լքած է «դաշնակցականը», իր գաղափարին ծառայելու համար. ասպարէզներ, որ շատերի երազն են կազմում։ Եւ որքա՜ն անձնուէր ու մաքուր սէրեր մերժած է «դաշնակցականը», խորտակելով քնքոյշ հոգիներ, որոնց մասին գաղափար իսկ չունի սրիկան։ Կեանքն այսպիսով նպատակ չէ «դաշնակցական» մարդու համար. նա միջոց է Ծրագիր հետապնդելու եւ որոշումներ իրացնելու։ Մի շատ

համեստ խօսք.– «ամէն ջանք թափել» – ազդակ է դառնում մարդկային տիպարի ազնուացման եւ խթան՝ գերագոյն զոհաբերութեան, որովհետեւ երբ ասում է «ամէն ջանք», այլ եւս տեղ չի թողնում, որ ապաստանես հմտութեան պարսպին եւ հրաժարուես պարտքից՝ անհմտութեան պատրուակով: Դա մի կոչ է, որ կազմակերպական Կանոնագիրն ուղղում է բոլոր «դաշնակցականներին»՝ պատրաստ լինել ամէն ժամ եւ ամէն տեղ կատարելու այն գործը, որ անհրաժեշտ է, անկախ այն բանից «մասնագէ՞տ» ես թէ ոչ: Դաշնակցութեան մէջ մասնագէտներ չկան. կան միմիայն «դաշնակցականներ»:

Այս չի նշանակում, որ Դաշնակցութիւնը դէմ է մասնագիտութեան կամ հակառակ է մասնագէտներ օգտագործելուն: Սա նշանակում է միայն, որ «դաշնակցական» ըմբռնումի մէջ «մասնագէտ» գաղափարը տեղ չէ գրաւում: «Դաշնակցականը» կարող է մասնագէտ լինել, բայց իր մասնագիտութեամբ չէ, որ «դաշնակցական» է. ինչպէս եւ մասնագէտը կարող է դաշնակցական գործին մեծապէս նպաստել, բայց դրանով «դաշնակցական» չի դառնում: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ մենք մասնագէտ գողեր ունէինք, որ զօրանոցներից զէնք ու փամփուշտ էին գողանում մեզ համար, բայց նրանք «դաշնակցական» չէին, ինչպէս ուրիշ վայրերում «դաշնակցականներ» կային, որ նոյն գործն էին կազմակերպում ու կատարում, առանց, սակայն, մասնագէտ գողեր դառնալու: «Դաշնակցական» մաքսանենգներ եղած են, որ մեծաքանակ զէնք ու փամփուշտ փոխադրած են սահմանից սահման, բայց եւ ոչ մի ապրանք չեն փոխադրած անձնական շահի համար, ինչպէս եղած են մասնագէտ մաքսանենգներ, որ իրենց փոխադրած անձնական ապրանքի հետ փոխադրած են եւ մեր զինամթերքն ու գրականութիւնը: Սրանով «դաշնակցականը» մաքսանենգ

չի դարձած եւ մաքսանենգը՝ «դաշնակցական»։ Մէկն աշխատած է «ամէն ջանք թափել» իր Ծրագիրն ու կուսակցութեան որոշումներն իրագործելու, միւսն իր անձնական շահին նոր շահ բարդելու։ Եւ յաճախ պատահած է, որ «դաշնակցական» գործ կատարելով, մասնագէտ գողն ու մաքսանենգը մկըրտուած են նոր աւազանում եւ դարձած են տիպար յեղափոխական, ամէն դասի մարդկանց հիացումը խլելով։ «Դաշնակցական Խէչօն», որ հայ ժողովրդի ազնուագոյն զաւակներից մէկն եղաւ, մի պատանի գրպանահատ էր... Ոչ ամէն զինուորական, որ կռուած է Դաշնակցութեան դրօշի տակ իր կեանքը վտանգելով՝ դրանով իսկ դարձած է դաշնակցական, բայց շատ «դաշնակցականներ» «ամէն ջանքի» թելադրանքին հնազանդ՝ մտած են կռուի ասպարէզ ու դարձած զինուորական։ «Դաշնակցական» կոչումը մասնագիտութիւն չէ. նա որոշ բարոյական կառուցուածք է մատնանշում, որոշ Ծրագիր ու Կանոնագիր, իսկ մասնագիտութիւնը որոշ կարողութիւն է, որ «դաշնակցութիւն» չի ենթադրում։ Ուստի պէտք չէ զարմանալ, որ կան հազարաւոր գիւղացիներ, բանուորներ եւ արհեստաւորներ, որ «դաշնակցական» են անկախ իրենց արհեստից, եւ կան շատ տիտղոսաւոր մասնագէտներ, որ «դաշնակցական» չեն եւ լինել չեն կարող, կրկին անկախ իրենց արհեստից։ «Դաշնակցականը» մի տիպար է, որ երբ հարկը պահանջէ, կարող է եւ պարտաւոր է մասնագիտանալ, բայց մասնագէտը չի կարող «դաշնակցական» դառնալ՝ ապաւինած միմիայն իր մասնագիտութեան։ Դրա համար պէտք է «դաշնակցական» մտայնութիւն ունենալ եւ «դաշնակցական» բարոյական կառուցվածք։

***

Կանոնագիրը վստահութեամբ թոյլ է տալիս, որ

յանձնառուները կրեն «դաշնակցական» անունը եւ գործի մէջ արդարացնեն իրենց կոչումը։ Այս իմաստով «բազումք են կոչեցեալք եւ սակաւք ընտրեալք»։ Ամէն քաղաքացի կարող է դաշնակցական դառնալ եւ շատերն են դառնում իսկապէս, բայց քչերն են հաւատարիմ մնում իրենց յանձնառութեան։ Եւ սա մի չարիք չէ։ Դաշնակցութեան ուժն իր անդամների քանակի մէջ չէ, այլ նրանց որակի մէջ է։ Մի բուռ դաշնակցականներ ամէն տեղ կարող են հրաշքներ գործել. եւ գործած են իրօք, եթէ եղած են «դաշնակցական»՝ Կանոնագրի առումով։

Պատմական իրադրութեանց բերումով կուսակցութեան առջեւ դրուում են խնդիրներ, որ լուծում են պահանջում։ Այդ «լուծումները» կատարուում են Ծրագրի համեմատ եւ կուսակցութեան համար նրանք մի-մի կայան են մեր Ծրագրի իրացման ճամբին։ «Ազգը», սակայն, կարծում է, որ այդ խնդիրները բախտորոշ են եւ վերջնական, եւ ժողովուրդի կենդանի տարրերը խմբւում են Դաշնակցութեան դրոշի շուրջը։ Բազմանում են գործակիցները, թանձրանում է համակիրների մթնոլորտը, ծաւալում է գործն ու կազմակերպութիւնը։ Լայն ալիքներով շրջան է անում կուսակցութեան անունն ու համբաւը։ Ամէն ոք «դաշնակցական է արդէն»։ Բազմաթիւ ինքնասիրութիւններ ծաղկում են փարթամ՝ կուսակցութեան հմայքի լոյսով եւ թւում է, թէ կազմակերպութիւնը հասած է իր զարգացման գագաթը։ Եռում է հանրային եւ կուսակցական կեանքը, կատարուում է պատմական գործը յաջող կամ անյաջող վախճանով։ Հանրային գործակցութեան ալիքը յետ է քաշւում։ Շատերն այլեւս գործ չեն գտնում անելու, քանի որ այդ միակ գործի համար յարած էին կուսակցութեան։ Շատերը լքում են դիրքերը, եթէ «գործն» անյաջող վախճան է ունենում կամ վարկաբեկ

անդրադարձում է ստանում հանրային գիտակցութեան մէջ: Բազմութիւնը խուսափում է հալածանքից կամ հանրային պարսաւից եւ թւում է, թէ կուսակցութիւնն իր քայքայման օրերն է ապրում: Բայց երբեք կուսակցութիւնն այնքան զօրաւոր չէ, քան այն ժամանակ, երբ եկամուտ տարրերը լքում են նրան. որովհետեւ ճիշտ այդ ժամանակն է, որ մնում են այն սակաւաթիւ «դաշնակցականները», որոնք Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում են տուած: «Ամէն ջանք թափելու» յանձնառութիւնը իշխում է տիրաբար՝ հաւատարիմ անդամների հոգում եւ մղում է նրանց դէպի նոր գործեր: Նրանց համար նշանակութիւն չունի կատարուած գործի անյաջող ելքը, քանի որ այդ «գործով» չի սպառում կուսակցութեան Ծրագիրը եւ Դաշնակցութեան դերը՝ հայութեան կեանքում: «Դաշնակցականին» գործ չի պակասում իր Ծրագրի իրացման համար եւ ոչ պատմութեան արգանդն է ամլանում նոր պայմաններ ու խնդիրներ ստեղծելու: Յետ մղուելով մի ճակատից՝ «դաշնակցականը» գրոհ է տալիս միւս ճակատների վրայ: Պատմութիւնը ոչ թէ յուսալքում, այլ բորբոքում է նրա եռանդը եւ հնարամտութիւնը: Պարտութիւնն ինքնին դառնում է մի դաս՝ շտկելու համար կազմակերպութեան թերիները եւ փոխելու պայքարի եղանակները: Կուսակցութիւնն իր ուժերն ամփոփում է, հարուածի վայրը փոխում եւ ներքուստ զօրանում է: Դրսի պարսաւը անազդեցիկ է մնում համոզուած դաշնակցականի համար, ինչպէս դրան նախորդող հռչակն ու հիացումը չէին մթագնած նրա գիտակցութիւնը: Նա շարունակում է իր ճամբան, որ նախորոշուած է իր Ծրագրով եւ գործելակերպով: Սկսում է մի ներքին եռ ու զեռ, որ մնում է աննկատ դրսի հիասթափ կամ յոգնած շրջապատին: Այսպէս է, որ Դաշնակցութիւնը մնում է կայուն եւ ոչ մի փոթորիկ նրան չի յաղթահարում մինչեւ իսկ այն ժամանակ, երբ նրա ամենից

փորձուած եւ ազդեցիկ անդամները տառապում են բանտերի եւ աքսորի մէջ կամ ընկնում են կռուի դաշտերում։

Պէտք չէ կարծել, ուրեմն, որ Դաշնակցութեան ոյժը հետեւորդ զանգուածների մեծութեան մէջ է։ Զանգուածները, որ կուսակցական չեն, այսօր կարող են յարել մեզ եւ վաղը լքել կուսակցութեան շարքերը, որովհետեւ նրանք «դաշնակցական» չեն կանոնագրական առումով, այլ համակիր են, գործակից կամ աջակից։ Համընթաց ուժեր են նրանք, որ կուսակցութեան ղեկավարութեամբ պատմական գործ են կատարում, համարելով այդ գործն անհրաժեշտ եւ բախտորոշ։ Կուսակցութիւնը, սակայն, իր Ծրագրի հետապնդման ընթացքին նման գործեր շատ է ունեցած եւ դեռ շատ գործեր պէտք է ունենայ. գործեր, որ Ծրագրի իրացման տեսակէտով կայաններ են միայն, իսկ զանգուածների տեսակէտով՝ բախտորոշ եւ վերջնական։ Երբ պատմական կեանքի ընթացքը նոր խնդիրներ բերէ լուծելու, զանգուածները նորից կը գան ու կը հաւաքուեն կուսակցութեան դրօշի տակ, նրա ղեկավարութեամբ պայքարելու համար։ Կուսակցութիւնը, սակայն, շատ լաւ գիտէ այս գործերի արժէքը Ծրագրի իրացման տեսակէտից, այդ պատճառով նա հանգիստ է ներքուստ եւ վճռական իր ղեկավարութեան մէջ։ Նրա թափը զօրանում է զանգուածների բազմութեանը զուգահեռ եւ հրաման թէ սաստ՝ հնչում են տիրաբար։ Նա իշխում ու վարում է, պատուհասում եւ վարձատրում է պայքարի յաջողութեան անունով, բայց ամէն տեղ իր անվերապահ վստահութիւնը տալիս է սակաւաթիւ «դաշնակցական» ընկերների, որ իր մատեան գունդն են կազմում։ Նրանց հաւատարմութիւնն է միակ հիմունքը գործի յաջողութեան։ Նրանց «դաշնակցական» բնոյթն է միայն, որ կարող է յաղթանակ ապահովել անհաւասար

պայքարների ընթացքին եւ անհնարին պայմանների մէջ։ Մեծ են զանգուածները, բայց լոյծ են իբր խմբակցութիւն։ «Դաշնակցական» սակաւաթիւ խմբակն է, որ ողնաշար է դառնում այդ լոյծ զանգուածին եւ դարձնում նրան զօրաւոր մարմին։ Դաշնակցութիւնը զանգուածներ է կառավարում եւ բազմատեսակ ճակատների վրայ պայքար է մղում իր սակաւաթիւ, բայց հաւատարիմ ընկերներին կոթնած, որոնք պատահաբար չէ, որ մտած են կռուի ասպարէզ եւ յատկապէս այդ մէկ գործի համար չէ, որ զէնք են առած. նրանք եկած են իրենց Ծրագրի իրացման համար, որ այդ կարգի պայքարներ շատ է տեսած եւ դեռ շատ պէտք է տեսնի մինչեւ վերջնական մարմնացում։

Այսպիսով պէտք է շատ լաւ տարբերել կուսակցական ուժերը համակիր զանգուածներից եւ հաւատարիմ զինուորները օժանդակ գնդերից։ Կուսակցութեան ոյժն ու զօրութիւնը «դաշնակցական» ընկերն է եւ ոչ թէ համակիր տարրը։ Իր պատմական դերը խաղալու համար կուսակցութեանն անհրաժեշտ են համակիր զանգուածներ, բայց զանգուածը կուսակցութիւն չէ եւ համակրանքը՝ պարտադրանք. մէկն անցողական է, անկայուն, միւսը՝ յարատեւ է, մնայուն։ Այս իմաստով Դաշնակցութիւնը հայոց քաղաքական կեանքի մնայուն սպայակոյտն է, որ երբ դէպքերը բերեն՝ կարող է համակիր զանգուածներից գործունակ բանակ պատրաստել։ Այս իսկ պատճառով կուսակցութեան գաղափարների ծաւալումը, կուսակցական գործերի կարգաւոր ընթացքը, մեր շարքերի կարգապահ վարմունքը, մեր վարած պայքարների կազմակերպուած բնոյթը՝ անկախ նրանց յաջող կամ անյաջող ելքից, մեր կատարած գործերի յիշեցումը, մեկնութիւնն ու պատճառաբանութիւնը անհրաժեշտ ազդակներ են զանգուածներ խմբելու համար մեր դրօշի շուրջ եւ ստեղ-

ծելու համար համակրանքի լայն մթնոլորտ։ Այս բարոյական մթնոլորտն անհրաժեշտ է մեր գործի համար, ինչպէս նիւթական մթնոլորտը՝ բոյսերի աճման։ Այն խուռներամ բազմութիւնները, որ ունկնդրում են Դաշնակցութեան խօսքը, լինի բեմերից, թէ մամուլի մէջ՝ թաքնուած ուժեր ունեն, որ կարող են երեւալ մի օր. ուժեր, որ կարող են մի կողմից Դաշնակցութեան շարքերը լցնել հաւատարիմ կուսակիցներով, եւ միւս կողմից անսալով նրա կոչին՝ պայքարի մտնել նրա դրօշի տակ, երբ պարագաներն այնպէս բերեն, որ Դաշնակցութեան հերթական գրոհն իր Ծրագրի իրացման համար զանգուածներն ըմբռնեն իբր կենսական եւ բախտորոշ մի գործ։ Մեծ է զանգուածի ոյժը եւ նրա բերած նպաստը մեր պայքարի օրերին, բայց զանգուածը կուսակցութիւն չէ եւ լինել չի կարող։ Կրկնում եմ, կուսակցութեան ոյժը զանգուածների մէջ չէ, այլ զանգուածներ համախմբելու եւ պայքարի մղելու կարողութեան մէջ։ Անհրաժեշտ է, որ հայ զանգուածները ճանաչեն Դաշնակցութիւնը իբր կազմակերպիչ ու վարիչ մեծ պայքարների, իբր հաւատարիմ սպայակոյտը հայ ժողովուրդի, իբր գաղափարի անձնուէր եւ անշահախնդիր մարտիկներ, եւ համակրանքի թանձր շերտով պատեն մեր կազմակերպութիւնը։ Այդ համակրանքն անհրաժեշտ է մեր խօսքն ազդու պահելու համար։ Այդ համակրանքի ուժով է, որ նրանք խուռներամ արձագանգ են տալիս մեր կոչին, երբ իրենց մթին եւ մեր պայծառ գիտակցութիւնը կացութեան մասին զուգադիպում են իրար։ Այդ համակրանքը, սակայն, արդիւնք է մեր անձնուէր, անշահախնդիր եւ անշեղ գործունէութեան, որ կարիք չունի քծնանքի եւ շողոմութեան։ Դաշնակցութիւնը կոչուած է զանգուածները կրթելու եւ գիտակից ժողովուրդ դարձնելու, եւ ոչ թէ նրանց մթին ու ստորին հակումները շոյելու։ Դաշնակցականը գործում է ոչ այն պատճառով, որ զանգուածներ քաշէ ետեւից, այլ այն պատճառով, որ այդպէս

են պահանջում իր Ծրագիրն ու Կանոնագիրը։ Բայց քանի որ կուսակցութեան գործը բխում է իր Ծրագրից, իսկ Ծրագիրը բանաձեւումն է հայ ժողովուրդի կենսական պահանջների, ուստի զանգուածը, որ ժողովուրդ է, գալիս է մեծ պայքարի օրերին կռուելու դաշնակցական մարտիկի կողքին եւ նրա դրօշի տակ։ Գնահատելով ամէն կենսունակ ծիլ, որ երեւան է գալիս հանրային կեանքի ընդարձակ դաշտերում, չարհամարհելով ամենից համեստ ուժերը, որ կարող են մեր պայքարին նպաստել. մեր խօսքով՝ բայց մանաւանդ մեր գործով համակրանք ստեղծելով զանգուածների մէջ, որ երբ առիթը գայ՝ յենուինք նրան մեր Ծրագիրը հետապնդելու համար՝ «դաշնակցականը» պէտք չէ մոռանայ երբեք, թէ իր բուն ոյժը իր գաղափարական տիպարի զօրացման մէջ է. որ սակաւաթիւ դաշնակցական սպայակոյտը այն մակարդն է, որ կոչուած է մակարդելու հանրային եւ ընկերական շարժումները մեր մէջ։ Որ կազմակերպութեան յարատեւութիւնը, նրա ներքին ամրութիւնը, նրա անդամների գաղափարական մաքրութիւնը, նրանց անշահախնդիր բարքն ու անձնուէր գործն են բուն ուժերը, որ շարժում են զանգուածները եւ նրանց նպաստով ու նրանց միջոցով պատմական դեր են կատարում հայութեան կեանքում։

***

Տեղն է հիմա որ ուշադրութեան առնենք մի շատ կարեւոր պարագայ։ Դաշնակցութիւնը քաղաքական կուսակցութիւն է, որ ունի որոշ Ծրագիր, այդ Ծրագիրը թարգման է որոշ շահերի։ Հանրային շահերի պաշտպանութեան եւ հետապնդման կուսակցութիւն լինելով՝ Դաշնակցութիւնը շահակցական կազմակերպութիւն չէ։ Նա հանրային շահեր է պաշտպանում եւ ոչ թէ իր անդամների շահերը։ «Դաշնակցականը» ոչ թէ իր

վիճակի բարոքման է հետամուտ, այլ ժողովուրդի կացութեան յեղաշրջումին։ Այս պարագան պէտք է պարզօրէն գիտակցել եւ լաւապէս տարբերել։ Մեր կուսակցութեանը անդամակցողը սկզբից արդէն պէտք է հաշտուի այն մտքի հետ, որ շատերին կարող է թուայ անիմաստ եւ արտառոց՝ թէ նա մտնում է մի կազմակերպութեան մէջ, ուր պէտք է շարունակ տայ եւ կորցնէ, առանց որեւէ նիւթական բարիք սպասելու. որ ոչ թէ կուսակցութիւնն է, որ նրան պիտի սնուցանէ, այլ նա ինքն է, որ պէտք է պահէ կուսակցութիւնը իր աշխատանքով, դրամով ու կեանքով։ Հազարաւոր «դաշնակցականներ» թողած են տուն, դիրք եւ ազդեցութիւն եւ մտած են այս զարհուրելի, բայց հմայիչ կազմակերպութեան մէջ ու շահած են մահ միայն։ Կազմակերպութիւնը չարքաշութեան ու մահուան հրաւէր է կարդում իր անդամներին եւ ոչ բարեկեցիկ կեանքի։ Մի որոշ տեսակէտով Դաշնակցութիւնը նման է նախնական եկեղեցուն։ Նա կրթում է իր անդամներին գաղափարի համար մեռնելու։ Կարծէք հայոց մարտիրոս եկեղեցու կենդանի աւանդութիւնը անցած է մեր կազմակերպութեան, թողնելով իր պատմական պատեանը հոգով մեռածներին՝ իրենց մեռելները թաղելու եւ գերեզմաններ բերելու, որ «լի են ոսկերօք մարդկան եւ ամենայն պղծութեամբ»։ Ոչինչ չի խոստանում Դաշնակցութիւնն իր անդամներին. ոչ դիրք, ոչ պատիւ, ոչ գանձ, ոչ հանգիստ։ Եթէ երբեմն հասցնում է հանրային բարձր դիրքի՝ միմիայն նրա համար, որ այդ դիրքի վրայ կատարես «դաշնակցական» պարտականութիւնդ։ Երէկ պարզ զինուոր էիր կամ խմբապետ, այսօր դառնում ես նախարար, բայց չես դադարում մնալ «դաշնակցական», ենթակայ որոշ Ծրագրի եւ Կանոնագրի։ Ու երբ նկատում է թէ նոր դիրքի վրայ դու փորձում ես մտածել ու գործել իբր ոչ «դաշնակցական»՝ նա քեզ գահավիժում է չարաչար, առանց նայելու հռչակիդ ու դիրքիդ։ Շատերը տեսած են

հոչակաւոր անուններ, որ յօրինած է Դաշնակցութիւնը իր այս կամ այն անդամի համար եւ գահավէժ անկումներ, որ ստեղծած է նոյն Դաշնակցութիւնը նոյն մարդկանց համար։ Իր պահանջն է, որ հանրային գործերը վարեն գաղափարական տիպարներ եւ գործեն միմիայն գաղափարի համար, առանց համարձակելու վարկեան իսկ մտածել իրենց անձնական շահի համար։ Այս պատճառով, այն դիրքերը, ուր խելայեղ մրցութեամբ դիմում են սոսկական փառատենչերը, «դաշնակցական» մարդու համար ճշմարիտ գողգոթաներ են. ուր ստիպուած են հանրային դիրքի պահանջները հաշտեցնել գաղափարական դաշնակցականի բարձր կոչումին եւ անարուեստ ու համեստ բարքին։ Եւ արդէն այդ դիրքերը ստիպումով է, որ տրւում են «դաշնակցականին» եւ ոչ իբր մեծարանք, այլ իբր պարտադրանք։ Դրսի մարդկանց այս ամենը հէքեաթ կարող են թուալ, բայց դաշնակցականները գիտեն, որ այս այսպէ՛ս է։

Այս պարագան շատ բնորոշ է մեր կազմակերպութեան համար. կրկնում եմ, Դաշնակցութիւնը մի շահակցական ընկերութիւն չէ, ապրուստի եւ բարեկեցութեան մի ձեռնարկութիւն, իր անդամների նիւթականն ապահովող ու բարելաւող մի կազմակերպութիւն, այլ ուխտուածների մէկ միութիւն է սերտօրէն մտերմացած, խստօրէն կապուած ու դաժանօրէն հակակշռուած։ Եւ զարմանքն այն է, որ մի անգամ օձիք տուողը այլ եւս ազատում չունի։ Բաւական սրիկայութիւն պէտք է յանձնառութեան կապանքները խզելու համար։ Այս չարքաշութեան, անդադրում զոհաբերութեան եւ վտանգալից ասպարէզն իր հմայիչ գեղեցկութիւնն ունի, որ անմատչելի է շատ շատերին։ Ամենքը հաշտ են այն մտքի հետ, որ մտած են կուսակցութեան մէջ աւելի կամ պակաս զոհելու համար եւ ոչ թէ շահի. բայց Դաշնակցութիւնը հետա-

մուտ է հայ ժողովուրդի գերագոյն շահերի պաշտպանութեան։ «Դաշնակցականը» պարտաւոր է զոհաբերել, որ հայ ժողովուրդը ապրել կարենայ։ Նա ուխտած է դուլ ու դադար չունենալ, «ամէն ջանք թափել», մինչեւ հայ ժողովուրդն ազատուի իր ստորադաս եւ ստրուկ վիճակից։

«Դաշնակցականն» ամենից առաջ ինքն իր մէջ աշխատում է սպանել պատմական ստրկութեան յետին մնացորդը եւ վախկոտութեան վերջին հետքերը սրբել։ Դրա համար «դաշնակցականները» սովորաբար աւելի խիզախ են, քան արի, թէեւ արութիւնն եւս անպակաս է նրանց շարքերում։ Ոգեկան եւ բարոյական այն հանդարտ քաջութիւնը, որ յատկանիշն է արութեան, յաճախ պակսում է խիզախին, որ քաջ է պոռթկումով։ Սա ոչ թէ ժառանգական արութեան մարմնացումն է, այլ ժառանգական ստրկութեան յեղաշրջումը. ուստի յաճախ «դաշնակցականը» չի ճանաչում չափի զգացում։ Բայց աւելի լաւ է խիզախ լինել պայքարների մէջ, քան թուլամորթ ու ստրկամիտ։ «Դաշնակցականն» այսպիսով իր իսկ անձի մէջ վերակազմում է նոր հայութեան տիպարը, բորբոքելով ժառանգական արութեան կայծերը, որ մնացած են անթեղուած եւ յարաճուն խիզախութեամբ խարանելով ու սպիացնելով ժառանգական ստրկամտութեան վէրքերը։ Այս բարոյական յեղաշրջումը ամենից աւելի յատկորոշ գիծն է մեր կուսակցութեան։ Սասունցի Դաւթի աւանդական տիպարն է, որ կենդանանում է «դաշնակցականի» մէջ, յեղաշրջելով մի դարաւոր մտայնութիւն։ Այս յեղաշրջման ճամբին «դաշնակցականը» կորցնում է շատ անձնական շահեր եւ խզում է շատ թանկագին կապեր, բայց նրա աչքին չեն երեւում այդ կորուստները, որովհետեւ մի կողմից խթանում է Կանոնագրի պահանջը՝ «ամէն ջանք թափելու», որին նա յանձնառու է դարձած, միւս կողմից կշտամբում կամ

քաջալերում է նահատակ ընկերների թանկագին յիշատակը, որ հսկում է անմար. ընկերներ, որ ոչ մէկ բանով պակաս էին նրանից եւ յաճախ շատ բանով առաւել, եւ որոնք, սակայն մեռան պայքարի ճամբին, կուսակցութեան դրօշը թողնելով իրան: Դաշնակցութիւնն այսպիսով մի ուրոյն բարոյական աշխարհ է, ուրոյն ըմբռնումներով ու բարքերով, որ ստեղծում ու սնուցանում է ուրոյն տիպարներ: Համեմատէք ուրիշ քաղաքական կուսակցութիւններ նրա հետ եւ կը տեսնէք անդնդախոր տարբերութիւնը: Սա ոչ թէ շահակից անձերի միութիւն է, այլ արիացող տիպարների ընկերութիւն: Այս-տեղ ոչ թէ անձնական եւ նիւթական շահն է, որ կապում է մարդկանց, այլ բարոյական ուխտի նոյնութիւնն է, որ դարձնում է ընկեր եւ Ծրագիր-Կանոնագրի միութիւնը՝ համընթաց: Եւ գործի ընթացքին, բուն իսկ մարտիկների շրջանում՝ լինեն նրանք զէնքի թէ մտքի ընկեր, ոչ այնքան Ծրագիրն ու Կանոնագիրն է զգացւում, որքան բարոյական կապը: Դաշնակցութեան պատմութիւնն այնպէս է ընթացել, որ նա դարբնած է աւելի բարոյական տիպարներ, քան պատրաստած է «գործիչներ» բառի սովորական առումով: Եւ շատ անգամ այնպէս է թւում, որ «դաշնակցական» մարդիկ առանց որեւէ Ծրագրի եւ Կանոնագրի կարող են մնալ նոյն բարոյական ընտանիքը, յենուած իրենց ոգեկան կառուցուածքին եւ գաղափարական տիպարին, միշտ ասպետօրէն պատրաստակամ զոհաբերելու իրենց կեանքն ու աշխատանքը հայ ժողովուրդի բարօրութեան համար: «Դաշնակցական» տիպարների այս միութեան մէջ – որ մեր կազմական կեանքի բարձրագոյն արդիւնքն է,– Դաշ-նակցութիւնը դուրս է գալիս կուսակցութեան սահմանից եւ դառնում է ասպետական կարգ: Նրա մէջ արթնացած է եւ արծարծւում է վերստին հին եւ արի հայութեան տոհմական առաքինութիւնը «հասանել մարտնչել» միամիտ եւ միասիրտ

եւ «ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչեւ ի մահ»։ Եւ աւանդական հայ ասպետի հոյակապ կերպարանքն է կարծէք, որ աշխատում է վերակենդանացնել անձնուէր «դաշնակցականը» այսօրուան գետնատարած հայութեան մէջ, այն ազնուական ասպետի – Մուշեղ Մամիկոնեան,– որ «զտիւ եւ զգիշեր կայր յաշխատութեան. ջանայր եւ ճգնէր կալ իր ճակատու պատերազմին... Ի վերայ աշխարհին կեալ եւ մեռանիլ, ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց եւ ի վերայ բնակչաց աշխարհին... զանձն իւր փոխանակ առնել աշխարհին. եւ յանձն իւր անխայէր ի մեռանել». (Փաւստոս. Դ. 21 եւ Ե. 20)։ Եւ միւս հոյակապ ասպետի – Մանուէլ Մամիկոնեան – խրատն է կարծէք տուած իր որդուն.– «Լինել միամիտ (հաւատարիմ), ջանալ եւ վաստակել, եւ տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո» (Փաւստոս. Ե. 44). որ աշխատում են կեանքի մէջ գործ ու տիպար դարձնել Սերոբներն ու Գէորգ Չաւուշները՝ մթին գիւղերից եւ Ռոստոմներն ու Քրիստափորները՝ լուսաւոր քաղաքներից։ Այս միտումով Դաշնակցութիւնը մի հրաշափառ յարութիւն է հայի արութեան եւ մի թօթափում ստրկական շղթաների։ Ժողովուրդից է նա եւ ժողովուրդի համար, բայց ժողովուրդ չէ։ Իր գերագոյն նպատակն է ստեղծել մի հայ ժողովուրդ իր տիպարի նման, ինչպէս ինքը վերստեղծումն է հայ աւանդական տիպարի, որ խաթարուած էր դարաւոր ստրկութեան մէջ։ Միացեալ եւ Անկախ Նոր Հայաստանին պատշաճ է նոր հայութիւն. նոր հայութիւնը միայն կարող է նոր Հայաստան ունենալ. եւ Դաշնակցութիւնն աշխատում է այդ նոր հայի տիպարն ստեղծել՝ նոր Հայաստանին հասնելու համար։

***

Եթէ ամէն մի դաշնակցական լրիւ գոհացում տայ կանոնագրի հինգ պահանջներին միաժամանակ, կարող են կարծել, որ այդ դէպքում մենք կ'ունենանք միօրինակ տիպարների մի ճանձրալի բազմութիւն։ Կրկնելով միեւնոյն տիպարը, այդ միօրինակութիւնը թւում է թէ պէտք է իշխէր ժամանակի եւ տարածութեան մէջ, այսինքն ամէն տեղ նոյն տիպարները եւ ամէն ժամանակ նոյն տիպի մարդիկ։ Սակայն, այդպէս չէ իրօք. Դաշնակցութիւնը բազմազան տարբերութեանց ցուցահանդէս է։ Դաշնակցականները նման տիպարներ են, ո՛ւր եւ ե՛րբ հանդիպեն, բայց նոյն տիպարները չեն։ Ինչպես եռանկիւնները եռանկիւնի են ամէն տեղ, բայց մեծ ու փոքր, սուրն ու բութը, ուղղածիրն ու կորածիրը։ Ամէն մի դաշնակցական շարժւում է իր տիպարի ուղղութեամբ, բայց ոչ ամենքը նոյն արագութեամբ եւ նոյն տեղն են հասած։ Ամէն մէկն աշխատում է «ամէն ջանք թափել», բայց ոչ ամենքը նոյն գործերի մէջ եւ ոչ նոյն չափով։ Իր էութեան մէջ անգամ – իր Ծրագրի եւ Կանոնագրի մէջ – Դաշնակցութիւնն անշարժ կուսակցութիւն չէ։ Ոչ միայն իր գործերն են փոխւում, այլ եւ ինքը իբր գործող։ Քառասուն տարուայ ընթացքին ոչ միայն մարդիկ են փոխուած, այլ եւ նրանց հմտութիւնները։ Այդ փոփոխութիւնն է Դաշնակցութեան ներքին պատմութիւնը, անկախ նրա գործերից, որ նրա արտաքին պատմութիւնն են կազմում։ Փոփոխուելով միասին՝ Դաշնակցութիւնը մնում է մի կուսակցութիւն եւ իր բնոյթով նոյն կուսակցութիւնը։ Միաժամանակ նա ամենից աւանդապահ կուսակցութիւնն է եւ այդ աւանդութեան մէջ է իր միութեան եւ նոյնութեան գաղտնիքը։ Նա այ՛ն չափով անփոփոխ չի մնում, որ հինանայ եւ անպէտքանայ հանրային կեանքի ղեկավարութեան համար եւ այդ իսկ պատճառով դուրս նետուի կեանքից, բայց եւ այ՛նքան չի փոփոխւում յեղյեղուկ, որ վստահութիւն չներշնչէ իբր յենարան կամքերի եւ լծակ՝ գործերի։ Նա

իր բնոյթով մնում է նոյնը, բայց յարմարւում է կեանքին: Եւ որքան խստօրէն աշխատում է հաւատարիմ մնալ իր աւանդութեանց, այնքան լրջօրէն յարմարւում է կեանքին: Նա նման է մարդկային լեզուին: Ամէն ոք աշխատում է ճշտօրէն խօսել իր լսած լեզուն եւ հարազատ մնալու ճիգով՝ փոխւում է լեզուն, ու մի օր տեսնում են գրաբարը դարձած է աշխարհաբար, թէեւ 1500 տարի բոլոր զաւակներն աշխատած են իրենց մօր լեզուն խօսել հաւատարմութեամբ: Երկուսն էլ հայոց լեզու են, բայց տարբեր են արդէն. նման են, բայց նոյնը չեն: Այս է բնական ճամբան ամէն մի բարեշրջութեան: Ամէն փոփոխութիւն ոչ թէ բեկումն է այստեղ, այլ հոսում. ոչ յեղաշրջում, այլ բարեշրջում: Ձգտելով յեղաշրջել հայոց կեանքի պայմանները, Դաշնակցութիւնը ներքուստ բարեշրջւում է, ուստի նա մնում է մի եւ նոյն, թէեւ փոփոխւում է շարունակ: Կանոնագրի հինգ պահանջները շարունակում են մնալ պարտադիր, բայց գոհացւում են տարբեր եղանակով ու բովանդակութեամբ:

Այս երեւոյթը ընկերաբանական է եւ արժէ կանգ առնել իր մեկնութեան վրայ: Այս ի՞նչպէս է, որ Դաշնակցութիւնը մնում է նոյնը, բայց եւ փոփոխւում է շարունակ՝ յարմարուելով կեանքին ու միջավայրին: Հիմնական պատճառը իր կատարած գործն է: Միշտ հաւատարիմ իր Ծրագրին ու Կանոնագրին՝ Դաշնակցութիւնը յղանում ու կատարում է գործեր, որ իր համոզումով տանում են դէպի Ծրագրի իրացումը: Անկախ ձեռնարկի ելքից – յաջող կամ անյաջող – այդ գործի համար մշակած մասնաւոր ծրագիրն ու որոշումները՝ գործի վախճանին՝ դառնում են աւելորդ. նրանք յղացումներ ու վճիռներ չեն այլեւս, այլ իրացած փաստեր: Այդ իրացած փաստերի հետեւանքով փոխւում է կացութիւնը: Կեանքի մէջ ստեղծւում է մի փաստ, որ առաջ չկար. եւ կուսակցութիւնը

կատարած է արդէն մի գործ, որ առաջ չունէր։ Նա հիմա մի որոշ գործ կատարած կազմակերպութիւն է։ Ընկերները հիմա ունեն մի գործի փորձառութիւն, որ առաջ չունէին։ Ուրիշ ընկերներ աջակցած են արդէն մի որոշ գործի, որի մասին առաջ լուր իսկ չունէին։ Եւ շրջապատը, որ առաջ մի որոշ վերաբերում ունէր դէպի կուսակցութիւնը, այս նոր գործից յետոյ փոխում է իր վերաբերումը դէպի լաւը կամ վատը, նայած թէ կատարուած գործը բարիք է համարում, թէ չարիք։ Գործից շահողն ու տուժողը տարբեր վերաբերում են մշակում դէպի գործողը։ Մի խօսքով փոխւում է կացութիւնը ներքուստ եւ արտաքուստ. կուսակցութիւնն՝ իր գործով, որ նոր դրուագ է դառնում իր հին պատմութեան, գործողն՝ իր ձեռք բերած փորձառութեամբ. աջակից ընկերներն՝ իրենց օժանդակութեամբ, շրջապատն՝ իր վերաբերումով։

Ձեռնարկւում է հերթական գործը Ծրագրի իրացման համար. կազմակերպւում է նոր ձեռնարկը, բայց արդէն տարբեր են պայմանները ներքուստ եւ արտաքուստ։ Թէ յղացողն ու որոշողը եւ թէ գործադրողը փոխուած են արդէն, նրանք նոյն մարդիկն են գուցէ, բայց արդէն փորձառու են։ Գործի ծրագիրն ու որոշումները նոյնը չեն, ինչ որ առաջ, քանի որ ձեռնարկն ինքը նոր է եւ տարբեր, բայց հին փորձառութիւնն ազդում է նոր ծրագրի եւ որոշումների վրայ։ Սրանք նոր մտայնութեան արդիւնք են, որ ինքն արդէն արդիւնք է նոր փորձառութեան։ Կուսակցութիւնն իրան զգում է աւելի փորձառու, քան նախորդ գործի ժամանակ, ուստի աւելի ինքնավստահ է կամ աւելի զգուշաւոր իր նոր որոշումների մէջ, նայած թէ նախորդ գործը յաջո՞ղ թէ անյաջող ելք է ունեցած։ Նոյն ելքի հետեւանքով՝ նոր ծրագիրը կազմւում է աւելի լայն կամ աւելի նեղ չափերով։ Մի խօսքով՝ կուսակցութիւնը նոյնն է, բայց կուսակցականը

փոխուած է. իր նախորդ գործը մի փաստ է արդէն թէ՛ հանրային կեանքի մէջ եւ թէ՛ կուսակցականի եւ հանրութեան գիտակցութեան մէջ: Եթէ նախորդ ձեռնարկը մի ահաբեկում էր, այսօր ահաբեկուածը չկայ այլ եւս: Գործի պայմանները փոխուած են արդէն: Եթէ ահաբեկուածը խուզարկութիւն էր կատարում շարունակ՝ նրան փոխարինողը զգուշանում է. դրա հետեւանքով զէնքի փոխադրութիւնը դիւրանում է: Իսկ եթէ նորեկն աւելի դաժան է՝ հալածանքները խստանում են, կացութիւնը վատթարանում է, ընկերները բանտարկւում են, ոմանք նահատակւում են, ուրիշները խուսափում են. բուսնում են մատնիչներ եւ այլն եւ այլն: Այսպէս ուրեմն գործերի հետեւանքով փոփոխւում է կացութիւնը – գործիչներն ու շրջապատը, փորձն ու մտայնութիւնը եւ դրա հետեւանքով նոր որոշումներ են կայացւում եւ գործելու նոր ճամբաներ գծւում: Բայց հիմնականը մնում է նոյնը այս դէպքում: Ծրագիր ու Կանոնագիր փոփոխութիւն չեն կրում. փոխւում են միայն մարդիկ, որուշումներն ու ձեռնարկները: Կուսակցութիւնը նոյնն է իր Ծրագրով ու Կանոնագրով, բայց փոխուած են իր որոշումները, գործերն ու անդամները:

Ոչ միայն մենք ենք, որ փաստեր ստեղծելով ազդում ենք մեզ եւ ուրիշի վրայ, այլ եւ ուրիշ միջավայրերում ստեղծում են փաստեր, որ ազդում են մեզ ու մեր միջավայրի վրայ: Ծագում է համաշխարհային պատերազմը՝ ոչ մեր կամքով ու որոշումով: Ստեղծւում է անկախ Հայաստանի մի համեստ կորիզ: Փոխուած են միջավայրի պայմանները. փոխւում են գործերն ու գործիչները: Նոյն «դաշնակցական» մարդիկն են, բայց պէտք է ուրիշ գործեր յղանան եւ ուրիշ որոշումներ կայացնեն: Հին փորձառութիւնն օգտագործւում է նոր յղացումների համար, հին գործիչները՝ նոր գործերի համար, կատարած գործերն ազդում են մշակուող ծրագրների

վրայ։ Հիմնական ծրագրի պահանջները հիմա մեզնից է կախուած գործադրել. մի մասն իրանում են անմիջապէս, միւս մասը հերթի են սպասում։ Բայց ստեղծուած կացութիւնն այն չէ, որ ակնկալած կամ նախորոշած էր Ծրագիրը։ Նա պահանջում էր դաշնակցականօրէն միացած Կովկաս՝ Ռուսաստանին դաշնակցօրէն միացած։ Բայց Ռուսաստան չկայ, որ Հայաստանը նրա հետ դաշնակցօրէն միանայ, եւ ոչ Կովկաս գոյութիւն ունի, որ Հայաստանը դաշնակցաբար միանայ նրան։ Թաթար ու վրացի անջատ միաւորներ են դարձած։ Նոյն Դաշնակցութիւնն է, նոյն Ծրագրով ու Կանոնագրով, բայց պայմանները փոխուած են։ Բազմահազար զանգուածներ – դաշնակցական, համակիր, գործակից, սոսկական հայեր՝ առանց կուսակցական պիտակի՝ բոլորուած են Դաշնակցութեան շուրջը եւ գործում են նրա ղեկավարութեան տակ։ Ծնունդ են առնում նոր տենչեր, բացւում են նոր հորիզոններ այն բարձրունքից, ուր հասած է հայութիւնը պատմական դէպքերի ալիքներով վերացած, ինչպէս մէկը, որ հասնում է մի լերան գագաթ։ Կատարուած գործերը վստահութիւն են ներշնչում զանգուածներին եւ վարիչներին, կացութիւնը հզօր թելադրանքներ է անում եւ կեանքի անդիմադիր բերումով փոփոխութեան է ենթարկւում ամենից աւելի անփոփոխելին – կուսակցութեան Ծրագիրը։ Ինքնավար, դաշնակցական Կովկասին եւ նրանով Ռուսաստանին կապուած Հայաստանի գաղափարը մթագնում է մարդկանց գիտակցութեան մէջ եւ նրան փոխարինում է Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը։ Փոխւում է կուսակցութեան դերն ու դիրքը հայ կեանքում ներքուստ եւ աշխարհի մէջ՝ արտաքուստ։ Մշակւում է մի նոր Կանոնագիր, որ սահմանում է պետական մարմինների եւ կուսակցութեան յարաբերութիւնը։ Ծրագիրը դառնում է դրդիչ բազմատեսակ գործառնութեանց ու ձեռնարկների։ Նոյն կուսակցութիւնն

է դարձեալ, բայց արդէն փոփոխ Ծրագրով, Կանոնագրով ու գործերով։ Այսպէս ուրեմն կատարած գործը ինքնին սկզբունք է փոփոխութեան եւ վերակազմութեան։

Բայց ինչն է, սակայն, որ այս բոլոր փոփոխութեանց մէջ կայուն է պահում կուսակցութիւնը եւ կազմակերպութիւնը.– դաշնակցական տիպարների նոյնութիւնը նախորդ գործիչ-ների համեմատութեամբ։ Անկախ գործերի տեսակից ու չափից՝ դաշնակցականները մնում են նոյն տիպարի մարդիկ, նոյն բարոյական կառոյցները. աշխատաւոր հայ ժողովրդի անկաշառ եւ անձնուէր սպասաւորներ, որ ենթակայ են նոյն Կանոնագրին եւ հետամուտ են նոյն Ծրագրի իրացման։ Կուսակցութիւնը փոփոխած է իր Ծրագրի մի մասը եւ յա-ւելում բերած է իր Կանոնագրին, բայց ասպետական կարգի բարոյական խարիսխները նոյն են մնացած եւ անդամների տիպարները իրենց բարոյական էութեամբ անփոփոխ են տեւապէս։ Ըստ էութեան նոյն Դաշնակցութիւնն է ամէն տեղ եւ նոյն դաշնակցականները, որ «ամէն ջանք թափում են» Կանոնագրի հինգ կէտերին գոհացում տալու։

Կազմակերպական փորձառութիւնը, որ ձեռք է բերուած համեստ խմբերի եւ մարմինների մէջ, դառնում է զօրաւոր ազ-դակ հանրային մեծ շարժումներ վարելու գործում։ Շարժում-ները փոխում են իրենց ընթացքը, դառնում են նպաստաւոր կամ աննպաստ, բայց կուսակցութիւնն իր էութեան մէջ մնում է նոյնը եւ «դաշնակցականը» հաւատարմօրէն կրկնում է նախորդ տիպարների հիմնական գծերը։ Այս տեսակէտով ոչ այնքան գործերն են կարեւոր, որքան կազմակերպութիւնը եւ կան օրեր երբ պէտք է գործերը լքել, կազմակերպութիւնը պահելու համար։ Կարճամիտներին կարող է թուալ, որ սա կը նշանակէ միջոցն աւելի գերադասել, քան նպատակը,

բայց իրական կեանքն եւ ուղիղ դատումը մեզ տարբեր բան են ասում։ Կազմակերպութիւն ունենալով միշտ կարելի է գործեր կատարել, բայց կազմակերպութեան գոյութիւնը վտանգելով, Ծրագիրը կը մնայ անտէր եւ անտիրական եւ հանրային գործերը կը ստանան «բնական» ընթացք։ Եւ ճիշտ այս է պատճառը, որ հայ ժողովրդի ներքին եւ արտաքին թշնամիները գիտակցաբար թէ անգիտակցաբար, ամէն կերպ աշխատում են քայքայել Դաշնակցութիւնը, որովհետեւ լաւ գիտեն թէ քանի նա կայ, միշտ կարող է «գործեր» ստեղծել, իր Ծրագրին հետամուտ եւ Կանոնագրին ենթակայ, իսկ եթէ նա վերանայ՝ հայութեան կեանքը ցրիւ եւ անկազմակերպ գործերի մի պղտոր ջուր կը դառնայ, ուր ամէն ոք կարող է իր ուզած ձուկը որսալ։

Այսպիսով Կանոնագրի հինգ պահանջները, որ առաջին նուագ թւում են այնքան համեստ ու հասարակ, իրօք մեծարժէք են ոչ միայն կուսակցական, այլ եւ հանրային տեսակէտով։ Եւ այդ պահանջների ամենօրեայ կատարումը, որ ոմանց թւում է աննշան ու տաղտկալի, իրօք այն մուրճն է, որ դարբնում է կուսակցութեան պողպատը, դարձնելով նրան հատու զէնք ընկերային պայքարների մէջ։ Այդ պահանջներին հաւատարմօրէն գոհացում տալով է, որ կուսակցութիւնը մնալով միշտ նոյն՝ ենթարկւում է արդիւնաւոր փոփոխութեանց եւ տեւաբար յարմարուելով կեանքին՝ չի գուլանում ու ժանգոտում խաղաղ օրերին։

Այս տեսակէտով ամէն մի «դաշնակցական» կոչուած է նոյն դերը խաղալու կուսակցութեան մէջ, ինչ որ նրա հիմնադիրներն ու յետագայ պահնորդները։ Մի խումբ նոյն տենչերն ունեցող մարդիկ ժամանակին մշակած են մի քաղաքական-տնտեսական յեղաշրջման իրագործելի Ծրա-

գիր։ Իրենց Ծրագրի իրացմանը հասնելու համար նրանք կազմած են մի Կանոնագիր եւ հերթական ձեռնարկների համար հանած են որոշումներ, տրամադրած են շատ համեստ դրամական միջոցներ եւ աշխատած են իրենց գաղափարները տարածել եւ կուսակիցներ գտնել, անձամբ «ամէն ջանք թափելով» իրենց Ծրագրի, Կանոնագրի եւ որոշումների իրագործութեան համար, կանգ չառնելով մինչեւ իսկ մահուան առջեւ։ Նոյնը վիճակուած է անելու եւ յետագայ անդամներին։ Ընկերներ նրանք գտնում են խմբի մէջ, որոնց թիւը պարտաւոր են աւելացնել. Ծրագիրը նրանք գտնում են պատրաստ, բայց ոչ կոչուած են փոխելու՝ յամարելով կեանքի բերումին. ենթակայ են մի Կանոնագրի, որ կարող են փոփոխութեան ենթարկել՝ ընկերների հետ համախորհուրդ, կատարում են որոշումներ, որ իրանք են հանած կամ իրենց ընկերները՝ համախորհուրդ իրանց հետ. կուսակցական տուրք են վճարում եւ պարտաւոր են «ամէն ջանք թափել» իրացնելու իրենց Ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները։ Այսպիսով ոչ միայն աւանդ են ստանում, այլ եւ աւանդ են ստեղծում նախորդների պէս։ Ոչ միայն հաւատարմութեամբ պահում են աւանդը, այլ եւ հաւատարիմ մնալու համար փոփոխում են շարունակ։ Այսպիսով, ըստ էութեան, կրկնւում են ոչ միայն դաշնակցական տիպարները, այլ եւ նրանց պարտականութիւնն ու դերը կուսակցութեան մէջ։ Դաշնակցութեան անդամակցիլ, «դաշնակցական» կոչումն իրաւամբ առնել իր վրայ նշանակում է աշխատել, որ ընկերային զօրաւոր ազդակը – Դաշնակցութիւնը – տեւապէս մնայ զօրաւոր՝ իր ընկերային յեղափոխական դերը կատարելու մեր կեանքում։ Ամէն մի «դաշնակցական» կոչուած է Սասունցի Դաւթի նման «թուր կայծակին» շարժելու Մսրայ Մելիքի դէմ. նա պարտաւոր է հոգալ թէ իր բազկի զօրութեան մասին՝ բարոյական տիպարը մշակելով

իր մէջ եւ թէ կայծակէ թուրի զօրութեան մասին՝ «ամէն ջանք թափելով», որ նա չգուլանայ եւ չժանգոտի անտեղի եւ անվայել գործերի մէջ, այլ միշտ սրբած ու պատրաստ՝ ասպետական անշահախնդիր ձեռքի մէջ, օրհասական պայքարների օրերին՝ իջնի թափով ու զարկէ սարսափով...

Ահա թէ ինչ են թելադրում Կանոնագրի երկու չոր ու ցամաք յօդուածները

***

Մեր կուսակցութիւնը կոչւում է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն: Իր կազմութեան օրերին նրա անունն էր «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»: Նոյն նպատակին ձգտող, բայց տարբեր խմբակցութեանց պատկանող հայ յեղափոխականներ, դաշնակցելով իրար հետ ընդհանուր գործի համար՝ կազմեցին մեր կուսակցութիւնը: Այսպիսով իր կազմութեան օրերին նրա նպատակը գործնական էր: Նա ոչ այնքան հետամուտ էր ամէն կողմից համամիտ մարդիկ գտնելու եւ բերելու իրար քով, որքան նոյն գործին ու նպատակին ձգտող յեղափոխականներ դարձնելու իրար դաշնակից: Այս պատճառով նա գործեր ունեցաւ, առաջ քան Ծրագիր ունենար: Դրանք տարբեր մտայնութիւնն ունեցող մարդիկ էին, բայց բոլորովին նոյն գործին ու նպատակին էին հետամուտ. այդ նպատակը տաճկապատկան Հայաստանի ազատագրութիւնն էր: Մտածումի նոյնութիւնն այսպիսով նախապայման չէր կուսակցութեանն անդամակցելու: Ծրագրի ընդհանուր գծերը նոյն էին եւ պատճառաբանութիւնն ընդհանրապէս նոյն հիմքերն ունէր, բայց այդ հանգամանքը առաջնակարգ նշանակութիւն չունէր. կարեւորը գործն էր: Ով որ ձգտում էր հայ ժողովուրդի ազատագրութեան եւ

գործնապէս աշխատում էր այդ նպատակի համար, դրանով իսկ իրաւունք էր ստանում Դաշնակցութեան անդամակցելու։ Ժողովուրդի խաւերից դուրս եկած գործիչները բնաւ մտահոգ չէին այն մասին թէ ի՞նչն է իրենց պայքարի վերջնական նպատակը. «ազատութիւն», ասում էին նրանք եւ զէնք առնում, անցնում երկիր՝ հարստահար ժողովուրդին օգնելու համար եւ հայերին ազատելու թիւրքի լուծից։ Մտաւորական խաւն էր, որ երբեմն գրամարտ էր մղում Ծրագրի համար. մարտիկը գիտէր իր թշնամին իբր թիւրք եւ գնում էր նրա ձեռքից հայ ազատելու։

Կուսակցութեան գործնական բնոյթը արգելք էր դառնում ծրագրային խնդիրների վրայ երկարօրէն կանգ առնելու եւ այդ կարգի հարցեր քննում էին ու նրանց շուրջը պայքար ստեղծում առաւելապէս այն մարդիկ ու խմբակցութիւնները, որ գործի մէջ թերանում էին։ Դաշնակցութեան հիմնադիրներն անգամ Ծրագրային խնդիրների մէջ շատ բարակը չէին մանում։ Ընդհանրապէս պարզ էր շարժման նպատակը – այդքանը բաւ էր գործեր յղանալու, կազմակերպելու եւ վարելու համար։ Ոչ թէ չէին գիտակցում Ծրագրային խնդիրների արժէքը, այլ չէին կարծում, որ նրանց մանր քննութիւնն ու լուծումը գործնական յեղափոխութեան համար անխուսափելի անհրաժեշտութիւն լինէր։ Այս պատճառով մի որեւէ յեղափոխական ձեռնարկի ծրագիրն աւելի շատ ժամանակ էր խլում եւ աւելի մեծ վիճաբանութեանց տեղիք տալիս, քան բովանդակ կուսակցութեան ընդհանուր Ծրագրի մշակումը։ Հաւանօրէն ամենքը մտածում էին. «նախ ազատագրուենք, յետոյ կը տեսնենք թէ ինչպէս պէտք է կազմակերպել ժողովուրդի կեանքը»։ Այս գործնական ոգին մեր կուսակցութեան հիմնական յատկութիւնն է եղած սկզբին եւ շարունակում է մնալ մինչեւ այսօր։ Ծրագրային

խնդիրները հիմա շատ աւելի արժէք ունեն, քան առաջ, բայց շարունակում են նուազ արժէք ունենալ, քան գործնական յեղափոխական խնդիրները։

Սկզբում կուսակցութիւնը կոչւում էր «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն», բայց շուտով դարձաւ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»։ Այս հանգամանքը անհետեւանք չմնաց յետագային։ Կուսակցականների գիտակցութեան մէջ Դաշնակցութիւնն իբր յեղափոխական կուսակցութիւն սկսաւ ձեւաւորուել աւելի, քան իբր յեղափոխականների դաշնակցութիւն։ Ուշադրութիւնը՝ ժամանակի ընթացքին՝ կուսակցութեան անդամների որակից անցաւ բուն իսկ կուսակցութեան բնոյթին։ Ոչ այնքան յեղափոխականների դաշնակցութիւն, այսինքն յեղափոխական մարդկանց միութիւն, այլ յեղափոխական դաշնակցութիւն, այսինքն յեղափոխական մի որոշ Ծրագիր հետապնդող կուսակցութիւն, որ ունի յեղափոխական գործելակերպ։ Եւ աստիճանաբար Դաշնակցութիւնը դարձաւ ոչ թէ առհասարակ յեղափոխականների միութիւն, այլ դաշնակցական իմաստով յեղափոխականների կազմակերպութիւն։ Հիմա նա նոյն մտածումն ու Ծրագիրն ունեցող յեղափոխականներու կուռ միութիւն է եւ ոչ թէ նոյն նպատակն ունեցող յեղափոխականների դաշնակցութիւն։ Հիմա մեր նպատակներն ունեցող մարդիկ, որ գործակցում են մեզ, դրանով չեն դառնում «դաշնակցական». նրանց մենք այսօր համարում ենք գործակիցներ, համակիրներ, աջակիցներ, օժանդակներ, բայց ոչ կուսակցականներ եւ մեր կազմակերպութեան անդամներ։ Մենք չենք մերժում նրանց գործակցութիւնն ու աջակցութիւնը, բայց նրանց տարբերում ենք մեզանից։ Մենք նրանց նոյնպէս յեղափոխական ենք համարում, բայց ոչ դաշնակցական։

Նրանց «յեղափոխական» ճանաչելու հետեւանքով է, որ մենք ընդունում ենք նրանց գործակցութիւնը եւ հնար ենք տալիս մեր կազմակերպութեան մէջ եւ մեր դրօշի տակ հետապնդելու իրենց նպատակները, որ նաեւ մերն են, բայց մենք նրանց զատում ենք մեզանից եւ չենք համարում մեր կուսակցութեան անդամ: Այսպիսով, ոչ ամենքը, որ յեղափոխական են, դրանով իսկ դաշնակցական են եւ ոչ ամենքը, որ ձգտում են հայ ժողովուրդի ազատագրութեան յեղափոխական ճանապարհով՝ դրանով իսկ մեր կուսակցութեան անդամ են: Կուսակցութիւնը հիմա գործակցում է այլամիտների հետ, բայց չի նոյնանում նրանց հետ իբր նոյն կուսակցութիւն: Գործնական խնդիրները գերադաս են այսօր, ինչպէս որ էին երէկ, բայց նրանք բնաւ չեն համարում կուսակցական միակ շաղախը՝ իր անդամներին զօդելու համար: Մի ժամանակ մեզ գործակցողը, թէկուզ եւ չլինէր համախոհ, համարում էր կուսակից. այսօր կուսակից է նա, որ ոչ միայն գործակցում է մեզ, այլ եւ համախոհ է մեզ:

Այս հանգամանքը մեր կուսակցութիւնը դարձնում է մի կուռ միութիւն եւ մեծապէս նպաստում է նրա ներքին ուժին եւ կարգապահութեան: Նա վերացնում է նախօրէն ամէն տարտամութիւն եւ դրանով անհնարին է դարձնում ամէն ներքին քայքայում: Որովհետեւ գործն ու նպատակը մեծ ազդակներ են մարդկանց միացման համար, բայց աւելի մեծ ու զօրաւոր ազդակներ են մտածումի եւ նկարագրի նոյնութիւնը: Սրանով «գործակիցները» տարբերւում են «ընկերներից»: Գործակիցները լաւագոյն դէպքում հաւատարիմ են նոյն գործին, իսկ «ընկերները» նոյն կուսակցութեան, որ ոչ միայն այդ գործն ունի, այլ եւ շատ ուրիշ գործեր: Գործերի յաջող կամ անյաջող վախճանը կարող է երկարատեւ կամ կարճատեւ դարձնել գործակցութիւնը, բայց կուսակցական

ընկերների կապը մնում է ամուր եւ անխորտակելի թէ լաւ, թէ վատ օրերին: Ու թէեւ մեր կուսակցութիւնն ալ եւս չի կոչւում «Հայ յեղափոխականների դաշնակցութիւն», բայց նա մնում է եւ պէտք է մնայ իբր «յեղափոխական Դաշնակցութիւն»: Մարդկանց միջեւ հիմա ընտրանք ենք անում, բայց գործի բնոյթը պահում ենք նոյնը: Դաշնակցութիւնը հիմա այլազան յեղափոխականների միութիւն չէ, այլ նոյնամիտ ու նոյնատիպ յեղափոխականների ընկերութիւն: Շեշտը հիմա մենք դնում ենք «յեղափոխական» բառի վրայ, որ մեզ համար ուրոյն բովանդակութիւն ունի եւ բովանդակ կուսակցութեան բնոյթն ենք ուզում շեշտած լինել աւելի, քան նրա անդամների բնոյթը: Մենք հիմա տարբեր տիպար ենք եւ տարբեր մտայնութիւն յեղափոխականների շրջանում, առաջ միայն յեղափոխական էինք ոչ յեղափոխական հանրութեան մէջ: Հիմա մենք «դաշնակցական» յեղափոխականների կուսակցութիւն ենք, աւելի լաւ է ասել՝ «ընկերութիւն» ենք, ինչպէս խորին իմաստութեամբ կոչած է հայ ժողովուրդը՝ մեզ անուանելով «ընկերութեան մարդիկ»:

***

Մեր կուսակցութիւնը կոչւում է «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»: Իր հայ բառով նախորոշուած է մեր կուսակցութեան հիմնական գծերից մի քանիսը: Նա ուրեմն մի հայ կուսակցութիւն է: Այս կարճ բառը ընդարձակ մեկնութեան տեղիք է տալիս:

Լինելով հայ կուսակցութիւն, դրանով իսկ Դաշնակցութիւնը սահմանափակ կուսակցութիւն է. իր կազմակերպական դաշտը վերջանում է այնտեղ, ուր վերջանում է հայ ժողովուրդը: Պատահաբար որեւէ այլազգի կարող է անդամ

լինել Դաշնակցութեան, բայց կուսակցութեան նպատակը հայ յեղափոխական տիպարների եւ ճիգերի կազմակերպութիւնն է եւ հայ յեղափոխական գործի ղեկավարութիւնը: Նա մի որոշ տեղ ամփոփուած կազմակերպութիւն չէ, որովհետեւ ամփոփ չէ ինքը հայութիւնը. նա հայութեան մէջն է եւ նրանից է իր սնունդն ստանում՝ նիւթական թէ բարոյական, ուստի գնում է հայութեան յետեւից՝ թէ՛ նրան եւ թէ՛ իրան մենակ չթողնելու համար: Նա կարող է այլազգի կազմակերպութեանց համակիր ու գործակից լինել, բայց նա ինքն իր մէջ մնում է հայկական եւ օտար կազմակերպութիւններից զատում է իբր ուրոյն ազգի կազմակերպութիւն: Իր ժողովրդի ներսը նա զատում է միւս կազմակերպութիւններից իր մտածումով, Ծրագրով, Կանոնագրով ու գործելակերպով, իսկ օտարներից իր ազգային պիտակով՝ ամենից առաջ: Նա որեւէ միջազգային յեղափոխական կուսակցութեան ազգային հատուած չէ, այլ ինքնուրոյն եւ անկախ կուսակցութիւն է մի ուրոյն ազգի: Ազգի ուրոյնութիւնը սահմանն է Դաշնակցութեան, ինչպէս ինքն իր գոյութեամբ զօրավիգ է ազգի ուրոյնութեան: Ազգի ինքնութեան արտայայտիչներից մէկն է նա: Ինչպէս հայ եկեղեցին հայութեան ուրոյն կազմակերպութիւնն է տիեզերական քրիստոնէութեան, այնպէս էլ Դաշնակցութիւնը հայութեան ուրոյն կազմակերպութիւնն է տիեզերական յեղափոխութեան: Իր հիմքերով տիեզերական՝ Դաշնակցութիւնը է եւ մնում է ազգային եւ հայ՝ իր ծաւալման սահմաններով: Համաշխարհային յեղափոխական մտքի հայ գործակալն է Դաշնակցութիւնը հայոց ազգի շրջանում: Համաշխարհային ազատագրական շարժման գործավարն է նա հայութեան մէջ: Իբր մարդ՝ նա օտար չէ մարդկային իրաւական եւ ընկերային գերագոյն ըմբռնումներին, բայց այդ ըմբռնումները նա ձգտում է իրացնել հայ կեանքի մէջ եւ հայերի ձեռքով: Սրա համար նա համակիր է յեղափո-

խական շարժումների ուր եւ պատահեն եւ աջակից է նրանց, ուր հասնում է իր ձեռքը։ Բայց դրանով չի նոյնանում նրանց հետ իր Ծրագրով ու Կանոնագրով, այլ նման է բնոյթով՝ սակայն անջատ իր գործի միջավայրով եւ անդամներով։

Այս հայ բառի իմաստը ուրոյն բովանդակութիւն է ստացած Հայաստանի Հանրապետութեան ստեղծումի ընթացքին եւ այնուհետեւ։ Մեր Ծրագիրը պահանջում էր երկու լայնօրէն ինքնավար հայ շրջաններ՝ մէկը Ռուսաստանում եւ միւսը Տաճկաստանում։ Նա պահանջում էր Կովկասի հայաշատ գաւառները զատել վարչապէս ու դարձնել մի ինքնավար շրջան, իսկ Տաճկաստանի հայաշատ գաւառները զատել վարչապէս ու դարձնել մի ուրիշ ինքնավար շրջան։ Կովկասի ինքնավար շրջանը նա պահանջում էր դաշնակցօրէն կապել թաթարական եւ վրացական ինքնավար շրջանների հետ եւ իբր մի դաշնակցօրէն կապուած վարչական միաւոր՝ դաշնակցական կապերով կցել Ռուսաստանին, իսկ Տաճկաստանի հայաբնակ ինքնավար շրջանը անմիջօրէն կապել Տաճկաստանին։ Այսպիսով մենք պահանջում էինք ինքնավար երկու շրջան վարչապէս զատ եւ քաղաքականապէս անանջատ։ Մենք ձգտում էինք թէ՛ Թիւրքիայում եւ թէ՛ Ռուսաստանում ներքնապէս անկախ լինել մեր գործերի մէջ եւ արտաքուստ միացած. պետական հանուր գործերը թողնել պետութեան եւ շրջանի ներքին գործերը վարել մեր ձեռքով։ Այս ծրագիրը մերժում էին ամենքը, քանի դեռ ծրագիր էր միայն. այսօր երբ իրացած է, մերժում ենք մենք, նրա յղացողներն ու մշակողներս եւ պաշտպանում են նրանք, որ երբեմն մերժում էին չարաչար։

Նախորդ Ծրագրով մենք մի ազգային կուսակցութիւն էինք, մեր կազմակերպութեան եւ պահանջների տեսակէտով,

որ գործում էին տարբեր պետութեանց մէջ։ Կուսակցութեան միութեան հիմունքը հայ ժողովուրդի միութիւնն էր, որ ապրում էր անջատ՝ Ռուսաստանում եւ Թիւրքիայում երկու տարբեր իրաւական կարգերի տակ, երկու տարբեր ընկերային եւ տնտեսական պայմանների մէջ, երկու տարբեր ցեղագրական միջավայրում։ Հայութիւնը մէկ էր իբր ժողովուրդ, բայց զատ էր իբր քաղաքացի. եւ այս պատճառով Դաշնակցութիւնը մէկ էր իբր հայ կազմակերպութիւն, բայց զատ էր իբր տարբեր երկրների կուսակցութիւն։ Նա Թիւրքիայում մէկն էր Թիւրքիայի կուսակցութիւններից եւ Ռուսաստանում մէկը Ռուսաստանի կուսակցութիւններից։ Նա մէկ էր իբր հայ դաշնակցութիւն, բայց երկու էր իբր տարբեր պետութեանց քաղաքական ազդակ։ Նրա նպատակը միեւնոյն հայ ժողովուրդի քաղաքական եւ տնտեսական բարեկեցութիւնն էր, բայց երկու տարբեր երկրների մէջ։ Երկու երկրի մէջ եւս նա յեղափոխական կուսակցութիւն էր եւ հետամուտ էր միապետական կարգերի վերացման. երկու վայրերում եւս բնական դաշնակիցներ էր այն բոլոր կուսակցութեանց ու հոսանքների, որ նոյն նպատակն ունէին այդ վայրերի մէջ։ Այդ է պատճառը, որ նա գործակցում էր ուրիշ յեղափոխական կուսակցութեանց հետ Ռուսաստանում եւ Երիտասարդ Թուրքերի հետ Տաճկաստանում։ Որովհետեւ Դաշնակցութիւնը լինելով մի եւ անբաժան՝ միաժամանակ՝ Թիւրքիայի ներքին քաղաքական ազդակներից մէկն էր, ուստի մասնակցում էր այդ երկրի ներքին յեղափոխական եւ քաղաքական խնդիրների լուծման. նոյն պահուածքն ունէր նա եւ Ռուսաստանում։ Նա յեղափոխական էր թէ՛ Ռուսաստանում, թէ՛ Տաճկաստանում եւ այդ երկրների ազատասէր քաղաքացին լինելով՝ նա ռուս հայրենասէր էր Ռուսաստանում եւ թիւրք հայրենասէր Տաճկաստանում, միշտ մնալով հայ ժողովրդասէր եւ իր ապրած պետութեանց ներ-

քին յեղաշրջումը համարելով նախապայման իր պատկանած ժողովուրդի բարեկեցութեան: Նա ձգտում էր հայերին նոյնիրաւ քաղաքացի դարձնել թէ՛ Ռուսաստանում, թէ՛ Թիւրքիայում եւ աշխատում էր այն գաղափարը պատուաստել տիրապետող ազգերին, թէ հայրենիքը ոչ միայն իրանց է պատկանում այլ միւս ժողովուրդների հետ նաեւ հայերին եւ հետեւապէս հայերը ոչ թէ պէտք է հպատակներ նկատուին, այլ նոյնիրաւ քաղաքացիներ: Իբրեւ Ռուսաստանի իրաւազուրկ քաղաքացի նա սահմանադրական կարգ էր պահանջում եւ ներքին լայն ինքնավարութիւն Ռուսաստանի մէջ բուն իսկ ռուսազգի իրաւազուրկ զանգուածների հետ միասին. նոյն պահանջները նա դնում էր նաեւ Տաճկաստանում նոյն հիմունքներով, միւս իրաւազուրկ ազգերի եւ թիւրք քաղաքացիների հետ միասին: Նա մի կողմից աշխատում էր նոյն իրաւունքներն ապահովել հայ ժողովուրդին, ինչ որ արդէն ունէին ռուսն ու թիւրքը իրենց հայրենիքում, միւս կողմից նա գործակցում էր նրանց նոր իրաւունքներ ձեռք բերելու եւ նոր կարգեր ստեղծելու ամենքի համար, ուրեմն եւ իր համար: Նա մասնակցում էր այդ երկիրների թէ շինարարութեան՝ իր աշխատանքով եւ թէ յեղափոխութեան՝ իր գործերով: Սահմանափակ էր Դաշնակցութիւնը հայ ժողովուրդի ծոցում, բայց ընդարձակ էր իր գործունէութեան դաշտը: Նա մասնակցում էր Բագուի բանուորական ցոյցերին ու գործադուլներին եւ Պետրոգրադի ուսանողական շարժումներին, թէեւ Բագուն ու Պետրոգրադը Հայաստան չէին. բայց որովհետեւ նրանք Ռուսաստան էին, իսկ ինքը նոյն երկրի իրաւազուրկ քաղաքացին էր, ուստի հարուածում էր հին կարգն ամէն տեղ, ուր հանդիպում էր նրան:

Այսպիսով Դաշնակցութիւնը նախորդ շրջանում ոչ այնքան հայրենիքն ունէր նկատի, որքան հայութիւնը: Իր

քաղաքական պահանջը աւելի չէր, քան լայն ինքնավարութիւն հայաբնակ գաւառների: Նա հիմք առնում էր հայ տարրի բնակավայրը ոչ պատմական իմաստով, այլ խտութեան չափով: Բարեբախտաբար, հայութիւնը խիտ էր այն գաւառներում, որ երբեմն նրա քաղաքական հայրենիքն էր կազմում: Հայրենիքի գաղափարը նա ստորադասում էր բնակավայրի գաղափարին: Եթէ խստօրէն բնորոշենք՝ Դաշնակցութիւնը նախորդ շրջանում յեղափոխական ազգասէր էր եւ ոչ յեղափոխական հայրենասէր: Գուցէ կային ոմանք, որ կարծում էին թէ լայն ինքնավարութիւնը մի կայան է անկախութեան ճամբին, բայց Դաշնակցութեան ղեկավար խաւերի մէջ անջատողական միտումներ չկային: Ռուս միապետական մամուլն էր, որ հայերին վերագրում էր այդ հակումը եւ հայերն անկեղծութեամբ եւ խորին վրդովումով մերժում էին այդ մեղադրանքը ոչ թէ քաղաքականութիւն անելով, այլ իրողութիւնը մէջտեղ հանելով: Գուցէ առաջին մտածողները ունէին այդ գաղափարը, բայց նա երբեք լրջօրէն տեղ չէ գրաւած կուսակցութեան իմացութեան մէջ:

Այսպիսով Դաշնակցութիւնը ոչ թէ ազատ հայրենիք ստեղծելու էր հետամուտ, այլ բարեկեցիկ հայ ժողովուրդ՝ իր բնավայրում: Ոչ թէ անջատական էր անկախութեան իմաստով, այլ ինքավարական էր դաշնակցական իմաստով: Ոչ թէ ձգտում էր հայաբնակ գաւառները անջատել Ռուսաստանից ու Թիւրքիայից եւ իրար կցելով ստեղծել մի ազատ եւ անկախ Հայաստան, այլ աշխատում էր հայ ժողովուրդի բնակավայրերը զատել վարչապէս իբր ուրոյն, ներքնապէս ինքնավար շրջաններ, սակայն, կապուած այն պետութեան, որի մէջ պատմութիւնը դրած էր հայ ժողովուրդին: Նա ձգտում էր մայրենի լեզուով, դատ ու դատաստան ունենալ

եւ կրթութիւն, գաւառի ներքին գործերը ինքը վարել եւ իր լեզուով, բայց ձգտում չունէր իր զօրքն ունենալու, իր պոստն ու երկաթուղին եւ իր դրամը։ Սա մի ձգտում էր պահելու ազգն ու ազգայնութիւնը իբր թիւ եւ կերպարանք՝ պետական օրէնքների բարեփոխ հովանու տակ։ Նա ձգտում էր հայերին իրաւունք ապահովելու, որ իբր հայ ապրեն օտար ազգի պետութեան մէջ ոչ թէ նրանց բարեացակամութեան շնորհիւ, այլ պետական օրէնքի երաշխիքով, ոչ թէ հանդուրժուած մի տարր, այլ իբր իրաւասու եւ իրաւատէր ազգ։ Ուստի նա կուսակից էր դաշնակցօրէն կազմուած Ռուսաստանի եւ Թիւրքիայի, ուր հայաբնակ գաւառները միասնաբար՝ իբր ուրոյն վարչական միաւոր՝ կազմելու էին այդ պետութեանց բաղադրիչ մասերը։ Նրա համար քաղաքական կազմութեան օրինակ էին հանդիսանում Զուիցերիան եւ Աւստրիան։ Զուիցերիան իբր տիպար Կովկասի համար, ուր տարբեր ազգեր առանց իրենց մշակութային ինքնութիւնը ժխտելու՝ ապրում են մի վարչական կարգի տակ, իսկ Աւստրիան իբր վարչական տարբեր միութեանց միութիւն։ Այս լուծումը, որ տեսապէս թւում էր բնական եւ արդար, կարծում էին, թէ լաւագոյն լուծումն է, որ ապահովում է ազգերի ինքնութիւնը եւ կեր է տալիս պետութեանց միարար քաղաքականութեան։ Այս լուծումը պետութեան եւ պետական ժողովուրդի կամքը սահմանափակում էր համապետական խնդիրներով, իսկ տարբեր ազգերի ինքնավարութիւնը՝ ներքին խնդիրներով։ Այն ամենը, որ համապետական արժէք ու նշանակութիւն ունէր, թողնում էր կենտրոնական իշխանութեան, ուր ձայն ունէին նաեւ տարբեր ազգերն իրենց թուի համեմատ, իսկ այն ամենը, որ տեղական նշանակութիւն ունէր, թողնում էր տարբեր ազգերին կազմակերպելու եւ վարելու։ Ազգերը հաշտւում էին կլանուիլ մեծ պետութեանց մէջ իբր քաղաքական միաւոր, բայց ձգտում էին շեշտել իրենց ինքնութիւնը

իբր վարչական եւ մշակութային միաւոր։ Այս մտածման եւ ծրագրի հիմունքն այն համոզումն էր, որ Ռուսաստանը բնաւ Կովկասից հեռանալու չէ եւ չկայ մի ոյժ, որ ստիպէ նրան հեռանալ. Տաճիկն անզօր է, Պարսկաստանը՝ թոյլ, Եւրոպան՝ բաժան եւ տարամերժ, Չինաստանը՝ թմրած, Ճապոնը՝ հեռու, ուստի եւ անշահագրգիռ։

Մեծ պատերազմը, սակայն, գլխիվար շրջեց ամէն նախատեսութիւն։ Ռուսաստանը հեռացաւ եւ Կովկասը մնաց մենակ ու ազատ։ Մի պահ Դաշնակցութեան Ծրագիրը գործադրութեան յարմարութիւն ունեցաւ գոնէ Կովկասի համար։ Յեղափոխութեան շրջանին Կովկասը դարձաւ վարչապէս զատուած միաւոր, բայց կապուած Ռուսաստանին։ Այդ վիճակը դեռ լաւ չորոշուած՝ Կովկասը իբր Կովկաս, մնալով երեք ժողովուրդի միացեալ պետութիւն, բաժանուեց Ռուսաստանից։ Այն տարրերը, որ սկզբունքով դէմ էին ամէն մի վարչական բաժանման եւ դաւանում էին մի եւ անբաժան Ռուսաստան – վրաց ընկերվար-ռամկավարները – առաջինն եղան, որ անջատեցին Վրաստանը Կովկասից՝ հակառակ Դաշնակցութեան կամքին ու ցանկութեան։ Դաշնակցութիւնն այսպիսով ստիպուած եղաւ երեսը դարձնելու դէպի հայաբնակ գաւառները, որ արդէն գրաւած էին նրա ուշադրութիւնը ինքնապաշտպանութեան տեսակէտով։ Պատմութիւնն այսպիսով մղեց Դաշնակցութիւնը դէպի հայրենիք, եւ ինքնավար, բայց դաշնակցօրէն։ Ռուսաստանին կապուած հայաբնակ գաւառների կուսակիցները դարձան Միացեալ եւ Անկախ Հայաստանի պաշտպաններ։ Քաղաքական մտքի այս յեղաշրջումը կատարուեց ազգամիջեան պայքարների եւ ընդհարումների եւ հայ թրքական ուժերի բախման թոհ ու բոհի մէջ։ Դաշնակցութիւնը քաղաքական տեսակէտով դարձաւ մի բոլորովին նոր կուսակցութիւն, մնալով, սակայն

մի եւ նոյն: Նա հիմա նոյնպէս ձգտում էր հայ ժողովրդի բարեկեցութեան, բայց ոչ թէ օտար պետութեանց շրջագծի մէջ, այլ նրա բուն պատմական հայրենիքում: Ժողովուրդի բարեկեցութիւնը նա այլեւս չէ կապում Ռուսաստանի եւ Թիւրքիոյ ներքին բարեփոխութեան, այլ իր հայրենիքի – Հայաստանի ազատութեան հետ: Նա դադարում էր այլ եւս Ռուսաստանի եւ Թիւրքիայի ներքին կուսակցութիւններից մէկը լինելու եւ գործօն մասնակցութիւն ունենալու նրանց ներքին յեղաշրջման մէջ, այլ դառնում էր Հայաստանի գործօն ու ղեկավար կուսակցութիւնը, որ ձգտում էր հայաբնակ բոլոր շրջաններն անջատել ու միացնել իրար՝ ստեղծելու համար միացեալ եւ անկախ Հայաստան: Նա որ անջատողական չէր, հիմա դարձաւ անջատման կողմնակից: Նա որ պահանջում էր դաշնակցօրէն միացեալ Կովկաս, հիմա դարձաւ ազգայնօրէն անջատ եւ սահմանատուած Կովկասի կուսակից: Նա, որ գործում էր Ռուսաստանի եւ Թիւրքիայի բովանդակ տարածութեան վրայ այդ պետութեանց անիրաւ կարգերի դէմ՝ ամփոփեց իր գործունէութիւնը Հայաստանի մէջ, դրսի հայութիւնը նկատելով իբր օժանդակ ազդակ հանուր Հայրենիքի: Այսպիսով իր քաղաքական գործունէութեան դաշտը նեղացաւ, բայց ստացաւ մի նոր եւ զօրաւոր հիմունք – Հայրենիքը: Ոչ թէ հայ ժողովուրդի բարեկեցութիւնը միայն դարձաւ իր նպատակը, այլ «բարեկեցիկ հայն իր ազատ եւ միացեալ հայրենիքում» դարձաւ իր կարգախօսը: Սա մի հիմնական փոփոխութիւն էր Դաշնակցութեան Ծրագրի, մտայնութեան ու գործի մէջ, որ դեռ եւս չի ձեւակերպուած իբր Ծրագրային պաշտօնական տեսաբանութիւն, բայց տաս տարուց աւելի է, որ գործօն ոյժ եւ իրական կեանքի մէջ եւ իբր ղեկավար սկզբունք ընթացք է տալիս մեր մտածումին ու գործին:

Դրանով ճշտում է Դաշնակցութեան վերաբերումը դէպի գաղութներն ու բնիկ հայութիւնը: Առաջ նա հայերի մի կուսակցութիւն էր, որ յեղափոխութեան ճամբով աշխատում էր բարեշրջել այն երկիրների կարգերը, ուր հայութիւն էր ապրում՝ առաւելապէս աշխատելով բարեփոխել հայ մեծագոյն զանգուածների բարեկեցութիւնը Ռուսաստանում եւ Թիւրքիայում: «Հայ յեղափոխական դաշնակցութեան» հայ բառի մէջ նա դնում էր այդ քաղաքական բովանդակութիւնը: Հիմա նա հայ բառի մէջ դնում է տարբեր քաղաքական բովանդակութիւն: Նա կրկին հայ ժողովուրդի բարեկեցութեան է ձգտում, բայց ոչ թէ քաղաքացիական, այլ քաղաքական. նորից ընկերվար է, բայց ոչ Ռուսաստանի եւ Թիւրքիայի ընկերական կեանքը ընկերվար հիմքերի վրայ դնել: «Հայաստանն» այսպիսով իբր ուրոյն պահանջ հիմա մտնում է իր քաղաքական Ծրագրի մէջ, որ առաջ չկար: Առաջ պահանջածը հայաբնակ գաւառներ էին՝ վարչապէս ինքնավար, հիմա նա ինքնավար շրջաններ է պահանջում քաղաքականապէս ազատ եւ անկախ: Նա առաջ աշխատում էր հայ տարրի քաղաքացիական իրաւունքներն ապահովել օտար պետութեանց մէջ եւ ուզում էր նրանց տիրակից դառնալ, հիմա նա ձգտում է հայերի քաղաքական իրաւունքներն ապահովել նրա բուն հայրենիքում – Հայաստանի մէջ, ուր ձգտում է նրանց միահեծան տէր դարձնել: Իր գործունէութեան շեշտը նա հիմա դնում է ոչ թէ քաղաքացիական, այլ քաղաքական իրաւունքների վրայ եւ Հայաստան է պահանջում, հայ ժողովուրդին քաղաքական իրաւունքներ ապահովելու համար: Որովհետեւ եթէ հայն ունենայ քաղաքական իրաւունք իր հայրենիքի մէջ, այսինքն լինի տէր ու տնօրէն իր կեանքի եւ հայրենիքի իբր անկախ պետութիւն, այն ժամանակ միմիայն իր կամքից անկախ կը լինի իր քաղաքացիական իրաւունքները գծել եւ իր տնտեսական եւ ընկերային կեան-

քը տնօրինել։ Նա հիմա չի հրաժարւում իր հին դերից՝ լինել համայն հայութեան իրաւանց պաշտպան ամէն տեղ, ուր ապրում են նրանք. բայց մինչդեռ գաղութների մէջ աշխատում է հայերի իրաւունքը ձեւակերպել եւ ապահովել իբր ուրոյն ազգային զանգուած՝ մշակութային իմաստով, նա աշխատում է հայ ժողովրդին իրաւունքներ ապահովել բուն իսկ իր հայրենիքում՝ քաղաքական իմաստով։ Գաղութները այսօր եւս նրա համար օժանդակ ազդակ են բուն հայրենաբնակ հայութեան բարեկեցութեան համար, բայց մինչդեռ առաջ նրանց օգտագործում էր հայութեան ինքնավարական իրաւունքներն ապահովելու, այսօր հրաւիրում է աջակցել նրանց քաղաքական անկախ գոյութեան պայքարին։

Եւ այս ձգտումը օրաւուր պայծառանում է դաշնակցականի եւ նրա շնորհիւ հայ մարդու գիտակցութեան մէջ։ Աւելի արդար է եւ հնարաւոր, որ հայութիւնը քաղաքական իրաւունքներ ունենայ իր հայրենիքի մէջ, քան այն բոլոր վայրերում, ուր ապրում է նա։ Աւելի բանական, արդար եւ իրաւացի է հայութեան պատմական բնավայրը անջատել ու միացած տալ նրան իբր հայրենիք՝ ուրիշ ազգերի նման եւ նրանց հաւասար՝ իր քաղաքական կեանքով ապրելու, քան ամէն մի պետութեան մէջ քաղաքացիական իրաւունքներ ապահովել ազգի հատուածներին։ Սա մինչեւ իսկ անհնարին է, թէ գործնապէս, որովհետեւ զատ հայաբնակ վայրեր չկան օտար պետութեանց մէջ եւ թէ հոգեբանօրէն, որովհետեւ ամէն տեղ նա մի հիւր է եւ ամենուր նա հիւր է զգում իրան։ Ամէն տեղ, ուր հայն ապրում է, որքան եւ լայն քաղաքացիական իրաւունքներ ունենայ, որքան եւ նոյնիրաւ դառնայ բնիկ տարրին – նա միշտ հիւր կը նկատուի եւ հիւր կը զգայ իրան, եթէ շարունակէ իբր հայ ապրել իր ուրոյն մշակութային կեանքով ու լեզուով։ Եւ այն օրը նա կարող է

երկրի տէրերից մէկը նկատուել եւ քաղաքական իրաւունքներ ունենալ, երբ հրաժարի իր ուրոյն ազգայնութիւնից, մշակոյթից ու լեզուից եւ դառնալ բուլգար Բուլգարիայի մէջ, արաբ՝ Սուրիա եւ Եգիպտոս, յոյն՝ Յունաստանում եւ այլն: Արդ՝ հայութիւնն իրաւունք ունի ապրելու իբր ուրոյն ազգ իր ուրոյն կերպարանքով: Նոյն իրաւունքն ունին եւ այն մեծ ազգերը, որոնց հայրենիքի հովանու տակ ապրում են հայերը: Նրանք իրաւամբ իրանց տէր են համարում իրենց հայրենիքի եւ չեն կարող իրենց դարաւոր կեանքի սարգ ու կարգը փոխել հայ զանգուածների ազգային պահանջներին յարմարելու համար: Լաւագոյն դէպքում նրանք կարող են հանդուրժել, որ նրանց մօտ ու նրանց պետութեան մէջ, հայերն ապրեն իբր ուրոյն համայնք իրենց մշակութային կերպարանքը պահելով. բայց մեզ համարել իրանցից մէկը, իրանց հաւասար իրաւունքներ ունեցող իրենց հայրենիքի վրայ – սա անհնարին է հոգեբանօրէն եւ անիրաւացի իրաւօրէն: Քաղաքական լրիւ իրաւունքներ ամէն ազգ միմիայն իր հայրենիքում կարող է վայելել, այսինքն այն երկրի մէջ, որ իրն է միայն եւ ուրիշ ոչ ոքի չի պատկանում: Որքան եւ հիւրընկալ բարեկամ լինի՝ հիւրն իրան ազատ կարող է զգալ միայն իր տան մէջ: Ոչ ոք կարող է ազատ զգալ իրան օտար երկրի մէջ: Ամէն ազգ պէտք է իր քաղաքական հայրենիքն ունենայ: Այս հաստատուն եզրակացութեան եկած է Դաշնակցութիւնը՝ անցնելով ծանր փորձութեանց միջից եւ այս գիտակցութիւնը պէտք է խորանայ հայութեան մէջ, որ պահանջն զգայ սեփական տուն ու հայրենիք ստեղծելու: Այսպէս ուրեմն, մի ժամանակ իր անունին «հայ» բառը կցելով՝ Դաշնակցութիւնը «հայոց ազգ» էր հասկանում եւ նրա բարեկեցութիւնը՝ Ռուսաստանում եւ Տաճկաստանում. այսօր երբ ասում է հայ, հասկանում է ազատ հայութիւն միացեալ եւ անկախ Հայաստանի մէջ: Դաշնակցութիւնը

հայ կուսակցութիւն է ոչ միայն նրա համար, որ հայ են իր անդամները, գործում է հայութեան մէջ եւ հայ զանգուածի բարեկեցութեան է հետամուտ, ուր էլ որ լինեն, այլ հայ է, որովհետեւ ձգտում է ազատ հայութիւն ստեղծել ազատ Հայաստանի մէջ: Նա հիմա ոչ թէ ասում է «ազգ», այլ՝ «ազգ եւ հայրենիք»: Ոչ թէ բարեկեցիկ ազգ եւ տիրող ցեղին նոյնիրաւ, այլ բարեկեցիկ եւ բոլոր պետութեանց նոյնիրաւ հայրենիք ու ազգ: Ոչ ինքնավար հայութիւն, այլ անկախ հայութիւն, ոչ թէ հայաբնակ գաւառների զատ-զատ միութիւն, այլ անջատուած հայրենիքի միացեալ եւ անկախ գոյութիւն:

***

Մեր կուսակցութիւնը «հայ» յեղափոխական դաշնակցութիւն կոչուելով՝ այդ հայ բառի մէջ դնում է եւ մի ուրիշ բովանդակութիւն: Նա հայ կազմակերպութիւն է ոչ միայն ուրիշ ազգերի հակադրութեամբ, իբր նրանցից անջատ ու տարբեր մի ուրոյն ազգի կազմակերպութիւն, այլեւ հայ է ինքն իր ազգային հաւաքականութեան մէջ՝ իբր հակադրութիւն ներքին հատուածական բաժանումների: Նա Ռուսաստանի հայոց կուսակցութիւն չէ եւ ոչ Տաճկաստանի հայութեան, այլ հայոց ազգի կուսակցութիւն է: Նրա համար չկայ հպատակութեան խնդիր, այլ ցեղակցութեան: Առաւել եւս նա Ղարաբաղցու կուսակցութիւն չէ կամ Սեբաստացու. նա հայութեան քաղաքական ազդակն է, անկախ նրա բնակավայրից: Իր անդամների հպատակութեան կամ տեղացիութեան պիտակը չէ, որ արժէք ունի, այլ նրանց հայ լինելու հանգամանքը: Ամէն մի հայ, ո՛ր տեղացի եւ լինի, Դաշնակցութեան անդամ է, եթէ գոհացում է տալիս Կանոնագրի հինգ պահանջներին: Դաշնակցութիւնը չի ճանաչում քաղաքական սահման կամ աշխարհագրական

բաժանում, այլ ցեղագրական տարբերութիւն միայն: Նրան անդամակցում է ամերիկաբնակ հայը, բայց նրա անդամը չէ Ղարաբաղցի թաթարը եւ չէր Սեբաստացի թուրքը: Այս-պիսով նա զատվում է անմիջական հարեւանից եւ ձեռք է մեկնում հեռաւոր ցեղակցին:

Միաժամանակ Դաշնակցութիւնը խտիր չի դնում յարանուանութեանց միջեւ. նրա համար նոյնարժէք են լուսաւորչականը, կաթոլիկն ու բողոքականը, բաւական է, որ նրանք հայ են ծագումով եւ յեղափոխական իրենց տիպարով ու մտայնութեամբ: Դաշնակցութիւնը դաւանական կազմակերպութիւն չէ, այլ ազգային քաղաքական կուսակցութիւն: Այս երկու հանգամանքները Դաշնակցութեանը տալիս են համազգային բնոյթ եւ նրա հետեւորդների մտայնութեանը՝ ազգային հունաւորում: Դաշնակցականն ամենից առաջ իր մէջ հայն է զգում, յետոյ միայն տեղացին եւ յարանունը: Նա հայութեան շնորհիւ է, որ ընկեր է միւս հայերին մի եւ նոյն կուսակցութեան մէջ, բայց իբր տեղացի, նա անդամ կարող է լինել իր հայրենակցական միութեան եւ իբր դաւանող՝ իր եկեղեցու: Դաշնակցութիւնը նրա հայութեան է իր կոչն ուղղում եւ ոչ նրա հայրենակցութեան կամ դաւանանքին: Իր քաղա-քական ծրագիրները վերաբերում են բովանդակ հայութեան եւ Հայաստան աշխարհին, ոչ թէ նրա այս ու այն հատուածին կամ այս ու այն գաւառին: Գաւառ ու հատուած նրա հա-մար արժէք ունեն համազգային ապագայի տեսակէտով եւ բովանդակ ազգի ճիգերն է աշխատում կազմակերպել համազգային քաղաքական ապագայի հասնելու համար: Երբ միջամուխ է լինում Հայ-Թաթարական ընդհարումներին կամ Սասունի ապստամբութեան՝ նրան մտահոգում է հայ տարրի պաշտպանութիւնն առհասարակ, որովհետեւ իր Ծրագիրն այդ

տարրի բարեկեցութեան համար է եւ այդ տարրն ունի իբր հիմք պայքարի եւ գործի։ Հայ տարրի գոյութիւնն առաջին պայմանն է հայի բարեկեցիկ գոյութեան, ուստի համազգային ինքնապաշտպանութեան գործը առաջին մտահոգութիւնն է Հ. Յ. Դաշնակցութեան, լինի այդ ինքնապաշտպանութիւնը նիւթական թէ ոգեկան, այսինքն կենդանական գոյութեան թէ մշակութային կերպարանքի պահպանութեան համար։

Դարեր շարունակ հայութիւնը չի ունեցած մի կազմակերպութիւն, որ համայն հայութեան քաղաքական շահերն ունենար իբր մտահոգութեան նպատակ։ Եկեղեցին, որ մի ժամանակ կատարում էր այդ պաշտօնը, անշքացաւ այն օրուանից, երբ տարբեր դաւանանքեր բուն դրին հայութեան ծոցում։ Յիսունական թուերից հայ մտաւորական դասի գիտակցութեան մէջ ազգ եւ եկեղեցի զատուեցին իրարից եւ երկուսը նկատուեցին իբր տարբեր գոյացութիւններ՝ ոչ թէ ազգ ու եկեղեցի՝ նոյնացած իրար, այլ եկեղեցին իբր ուրոյն դաւանական համայնք՝ միեւնոյն հայ ազգի ծոցում։ Բողոքականն ու կաթոլիկը, որ հայոց պատմական եկեղեցուն չէին պատկանում, դրանով չէին դադարում հայ ճանաչուիլ եւ լուսաւորչական եկեղեցին, որ համարւում էր ազգային, նկատուեց հայոց եկեղեցիներից մէկը, թէեւ ամենից զօրաւորն իր անդամների թուով եւ պատմական շուքով։ Այսպիսով եկեղեցին դադարեց ազգը ներկայացնել եւ Տաճկաստանի հայոց Սահմանադրութիւնը եկաւ սահման դնելու ազգին եւ եկեղեցուն, առանց, սակայն, անջատելու իրարից։ Նա լուսաւորչական եկեղեցու Սահմանադրութիւն լինելով՝ զատում էր լուսաւորչական հայութիւնը բողոքականից եւ կաթոլիկից, բայց միաժամանակ լուսաւորչական հայութիւնն ինք իր մէջ սահման էր դնում աշխարհիկ եւ հոգեւորական տարրերի միջեւ։ Այսպիսով մեր պատմական

ազգայնութեան մէջ աստիճանաբար առաջ եկաւ մի ճեղքուածք։ Իր դաւանական ապրումներով հայը մնաց իր եկեղեցու մէջ – լուսաւորչական, բողոքական թէ կաթոլիկ – իսկ իր աշխարհիկ ապրումներով զատուեց նրանից։ Եւ մինչդեռ հայոց հարցի ծագման օրերին եկեղեցականը դժկամակութեամբ դարձաւ բերան հայութեան քաղաքական տենչերի, այնուհետեւ նա շեղ ընթացաւ հայ ժողովուրդի քաղաքական ճամբից, ու թէեւ անհատ հոգեւորականներ յարեցին քաղաքական շարժման՝ բայց եկեղեցին իբր ազգային հաստատութիւն մասնակից չեղաւ հայոց յեղափոխութեան։ Եթէ երբեմն դուրս եկաւ այդ մեկուսացումից, այդ քայլն առաւ ժողովուրդի բռնադատութեան տակ։ Այսպիսով հայութիւնն իր քաղաքական մտածումով ու գործերով դուրս եկաւ եկեղեցու շրջափակից եւ մեր հանրային զարգացման գիծը տարաւ աշխարհական ուղղութեամբ։ Այս պատմական շարժման մեծագոյն ազդակն այսօր Դաշնակցութիւնն է։ Նա վերադարձ չունի դէպի հին կացութիւնը։ Հայութեան քաղաքական կեանքի ղեկավարութիւնը նա իր ձեռքն է առած եւ ազգային միւս խմբակցութեանց նա շարունակ հրաւէր է կարդում քաղաքական, աշխարհիկ գործերի շուրջ գործակցել իրան կամ պայքարել իր դրօշի տակ ոչ իբր դաշնակցական, ոչ իբր այս ու այն դաւանանքին աշակերտող. այլ իբր հայ մարդ։ Այսպիսով, որոշ է Դաշնակցութեան դիրքը հայոց եկեղեցիների հանդէպ։ Նա գործ ունի ոչ նրանց դաւանութեանց, այլ նրանց անդամների հետ, որոնց արժէք է տալիս ոչ թէ նրանց դաւանութեան, այլ նրանց քաղաքական տրամադրութեան համար։ Կախաղան բարձրացող կամ բանտերում տառապող կուսակցականի մէջ, ոչ թէ նրա դաւանանքն է նկատում, այլ նրա յեղափոխական գործն ու տիպարը եւ նա չի մերժում իր նահատակների եւ հերոսների շարքը դասել այլադաւան հայերին, ինչպէս եւ

խտիր չի դնում այլադաւան հայ զանգուածների միջեւ, երբ ծրագրում է հայութեան ապագան։ Դաշնակցութեան մէջ, իսկ դուրսը Դաշնակցութեան անդադրում քարոզի շնորհիւ կաթոլիկ հայ գիւղացին դադարեց «Ֆրանգ» նկատել իրան եւ հայ զգաց, այդպէս նաեւ բողոքականը։ Այս տեսակէտով Դաշնակցութիւնը հայոց ազգային ինքնագիտակցութեան մեծագոյն ազդակն եղաւ եւ շարունակում է լինել։

***

Դաշնակցութեան հայ կոչումը ճշտում է նրա դիրքը նաեւ հայ աշխարհական շարժման միւս հոսանքների հանդէպ։ Նրանք, որ ստորադասում են ազգի գաղափարը միջազգային գաղափարին, տարբերւում են մեզանից, որ գերադասում ենք ազգի ըմբռնումը միջազգային ըմբռնումից։ «Միջազգային» ասելով մենք հասկանում ենք նոյնիրաւ ազգերի ազատ դաշնակցութիւն եւ ոչ իբր ստորադաս ու գերադաս ազգերի կախումաւոր կապակցութիւն։ Մենք հաւատարիմ ենք Մեծ Յեղափոխութեան գաղափարին եւ ձգտում ենք իրացնել այդ գաղափարները ոչ միայն նոյն երկրի քաղաքացիների միջեւ, այլ եւ նոյն երկրագնդի ազգերի միջեւ։ Մեր գերագոյն նպատակների մէկն է նոյնիրաւ դարձնել ոչ միայն անհատներին, այլ եւ ազգերին եւ քաղաքացիական իրաւունքի նորմերը դարձնել միջազգային իրաւունքի նորմեր։ Ինչպէս քաղաքացիական իրաւունքը խտիր չի դնում անհատների միջեւ եւ բոլորին ճանաչում է նոյնիրաւ միեւնոյն օրէնքի առջեւ, այնպէս էլ մեր ձգտումն է, որ ազգերն՝ իբր անհատներ՝ ճանաչեն նոյնիրաւ միջազգային օրէնքի առջեւ։ Ազգը մենք նկատում ենք հաւաքական միաւոր, որ ունի իր սեփական կերպարանքը. նա պէտք է դառնայ իրաւական անձնաւորութիւն՝ միջազգային իրաւունքի հանդէպ։ Ինչ

յարաբերութիւն որ ունին անհատներն իրար հանդէպ եւ օրէնքի դիմաց, պէտք է ունենան եւ ազգերն իրար հանդէպ՝ միջազգային օրէնքի դիմաց, որ ոչ թէ ուժի գործիք պիտի դառնայ, այլ արդարութեան ուժ։ Ինչպէս չկան գերադաս եւ ստորադաս ազգեր նոյն երկրագունդի վրայ. կարողութեամբ ու հմտութեամբ տարբեր իրարից՝ իրաւապէս նրանք պէտք է լինեն նոյնիրաւ։

Մենք մասնակից ու համակիր ենք միջազգային շարժումների, բայց մենք աշխատում ենք այդ շարժումը նպաստաւոր դարձնել հայ ժողովուրդի իրաւական կացութեան համար։ Հայ ժողովուրդը մենք չենք համարում միջազգային շարժումների ստորադաս միջոց, այլ գերադաս նպատակ, միւս ազգերի նոյնիրաւ։ Ազգային վերելքի հոգեբանութիւնն է իշխում մեր շարքերի մէջ, մինչդեռ մեր հակառակորդ բանակում իշխում է ազգային նուաստութեան հոգեբանութիւն։ Երկուսս էլ գիտակից ենք մեր ժողովուրդի ուժերի չափին. երկուսս էլ լաւ գիտենք մեր ժողովուրդի կարողութեան սահմանը, բայց երկուսս էլ անարժէք չենք համարում ժողովուրդի ոյժն ու կարողութիւնը, այլապէս մենք չէինք հետապնդի ազգային-քաղաքական Ծրագիր եւ նրանք՝ միջազգային յեղաշրջում։ Երկուսս էլ կարծում ենք, որ հայ ժողովուրդը մի ոյժ է, բայց մինչդեռ նրանք այնքան նուաստ են կարծում այդ ոյժը, որ անհնարին եւ անիմաստ են համարում ազգային քաղաքականութիւնը միջազգային թոհ ու բոհի մէջ, մենք կռթնած մեր անցեալ գործերին եւ ներկայ ճիգերի միշտ մեծացող արդիւնքին՝ այնքան զօրաւոր, բայց մանաւանդ զօրացող ենք նկատում մեզ, որ խիզախում ենք նոյնիրաւ գոյութեան ձգտիլ՝ ուրիշ ազգերի շարքում եւ նրանց հաւասար։ Նրանք ձգտում են ստորադաս ազգերին հաւասար՝ ապրել մի մեծ ու հզօր ազգի մականի տակ իրենց

աշխարհագրական բնավայրի մէջ. մենք աշխատում ենք մեծ ու հզօր ազգին նոյնիրաւ՝ ապրել անկախ ու ազատ մեր սեփական քաղաքական հայրենիքի մէջ։ Նրանք յարմարացումի ասպետներ են, մենք՝ ըմբոստութեան. ուստի նրանց շուրջը հաւաքւում են հանգստաւէտ կեանքի սիրահարները, որ աշխարհը դմակ են կարծում, իսկ իրանց դանակ, իսկ մեր շուրջը հաւաքւում են անհանգիստ տարրերը, որ բողոք ունեն աշխարհի անիրաւ կարգերի դէմ եւ ձգտում են արդարակուռ ապագայի։ Նրանք լաւ են համարում այ՛ն, ինչ որ հրամայում են տէրն ու մականաւորը. մենք լաւ ենք համարում այ՛ն, ինչ որ ստեղծագործում են մեր ազատ միտքն ու զգացումը, մեր անցեալին եւ ուժերին կռթնած եւ մեր կենսական շահերից թելադիր։ Այս պատճառով մենք անուղղելի իդէալիստներ ենք, նրանք ճկուն իրապաշտներ։ Մենք բարձրանում ենք դէպի տառապանք՝ ժողովուրդն ու կենցաղը ազնուացնելու բուռն տենչով ու վճռականութեամբ, նրանք իջնում են դէպի հանգիստ, դէպի բարոյական լճացում ու քայքայում։ Երկու բանակի մէջ եւս եռ ու զեռ կայ շարունակ. բայց մերը նման է դէպի դիրքերը սլացող բանակի եռ ու զեռին, նրանցը որդնոտող մսի, ուր ամէն մի որդ պարարտանում է հանրային մսի քայքայման գնով։ Հասկանալի է, որ այս երկու մտայնութեան մէջ միութեան եզր չկայ, նրանք անհաշտ են իրար հետ եւ անհաշտ պիտի մնան։ Ճահիճը չի կարող արեւ հանդուրժել. մէկի զօրութիւնը միւսի չքացնում է. «Ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր» եւ Մ. Նալբանդեանի հետ կանչում է սրտաբաց. «Օրհնեալ է պատերազմը»։

***

Դաշնակցութեան «հայ» կոչումից ծագում են մի շարք վերաբերումներ դէպի մեր հանրային հաստատութիւններն

ու գործերը։ Բոլոր մասնակի միութիւնները առնուազն հանդուրժելի են Դաշնակցութեան համար, բայց դուրս են նրա սահմանից։ Դաշնակցականը կարող է այս կամ այն հայրենակցական միութեան անդամ լինել, բայց Դաշնակցութիւնը հայրենակցական միութիւն չէ. ինչպէս կարող է այս կամ այն յարանուանութեան անդամ լինել, բայց Դաշնակցութիւնը յարանուանութիւն չէ։ Դաշնակցականը կարող է այս կամ այն գրական բարբառով գրել, բայց Դաշնակցութիւնը լեզուական խնդիրներ չունի։ Սրանց ներքին հոգսերը, կազմակերպական խնդիրները, լաւն ու վատը կարող են դաշնակցականին մտահոգել, բայց կուսակցութեան հոգածութեան առարկան չեն։ Որեւէ գրական, գիտական, գեղարուեստական, շահակցական եւ այլ կարգի միութիւններ կարող են դաշնակցական անդամ ունենալ, բայց Դաշնակցութիւնը վեր ու զատ է այս բոլոր մասնակի եւ անջատ միութիւններից։ Այս բոլոր միութեանց մէջ դաշնակցականը կարող է մտնել՝ միշտ մնալով «դաշնակցական». այսինքն պահելով իր «դաշնակցական» մտայնութիւնը, իր Ծրագիրն ու Կանոնագիրը եւ ամէն ջանք թափելով նրանց իրացման համար։ Նա՛խ Դաշնակցական գործ ու պարտականութիւն, յետոյ ուրիշ կարգի աշխատանք եւ մտահոգութիւն։ Գուցէ նա ունի կարողութիւններ, որոնց համար Դաշնակցութիւնն ասպարէզ չունի. բայց այ՛ն կարողութիւնները, որ պիտանի են «դաշնակցական» գործին՝ նա պարտաւոր է արժեցնել լիովին եւ անվերապահ իր կուսակցութեան համար։ Ինչ որ պէտք չէ Դաշնակցութեան՝ այ՛ն է տրամադրելին այլ գործի համար։ Մտնելով այլազան միութեանց մէջ՝ Դաշնակցականը օգտագործում է եւ պէտք է օգտագործէ նրանց մի մեծ, ընդհանուր եւ համազգային նպատակի համար, որ ձեւակերպում է իր Ծրագիրը. «միացեալ, անկախ եւ ընկերվար Հայաստան»։ Բոլոր

մասնաւոր միութիւնները հանրային շահեր ունեն նկատի եւ այս կամ այն հանրային շահն են համարում հիմնական եւ յաճախ՝ գերադաս։ Առանց այս սահմանափակ մտայնութիւնն ունենալու՝ «դաշնակցականը» մտնելով այդ կարգի միութեանց մէջ, պէտք է ջանայ նրանց հետապնդած հանրային, բայց մասնակի շահերը ներդաշնակութեան բերել համազգային գերագոյն շահի հետ, որ իր Ծրագրի հետապնդածն է, եւ պիտի ջանայ իր դրոշմը դնել այդ միութեան գործի վրայ, որ արդիւնք են տարբեր մտածութեան եւ շահիմացութեան։ Այդ միութիւնները պէտք չէ նկատել Հ. Յ. Դաշնակցութեան ենթակայ մարմիններ, ինչ որ անխորհուրդ կը լինէր եւ անիմաստ, քանի որ Դաշնակցութիւնը չունի մասնաւոր շահեր ու հոգեբանութիւն – այլ պէտք է նկատել ուժեր, որ կարող են նպաստել մեր ընդհանուր գործին։ Ոչ այն ամենը, ինչ որ մեր հետ չէ, մեզ հակառակ է. եւ ոչ այն ամենը, ինչ որ մեր կազմածը չէ, դրանով իսկ դէմ է մեզ։ Մեր մասնակցութեան, քաջալերութեան եւ պաշտպանութեան արժանի են բոլոր միութիւնները, որ թէկուզ մի մատ ջուր կարող են հոսեցնել դէպի մեր հանրային ջաղացքի առուն։ Քանի դեռ խնդիրը վերաբերում է Դաշնակցութեան բուն գործին եւ մեր «դաշնակցական» հանգամանքին՝ մենք իրաւամբ կարող ենք ասել. «որ ոչ ընդ իս ցանէ՝ ցրուէ», այսինքն, ով մեզ հետ չի ցանում, ցրիւ է տալիս սերմը, ով չի ընդունում մեր Ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները նա «դաշնակցական» չէ, աւելի կամ պակաս մեր հակառակորդն է եւ յամենայն դէպս միշտ տարբեր է մեզանից։ Բայց երբ խնդիրը վերաբերում է մեր նպատակի հետապնդումին՝ այն ժամանակ սատանաներն անգամ դաշնակից են մեզ եւ օգտակար, եթէ մի որոշ ժամանակ ու մինչեւ մի որոշ տեղ ուղեկցող են մեզ եւ գործի ընկեր։ Այս պատճառով «դաշնակցականն» ամէն տեղ եւ ամենքի հետ կարող է լինել, մաքսաւորի եւ մեղաւորի հետ

կարող է սեղան բազմել, բայց միշտ եւ ամէն տեղ մնալով «դաշնակցական» եւ քարոզելով «երկնքի արքայութիւնը», որ իր Ծրագիրն է եւ գործելակերպը։ Եւ եթէ որեւէ մաքսաւոր որեւէ կերպ նպաստէ մեր գերագոյն նպատակի իրացման՝ դա մի շահ է ընդհանուր գործին։ Եւ բնաւ արգելք չկայ, որ նա շարունակէ մնալ մաքսաւոր, թէեւ աւելի լաւ կը լինէր, որ նա դառնար մեզանից մէկը, մեր դաւանակիցն ու գործակիցը։ Դաշնակցականն անզիջող է իր համոզումների մէջ, բայց հանդուրժող է ուրիշների համոզման հանդէպ։ Նա հետամուտ է իր Ծրագրի իրացման, բայց կարող է իր տարբեր կարողութիւնները եւ ազատ ժամանակը տրամադրել ուրիշ նպատակների, եթէ նրանք անուղղակի նպաստում են մեր Ծրագրի իրացման։ Դաշնակցութիւնը կոչում չունի հայ մարդու բոլոր պահանջներին գոհացում տալու եւ ոչ հայոց ազգի բովանդակ շահերը պաշտպանելու։ Նա արթնացնում է հայ ժողովուրդի քաղաքական մտածումը եւ ռազմական ոգին եւ կազմակերպում է հայութեան քաղաքական կամքը եւ յեղափոխական կորովը մի որոշ քաղաքական եւ տնտեսական ծրագրի իրացման հետամուտ։ Այս աչքով է նայում հայ մարդուն եւ հայ զանգուածին. այս նպատակին տանող կարողութիւններն են նրա ուշադրութիւնը գրաւում եւ իր համազգային նպատակին օգտակար գործերն ու ճիգերն է նա գնահատում։ Իր անդամներից այն է պահանջում, ինչ որ օգտակար է եւ անհրաժեշտ իր Ծրագրի իրացման համար, մնացած բոլոր տեսակէտներով իր անդամները ազատ են ձգուած իրենց մասնաւոր նախասիրութեանց եւ գործերի մէջ։ Դաշնակցութիւնը պաշտօն ու զբաղում չէ. նա մի որոշ մտայնութիւն է եւ բարոյական։ Նա պահանջում է ոմանց լիակատար անձնուիրութիւնը մեր գործի համար, միւսների պատրաստակամութիւնը զոհաբերելու՝ երբ հարկը պահանջէ։ Բայց քանի դեռ չի հնչած ժամը

գերագոյն զոհաբերութեան, «դաշնակցականը» պարտաւոր է Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ եւ ամէն տեղ, ուր մտաւ՝ լինի միութիւն թէ պարզապէս օտար շրջանակ, Կուսակցութեան գաղափարները տարածել եւ մասնակի նպատակները ընդհանուր Ծրագրին ու գործին ներդաշնակել։ Դաշնակցութիւնն այսպիսով թէ իր ընկերներից եւ թէ օտարներից պահանջում է այն ամենը, ինչ որ համազգային քաղաքական արժէք կարող է ունենալ եւ իր գերագոյն նպատակին ծառայել, որ իր Ծրագրի իրացումն է կեանքի մէջ։ Ինչ որ պահանջում է անհատ ընկերից, նոյնը հետամուտ է ստանալու եւ տարբեր ու մասնակի միութիւններից։ Նրանց գործունէութեան մէջ եւս իրան հետաքրքրում է համազգային արժէք ունեցող կողմը. ոչ մարդասիրականը, ոչ մասնագիտականը, ոչ արուեստականը, այլ ինչ որ կարող է նպաստել համազգային քաղաքական նպատակի իրացման, որ այլ բան չէ, քան իր Ծրագրի իրացումը։

«Դաշնակցական» խումբ, մարմին թէ անհատ իրենք են, որ ճշտում են իրենց վերաբերումը դէպի կուսակցական ամէն մի ներքին խնդիր եւ դէպի հանրային ամէն մի մարմին ու գործ։ «Դաշնակցականը» պէտք չէ մոռնայ երբեք, որ ինքը մի հայ կուսակցութեան անդամ է եւ մի քաղաքական եւ յեղափոխական կուսակցութեան անդամ։ Այս «հայ», «քաղաքական» եւ «յեղափոխական» բառերը նախորոշում են իր բռնելիք դիրքը բնոյթը, իր ընթանալիք ճամբի ծիրը, առանց պատասխան տալու այս ու այն հարցումին. այդ պատասխանն ինքն է, որ պէտք է գտնէ եւ տայ՝ միշտ մնալով «դաշնակցական»։ Նա պէտք չէ մոռնայ, որ ինքն ունի մի Ծրագիր, որի իրացման յանձնառու է եղած՝ կուսակցութեան անդամակցելով։ Թէ ի՞նչ պէտք է ձեռնարկել կուսակցութեան մէջ եւ արտաքին ո՞ր ձեռնարկներին պէտք է մասնակ-

ցել կուսակցութեան Ծրագրին լաւապէս ծառայելու համար. ի՞նչ պահուածք պէտք է ունենալ անհատական կեանքի մէջ կուսակցութեան վարկն ու հմայքը բարձր պահելու համար, սրանք խնդիրներն են, որ ինքը պէտք է որոշէ, եթէ մենակ է որեւէ շրջանի մէջ, եւ իր ընկերների հետ համախորհուրդ պէտք է որոշէ, եթէ կազմակերպութիւն կայ իր բնակած վայրի մէջ։

Վարմունքի այս ձեւը պարտադիր է բոլոր «դաշնակցականների» համար՝ լինեն ղեկավար թէ պարզ անդամներ։ Մենակութիւնը պատճառ չէ, որ «դաշնակցականն» անգործ ու անտարբեր մնայ իր ապրած միջավայրում եւ իր գործօն դիրքը չճշտէ հանրային իրադարձութեանց եւ ուժերի հանդէպ։ Իր «դաշնակցական» հանգամանքով նա մի ազդակ է կեանքի մէջ եւ պարտաւոր է քաղաքական մտածում արթնացնել եւ գործ առաջ բերել իր ապրած միջավայրում հայ զանգուածի մէջ։ Այս նախաձեռնութեան ոգին բխում է մեր Կանոնագրից, որ պահանջում է «ամէն ջանք թափել» իրականացնելու մեր Ծրագիրը։ Այդ Ծրագիրն է վարիչ սկզբունքը բովանդակ Դաշնակցութեան եւ ամէն մի դաշնակցականի. այդ Ծրագիրն է նաեւ, որ թելադրում է մի որոշ պահուածք եւ ընթացք դէպի հանրային ուժերն ու գործերը, դէպի օտար անձերն ու միութիւնները՝ լինեն նրանք հայ թէ այլազգի։ Ինչպէս զօրքերը տրուած հրամանին հլու՝ շտկում են իրենց դէմքը աջ կամ ձախ եւ շարժւում են մատնանիշ ուղղութեամբ, այնպէս էլ կուսակցութիւնը եւ կուսակցականը պարտաւոր են շարժուել Ծրագրի եւ Կանոնագրի ուղղութեամբ։ Ամէն ոք պարտական է լսել այդ կանչը, որ հրաման է, յորդոր եւ սաստ միանգամայն։ Հրաման՝ փորձառուներին յորդոր՝ նորեկներին եւ սաստ՝ շեղընթացներին։

Այս կարգապահութիւնը մեծագոյն ազդակներից մէկն է մեր կազմակերպութեան եւ յեղափոխիչ դեր է կատարած եւ շարունակում է կատարել մեր կազմալոյծ եւ ստրկածին ազգի մէջ: Սա մի կարգապահութիւն է, որ չի պարտադրւում, այլ ամէն ոք ինքն է որոշում իր համար, իր իսկ յանձնառութեամբ: Ոչ ոք չի խնդրած կամ ստիպած, որ սա կամ նա դաշնակցական դառնան: Ամէն ոք ազատ է անդամակցիլ կամ ոչ: Բայց մէկ անգամ, որ յանձառու եղաւ Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ՝ այնուհետեւ նա պարտաւոր է կատարել իր յանձնառութիւնը հաւատարմութեամբ: Սա մի կարգապահութիւն է, որ բըռնական չէ. սա տիրոջ հարկադրանքը չէ ստրուկի վրայ. սա չի ծագում մի օտար ուժից, այլ բխում է սեփական գիտակցութիւնից ու կամքից: Սա մի ուխտ է, որ ազատ մարդն ազատօրէն դնում է ինքն իր համար իր ազատ կամքով: Սա ազատ մարդկանց գործակցութեան մի պայման է ազատօրէն ընդունուած, բայց ստրկօրէն իրագործուած, ուր մարդն ինքն իր ստրուկն է եւ ոչ օտարի, ինքն իր կամակատարը եւ ոչ օտարը, որ ասել է թէ՝ ազատ է լիովին: Որովհետեւ ազատութիւնն անկարգութիւն չէ եւ ոչ սանձակոտոր մի ընթացք: Ազատութիւնը ինքնադիր օրէնքների եւ ինքնընտիր կարգերի յօժարակամ եւ անվերապահ հնազանդութիւնն է: «Ազատ» ու «հնազանդ», որ թւում է թէ ժխտում են իրար, իսկապէս իրար լրացնում են: Մարդկային ճակատագիրն է ըմբոստանալ ու հնազանդիլ. սա տիեզերական կշռոյթի մի ցոլացումն է մարդու կեանքի եւ հոգու մէջ: Խնդիրն այն է թէ ինչի՞ դէմ ըմբոստանալ եւ ո՞ւմ հնազանդել: Իր նմանին հնազանդել հակառակ իր իսկ կամքին՝ սա կը լինէր ստրկութիւն եւ ստրկամտութիւն. իր սեփական որոշումին հնազանդել – սա կը լինէր սանձարձակութիւն. հաւաքական մի մարմնի որոշումներին հնազանդել, որին համամիտ է նաեւ

ինքը – սա կը լինէր ազատութիւն բառի իսկական եւ շինարար առումով։ Դաշնակցութիւնը ազատ մարդկանց ընկերական խմբակցութիւն է եւ նրանց կուսակցական կազմակերպութիւնը, դրա համար նա գերազանցօրէն կարգապահ է քան որեւէ այլ մարմին։ Սա մի կարգապահութիւն է, որ արդիւնք չէ արտաքին բռնադատութեան, այլ ներքին գիտակցութեան եւ խղճմտանքի։ Ոչ թէ վախն է, որ «դաշնակցականին» պահում է կարգապահ, այլ ամօթն իր ներքին լաւագոյն հակումների հանդէպ, որոնց թելադրանքին անսալով՝ նա մի հանդիսաւոր օր երդում է տուած ընկերների ներկայութեամբ՝ գոհացում տալ Կանոնագրի հինգ պահանջներին։ Նա ձգտում է հաւատարիմ մնալ իր երդման եւ զգուշանում է շեղումներից։ Նա ազատ է միանգամայն, բայց եւ կաշկանդուած է խստօրէն, սակայն, ոչ թէ դրսից մէկն է, որ պահում է նրան, այլ ինքն է, որ ձգտում է հաւատարիմ մնալ իր բնոյթի ազնուագոյն հակումներին։ Իր անկարգապահ ընթացքը ոչ այնքան օրինազանցութիւն է, որքան բարոյական անկում. յանցանք եւ օրինազանցութիւն կը լինէր եթէ պարտադիր կարգի եւ կանոնի ստեղծումը կատարուած լինէր ուրիշի կամքով եւ բռնարար իր վրայ հակառակ իր կամքի. բայց դա անկում է, որովհետեւ ինքն է ձեւակերպած պարտադիր կարգն ու կանոնը կամ ինքն է յանձնառու եղած նրանց հնազանդելու կամովին։

Այս պատճառով անհատապաշտ մարդիկ «դաշնակցական» լինել չեն կարող։ Նրանք ահեղօրէն կաշկանդուած կը զգան իրենց դաշնակցական Կանոնագրի ճիրանների մէջ եւ Ծրագրի գծած ուղիների վրայ։ Անհատապաշտը շատ աւելի արժէք է տալիս իր անձնական իմացութեան քան հաւաքական իմաստութեան։ Նա կարծում է թէ ամէն ոք ինքն իր վարիչն է եւ տէրն ու տնօրէնը եւ ազատ է այն

պայմանով միայն, որ իր քմայքը օրէնք ճանաչուի ամէն տեղ եւ ամէն ժամանակ։ Նա մոռանում է, որ ամենից անտէր է նա, որ կարծում է թէ ինքն է իր տէրը եւ, որ ամենից երերուն են այն մարդու քայլերը, որ կարծում է թէ ինքն է իր վարիչը։ Ամէն լարում եւ ամէն պրկում իր թուլացումն ունի եւ ամէն մի ոյժ իր յենարանը։ Անհատական կամքի խթանը բաւական չէ մարդուն միշտ պիրկ ու արթուն պահելու համար։ Մենակեացը յաճախ մոլութեան մէջ է իր աչքը փակում, իսկ անձնամիտը՝ մոլորութեան մէջ։ Մարդը հանրային կենդանի է եւ այնքան արժէք ունի, որքան հանրային է։ Իր համակրանքի լայնութեամբ չափւում է իր հոգու մեծութիւնը։ Համակրական շրջանակի լայնացումը տանում է դէպի հերոսութիւն եւ վերնագոյն նեղացումը՝ դէպի ոճիր։ Անհատական ճիգն ու մտածումը կարող են առ առաւելն մի հոգեկան դաշտ հերկել, եթէ հանրային ապրումներից չեն սրուած. հաւաքական մտածումն է, որ յեղաշրջում է կեանքի կերպարանքը։ Այս ասպարէզում նոյնպէս՝ միտքն ու զգացումն այնքան արժէք ունեն, որքան հանրային են կամ ատակ են յետագային դառնալու հանրութեան միտք ու զգացում։ Կամքն արգասաւոր է միմիայն հանրային միջավայրում եւ այնքան ժամանակ, որքան ենթակայ է հանրային խթանների, որ հասնում են օգնութեան, երբ անհատական կամքի խթանը թուլանում է։ Հանրային մարդը զիջում է իր մտածումն ու կամքը մի տեղ, մի ուրիշ տեղ յաղթանակելու համար։ Զիջումը չքացում չէ, այլ շեղում արգելքի հանդէպ։ Կուսակցական մարդը իր ընկերների գործակցութեան մէջ է տեսնում իր մտածումի գործնական եւ իրական արժէքը եւ նրանց հաւաքական մտածումի մէջ՝ իր անհատական կամքի պիտանութիւնը։ Ոչ ոք կարող է իրան ճանաչել ճշմարտապէս՝ մենակ մնալով եւ ոչ ոք կարող է հանրային մտածումներ իրացնել՝ անհաղորդ մնալով իր նմաններին։ Ոչ ոք կարող է

հանրօգուտ գործ ստեղծել իր երկու ձեռքով եւ հանրօգուտ մտածումներ ունենալ՝ իր մտքով միայն։ Կուսակցութեան հաւաքական մտածումն այն յեսանն է, որ սրում է անհատի մտածումը, իսկ կուսակցութեան հաւաքական կամքը այն կոթն է, որին յարմարելով՝ անհատական մտածումը կարող է աջ ու ձախ կտրել։ Կազմակերպութեան սալի վրայ են յղկում անհատական խառնուածքի խանգարիչ ցցուածքները եւ նրա հակակշռի տակ է, որ կամեցողութեան յաճախ կոյր ոյժը դառնում է հանրօրէն պիտանի ազդակ։ Ոչ ոք, որ հնազանդել չգիտէ՝ կարող է երբ եւ իցէ հնազանդութեան բերել. հնազանդութիւնը մեքենականութիւն ունի, որ մարդ պէտք է իր հոգու մէջ ճանաչած լինի, յետագային ուրիշների վրայ գործադրելու համար։ Կոկոզավիզ անհատապաշտը ինքն է միայն, որ կայ. իր կօշիկը կարող է հագնել, բայց հանրային յեղաշրջումներ անկարող է կատարել, որովհետեւ այդ կարգի գործերը լինում են համադիր ճիգերով, հաւաքական մտածումով եւ գործակից աշխատանքով, այսինքն, անհատի մէջ անձնականը մերժելով եւ հանրայինը առաջ քաշելով։ Նա, որ չգիտէ օրինակի հետեւել, երբեք չի կարող օրինակ դառնալ։ Կուսակցականն իր փորձ ընկերին նայելով է, որ դառնում է փորձուած ընկեր։ Հաւաքականութեան մէջ է, որ մշակւում են հանրային բարքի օրինակները, կանոններն ու կարգերը եւ մշակւում են՝ փոխադարձ գործակցութեամբ։ Հնազանդել այս կարգերին ու կանոններին, հետեւել այս օրինակներին՝ նշանակում է հաւաքական կեանքի գոյութիւնն ապահովել, իսկ հաւաքական կեանք ապահովել նշանակում է անհատական կեանքի բովանդակութիւնն ապահովել. որովհետեւ «մարդը» մարդու մէջ հաւաքական կեանքի գոյացումն է եւ հաւաքական ճիգերի արդիւնքը. եւ մարդ այնքան աւելի մեծ արժէք ունի, որքան պայծառօրէն ցոլացնում է իր խմբակցութիւնը։ Այս դէպքում է միայն,

որ անհատի խօսքն ստանում է արժէք ու կշիռ, որովհետեւ նա բանաձեւում է հաւաքականութեան միտքը, զգացումն ու բարքը, որովհետեւ նա խօսում է այն ինչ, որ կարող էր եւ իր ընկերն ասել, եթէ նրա չափ խօսել իմանար. որովհետեւ նա մտածում է այն, ինչ որ՝ թէեւ ոչ նոյն պայծառութեամբ, բայց էապէս մտածում է հաւաքական մարմնի անդամը. որովհետեւ նա գործում է այնպէս, ինչպէս կը գործէր իր ընկերը, եթէ նոյն վճռականութիւնն ունենար: Զանգուածի համամտութիւնը, համազգացումն ու համաձայնութիւնն այսպիսով խթանում են անհատի կորովը եւ դարձնում են նրան հանրային շարժումների ազդակ, հանրային ապրումների թարգման, հանրային մտածումի առաջնորդ: Այսպիսով, անհատը կամ ինքն է օրինակ առնում կամ ինքն է օրինակ դառնում եւ ներքնապէս ազատօրէն մտածելով եւ ազատօրէն ինքն իրան յղկելով, ազատօրէն վճիռ արձակելով եւ գործի ձեռնարկելով՝ նա դառնում է ինքնաբեր եւ ինքնակամ մի կրկնութիւն հաւաքական տիպարի, մտայնութեան ու բարքի: Նա մի տարբեր ցոլացումն է դառնում նոյն խորքի, որ իբր «անհատական» գիտակցուելով ներապէս, իրօք հանրային է իր էութեան մէջ: Նրա զգացումը, միտքն ու գործը այնքան աւելի փայլուն են երեւում, որքան աւելի շնորհք ու վճռականութիւն ունի իր հոգին եւ այնքան աւելի զօրաւոր է իր ազդեցութիւնը եւ վարակիչ իր օրինակը, որքան աւելի մեծ զանգուածների արձագանգ է ինքը: Նա չի կարող պարծենալ իր մտածումով, իր կամեցողութեամբ, իր անկախութեամբ եւ ազատութեամբ, բայց իրօք նա է, որ ինքնուրոյն կամք ու մտածում ունի եւ անկախ ու ազատ նկարագիր: Այս կարգի մարդիկն են, որ երեւութապէս ազատ ու անկախ չեն, քանի որ անդամ են մի կուսակցութեան, բայց փաստօրէն զօրաւոր են եւ ազդեցիկ, քանի որ տիպար են մի հաւաքականութեան: Այս կարգի մարդկանց յիշատակն է, որ պահում է պատմութիւնը,

որովհետեւ նրանք հաւաքականութեան ունեցածը մատուցում են նրան՝ աւելի ցայտուն, վճռական ու հմայիչ տեսքով. որովհետեւ հաւաքականութիւնն իր դէմքն է տեսնում նրանց կեանքի հայելու մէջ եւ ընդունում է թէ նրանք «ոսկր են յոսկերաց եւ մարմին ի մարմնոյ»:

Կուսակցութիւնն այսպիսով կաշկանդում է իր անդամին՝ ազատութիւն տալով նրան. կապում է յանձնառութեամբ եւ արձակում, որ ստեղծագործէ. գծում է ուղիները՝ բայց թողնում է, որ ամէն ոք գնայ իր կարողութեան չափով. պարտադրում է որոշումները՝ բայց թողնում է, որ իրագործես ինչ որ ամենից աւելի լաւ կարող ես իրագործել: Բանական ազատութեան մի մարզավայր է Դաշնակցութիւնը, ուր ամէն ոք կոչուած է ստեղծագործելու եւ արժեցնելու իր կարողութիւնը համազգային քաղաքական շահերի օգտին: Այս է պատճառը, որ չկան աւելի լաւ ունկնդրուած բանախօսներ, քան ունի Դաշնակցութիւնը եւ աւելի լաւ կատարուած որոշումներ, քան հանում է Դաշնակցութիւնը, որովհետեւ նրանք պայծառ ու ողորկ ձեւ են տալիս կուսակցական զանգուածի մտածումներին, բանաձեւում են նրա պահանջներն ու տենչերը եւ վարում են կեանքը նրանց որոշումների համաձայն: Ու քանի որ դաշնակցականները հայ են եւ Դաշնակցութիւնը հայ յեղափոխական կազմակերպութիւն, հետեւապէս մի եւ նոյն ժողովուրդի զաւակներն են եւ նոյն ազգի լաւագոյն երազն են ձգտում իրացնել եւ լաւագոյն տիպարը մարմնացնել՝ – ուստի նրանց խօսքը, որ ուղղած է «ընկերներին», դառնում է մի խօսք, որ ունկնդրում է համայն հայութիւնը եւ դաշնակցականի գործը, որ կատարում է իր ընկերների որոշման համաձայն, դառնում է լայն զանգուածների համակրանքի առարկայ. ոչ այն համակրանքի, որ ծափ ու ծնծղայ է զարկում, այլ այն համակրանքի, որ ապրում

է հոգիների խորքը. եւ մենք տեսնում ենք թէ ինչպէս Դաշնակցութիւնը փաստաբանում են անհատներ, բայց պահում են զանգուածները, խաչակրութիւն են քարոզում նրա դէմ եւ ստանում են ովսաննաներ իբր արդիւնք: Այս ամենը եւ պէտք է ականջներին օղ անեն մեր այն բոլոր աւագ ու կրտսեր ընկերները, որ կարծում են թէ իրենց անհատական մտածումն ու կարծիքը աւելի կշիռ ունեն, քան դաշնակցական հանրութեան մտածումն ու կարծիքը. որ իրենց անձնական պատասխանատուութիւնը գերադասում են կուսակցութեան հաւաքական պատասխանատուութիւնից, որ երբեմն միտում են ցոյց տալիս շքեղօրէն մեկուսանալու իրենց անհատական տարակարծութեան մէջ: Ոչ ոք մեծացած է մեկուսացումով, ամենքը շահած են հաղորդումով: Զանգուածը յանցաւոր լինել չի կարող, քանի որ ինքն է դատաւորն ու օրէնսդիրը: Զանգուածների հետ լինել նշանակում է յանցանքներից խուսափել: Պատասխանատուութիւնից զերծ է նա, որ թէկուզ անդունդն է գահավիժում զանգուածների հետ միասին. մինչդեռ պատասխանատու մնում է նա, որ մնում է մեկուսի իր անհատական խելքով ու «իմաստութեամբ»: Պատմութիւնը նրանց դաւաճան է անուանում. կուսակցութիւնը՝ անպիտան անդամ եւ կեանքը՝ հանրօրէն անարժէք:

***

Մենք տեսանք թէ ո՞վ է «դաշնակցականը». բայց ո՞րն է Դաշնակցութիւնը. ոչ թէ կուսակցութիւնը, այլ դաշնակցութիւնն իր էութեան մէջ: Բոլոր հին ու նոր ընկերները, բոլոր հին ու նոր մարմիններն իրենց գործերով միասին կազմում են մեր կուսակցութիւնը: Եւ նրանք, որ նահատակուած ու մեռած են վաղուց, է՛ւ նրանք, որ բանտ ու աքսորի մէջ են այսօր կամ ազատ գործում են աշխարհի հեռաւոր

կողմերում. Եւ այն գործերը, որ ծրագրուած են. Եւ այն ձեռնարկները, որ կան, Եւ այն կուսակցական կեանքը, որ եռում է ամենուր – այս ամենը մեր կուսակցութիւնն են կազմում: Այստեղ մտնում են թէ՛ մեր Ծրագիրը, թէ՛ մեր Կանոնագիրը, թէ՛ մեր որոշումները: Բայց ո՞րն է սրանցից Դաշնակցութիւնը. արդեօք այս կամ այն Կենտրոնական Կոմիտէն կամ Շրջանային ժողո՞վը: Այս մարմիններն ու ժողովները դաշնակցական գործ են կատարում բայց զատ-զատ կամ միասին առած Դաշնակցութիւն չեն, թէեւ կուսակցութիւնն են: Դաշնակցութիւնը կուսակցութեան ընդհանուր ժողովն է: Նրա վճիռներն են միայն, որ ճանաչւում են «դաշնակցական»: Որեւէ Շրջանային ժողով կարող է հարիւրաւոր որոշումներ կայացնել, բայց այդ որոշումները «դաշնակցական» կը ճանաչուին այն չափով, որքան չեն հակասում Ընդհանուր Ժողովի որոշումներին: Այս կամ այն սոսկական «դաշնակցականը» կամ մարմինը կարող են բազմատեսակ գործեր յղանալ եւ կատարել, բայց նրանք չեն համարուի «դաշնակցական» գործ ու յղացում, եթէ դէմ են Ընդհանուր ժողովների ոգուն եւ թողած աւանդութեան: Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն, որ հաւատարիմ աւանդապահն է կուսակցութեան եւ Ընդհանուր ժողովի որոշմանց իրագործողը, կարող է չեղեալ նկատել մի շրջանի որոշում եւ անգոյ՝ մի կուսակցական մարմին, եթէ նրանք դէմ են Ընդհանուր ժողովների վճիռներին եւ նրանց աւանդութեան: Ընդհանուր ժողովի մշակած Կանոնագիրն է, որ պարտադիր է բովանդակ Դաշնակցութեան համար: Որեւէ Շրջան չի կարող մի մասնաւոր Կանոնագիր մշակել եւ պարտադիր հռչակել իր իսկ շրջանի համար, եթէ նրա հիմունքները հակասում են ընդհանուր Կանոնագրին, որ Ընդհանուր ժողովի դրոշմն են կրում: Բոլոր ընկերները եւ մարմինները պատասխանատու են գերադաս մարմիններին եւ ժողովնե-

րին, միմիայն Ընդհանուր ժողովն է, որ պատասխանատու չէ ոչ ոքի առջեւ: Նրա դատաւորը հայոց պատմութիւնն է, մինչ-դեռ մարմինների եւ ընկերների գերագոյն դատաւորը Ընդ-հանուր Ժողովն է: Նա կարող է պատուհասել եւ վարձատրել, բայց ինքը ենթակայ չէ պատուհասի եւ վարձատրութեան: Ամէն մի «դաշնակցական» մարմին ու անդամ պարտաւոր են իրենց ընթացքը շտկել այն ուղղութեամբ, որ մատնանշում է Ընդհանուր Ժողովը, միայն ինքն է, որ իր ընթացքը որոշում է ազատ եւ անկախ: Նա յենւում է իր անդամների իմացական կարողութեան եւ փորձառութեան, լսում է բոլոր շրջանների եւ մարմինների կարծիքն ու տրամադրութիւնը, նկատի ունի ամենքի պահանջն ու դիտողութիւնը, բայց են-թակայ չէ նրանց: Այս ամէնը, որ գալիս են կուսակցութեան շրջաններից ու շարքերից՝ խորհրդակցութեան, դիտողութեան եւ կշռադատութեան նիւթ են միայն, բնաւ պարտադրանք: Ոչ մէկ անհատ, մարմին կամ շրջան կարող են Ընդհանուր ժողովին հրամայական լիազօրագիր ուղարկել եւ ոչ մէկը նրանցից իրաւասու է իրան Դաշնակցութիւնից դուրս հռչակել, եթէ իր կարծիքը չանցնի Ընդհանուր ժողովի մէջ: Ընդհանուր ժողովի շէմքը կոխելով՝ ամէնք ոք յանձնառու է նրա որոշումները պարտադիր նկատել իր շրջանի համար, որովհետեւ Ընդհանուր ժողովը բուն իսկ Դաշնակցութիւնն է, նրա միտքն ու կամքը: Նա Դաշնակցութիւնն է իր ներկայ կազմով եւ անցեալ պատմութեամբ. այնտեղ շնչում են ոչ միայն դաշնակցական զանգուածի ոգին, մարմինների եւ ժողովների մտածումն ու տրամադրութիւնները, այլ եւ այն հազարաւոր հերոսների եւ նահատակների յիշատակը, որ իրենց գործով ստեղծած են Դաշնակցութիւնը եւ իրենց արիւնով ամրապնդած են նրա հիմունքները: Ընդհանուր ժողովն իր վճիռներն արձակում է ոչ միայն իր իմացութ-եան ու փորձին կռթնած, այլ եւ նրանց յիշատակին եւ

աւանդութեան:

Մինչեւ Ընդհանուր ժողովը դուռը լինելով խստօրէն կարգապահ եւ կաշակնդուած կուսակցականներ, պատգամաւոր ընկերները ներս մտնելով՝ դառնում են լիովին ազատ եւ անկաշկանդ: Այստեղ ոչ ոք եւ ոչինչ կարող է արգելք դառնալ պատգամաւորի մտքի եւ խղճի ազատութեան: Այստեղ դադարում է ամէն իշխանութիւն եւ հեղինակութիւն եւ Ընդհանուր ժողովն ինքն է դառնում միակ իշխեցողն ու հեղինակութիւնը: Այստեղ խօսում, դատում ու վճիռ է արձակում ոչ թէ այս ու այն պատգամաւորը, այլ նոյն ինքը քառասնամեայ Դաշնակցութիւնը: Ինչ որ նա վճռէ՝ վերջնական է եւ անառարկելի, ինչ որ կանոնագրէ՝ պարտադիր է ամենքի համար. ինչ որ մտածէ եւ բանաձեւէ՝ այ՛ն է «դաշնակցական» միտքն ու կամքը: Կուսակցութեան ներքին բարեշրջումը աղբիւրանում է շրջանների մէջ եւ այստեղ է յորդում գետի պէս. զանգուածների մտածումն ու տրամադրութիւնը ծիլ արձակելով զատ-զատ շրջանների մէջ՝ այստեղ է ստանում իր վերջնական կերպարանքը եւ պարտադրւում ամենքին: Ընդհանուր ժողովը կարող էր ասել կուսակցութեան. «զքոյսդ ի քոյոց քեզ մատուցանեմ», այսինքն քո ունեցածն է, որ մատուցանում եմ քեզ, բայց վերջնապէս բանաձեւած եւ հանրօրէն պարտադիր:

Բոլոր ինքնասիրութիւններն ու յաւակնութիւնները դադարում են Ընդհանուր ժողովի մէջ՝ լինեն անհատական, շրջանային թէ հատուածական. ոչ ոք բռնանում է միւսի վրայ՝ լինեն անհատ թէ շրջան, եւ վճիռները տրւում են միջին եզրով, որ իմաստութիւնն ինքն է: Ծայրագոյն աջերն ու ծայրագոյն ձախերը գոհանում են միջին եզրը գտնելով. մէ-կը մտածում է, որ իր տեսակէտը թէեւ չյաղթանակեց, բայց

նրանից մի բան անցաւ ժողովի որոշման մէջ։ Եւ այսպէս կեանքը թելադրում է, շրջաններն ուղարկում են Ընդհանուր Ժողով, Ժողովը քննում ու կշռադատում է եւ հանած վճիռը կազմում է մի նոր փուլը Դաշնակցութեան պատմութեան, ու նաեւ մի փուլը հայոց նորագոյն պատմութեան, որքան Դաշնակցութեան գործը հայոց պատմութեան մի մասն է կազմում։ Այսպէս է, որ կուսակցութիւնը մնում է մէկ եւ անբաժան, բայց փոփոխւում է ժամանակի հետ։ Այսպէս է, որ ամէն քառամեակ մի ընդհանուր բնոյթ ունի Դաշնակցութեան պատմութեան մէջ, որովհետեւ ապրում ու գործում է միեւնոյն Ընդհանուր ժողովի շունչով։ Այսպէս է նաեւ, որ ոչ մէկ մարմին իրաւունք է համարում իրան «Դաշնակցութիւն» նկատել, թէեւ բոլորն իրանց «դաշնակցական» են համարում եւ ոչ ոք համարձակութիւն ունի յանուն Դաշնակցութեան խօսելու, եթէ չի կրկնում կամ չի մեկնաբանում Ընդհանուր ժողովի որոշումները։ Այսպէս է դարձեալ, որ անհատ ընկերների մտածումները որոշ ուղղութիւն են ստանում եւ աշխարհի չորս կողմն ընկած դաշնակցական ընկերներն ու մարմինները միեւնոյն դիրքն են բռնում միեւնոյն խնդիրների հանդէպ։ Այստեղ նոյնպէս գործում է ազատութեան արգասաւոր սկզբունքը։ Դաշնակցականները չեն թուլակում իրար, այլ իրենց մտածումն են արտայայտում եւ իրենց համոզումը։ Նրանք ոչ թէ հնազանդում են վերին կարգադրութեան՝ իբր անկերպարան հլուներ, այլ արտայայտում են իրենց համոզումն՝ իբր գիտակից մարդիկ, որովհետեւ շրջանների պատգամաւոր ընկերները նախ քան քուէ տան մի կարծիքի, որ պէտք է դառնայ կուսակցութեան աշխարհահայացքի տարերից մէկը կամ նախ քան հաւանութիւն տան մի որոշման, որ գործունէութեան նոր ուղիներ է հարթում կուսակցութեան առջեւ՝ նրանք նախապէս համոզւում են ներքուստ եւ լիովին։ Դրա համար յաճախ մեր Ընդհանուր ժողովներն այնքան

երկար են տեւում եւ վճիռները տրւում են մեծ մասամբ միաձայն։ Որովհետեւ սա տարբեր կուսակցութեանց պատգամաւորների մի ժողով չէ, ուր ամէն մի պատգամաւոր յայտնում է իր տեսակէտը եւ քուէն է որոշում վերջապէս. այլ միեւնոյն կուսակցութեան Ընդհանուր ժողովն է, ուր կան տարամիտ ընկերներ, բայց չկան հակառակորդ բանակներ. ուր ամենքի համար թանկ է կուսակցութիւնը եւ նրա աներեր գոյութիւնը պայման է յետագայ ամէն գործունէութեան. ուր կարծիքներն աւելի կշիռ չունեն, քան կուսակցութեան Ծրագիրն ու հետապնդած գերագոյն նպատակը, ուր բոլոր ընկերները պէտք է մտածումով նոյնանան, որ դուրս գալով ժողովից՝ իրենց շրջանների մէջ միեւնոյն ուղղութեամբ վարեն մտքերն ու գործերը եւ իբր նորադարձներ նոր եռանդով ու խանդավառութեամբ վարակեն շարքերը։ Այս ձեւով միայն կարող է կուսակցութիւնը մնալ միաձոյլ եւ անսասան եւ հայ ժողովուրդի կեանքի մէջ կատարել այն պատմական դերը, որ վիճակուած է նրան։

***

Ոմանք կարող են շփոթել մեր Ընդհանուր ժողովը պարլամենտի հետ եւ մեր բիւրօն՝ կառավարութեան։ Թէ-եւ երկուսն էլ ընտրուած պատգամաւորների վճռաբեր մարմիններ են, բայց նրանք մեծապէս տարբեր են իրարից։ Պարլամենտը մի երկիր է ներկայացնում, Ընդհանուր ժողովը՝ մի կուսակցութիւն։ Այնտեղ մի երկրից տարամիտ անձեր են հաւաքուած իբր տարատեսակ շահերի պաշտպան, այստեղ նոյն կուսակցութեան համամիտ անդամներն են հաւաքուած իբր միեւնոյն շահերի պաշտպան։ Այնտեղ ներկայ են հակառակորդբանակների սպայակոյտեր, այստեղ մի համերաշխ բանակի սպայակոյտ է հաւաքուած։ Չկայ մի պարտադիր Ծրագիր

պարլամենտի բոլոր անդամների համար եւ ոչ մի պարտադիր Կանոնագիր, որ բոլոր ընթացքը ճշտէր պարլամենտից դուրս. մինչդեռ կուսակցութեան բոլոր անդամները նոյն Ծրագիրն են պարտադիր համարում եւ նոյն Կանոնագիրը: Ընկերային երեւոյթների մէջ եթէ կայ մէկը, որ կարող է Ընդհանուր ժողովին զուգահեռ կազմել՝ – եկեղեցական հին ժողովներն են, ուր հաւաքւում էին նոյն դաւանանքն ունեցող մարդիկ, որ հետեւում էին նոյն կրօնին (ապրելու եղանակին), ձեւակերպում էին իրենց դաւանանք ու վարքի կանոնները (Ծրագիր եւ Կանոնագիր), որ պարտադիր են ամենքի համար: Պարլամենտը բովանդակ ազգն է ներկայացնում, Ընդհանուր ժողովը ազգի կազմակերպութիւններից մէկը: Նա օրինադրում է բովանդակ երկրի համար, Ընդհանուր ժողովն՝ իր կուսակցութեան: Նա կազմակերպում ու հակակշռում է հանրային կեանքի բոլոր մարզերը, սա պայքարի կազմակերպութիւն է եւ պայքարներից մի տեսակի – քաղաքական-յեղափոխական: Գործնական տեսակէտով Ընդհանուր ժողովը մի ռազմական խորհուրդ է, որ գծում է պայքարի մօտաւոր նպատակներն ու ընթացքը եւ թողնում է մնայուն սպայակոյտին իրագործելու: Դաշնակցութիւնն ունի պետութեան գործառնութիւններ – զինուորական, ներքին, արտաքին, դատական, լուսաւորութեան, ելեւմտական – եւ Ընդհանուր ժողովը որոշում ու վճիռ է տալիս այս ամենի մասին. բայց մինչդեռ պարլամենտի վճիռները բովանդակ պետութեան կեանքին են վերաբերում, Ընդհանուր ժողովն իր կուսակցութեան մասին է միայն վճիռներ տալիս:

***

Այս տեսակէտից ամէն մի քաղաքական կուսակցութիւն մի պետական սաղմ է եւ նպաստաւոր պարագաների մէջ

կարող է պետութիւն դառնալ՝ անպետութիւն ժողովուրդի մէջ եւ կառավարութիւն՝ պետութեան մէջ։ Պատմութեան բերումով նա իր կուսակցական կազմակերպութիւնը կարող է դարձնել պետական կազմակերպութիւն։ Այնտեղ, սակայն, ուր պետութիւն եւ կուսակցութիւն նոյնանում են – ստեղծւում է մի չարաշուք բռնութիւն, որովհետեւ այն կարգերը, որ սահմանուած են որոշ խմբակցութեան համար՝ պարտադրում են ամենքին եւ այն Ծրագիրը, որ մշակուած է որոշ նպատակներով՝ համարւում է պիտանի բոլոր նպատակների համար։ Իշխանութեան անցնելով՝ կուսակցութիւնը պէտք չէ դադարի կուսակցութիւն մնալ, որովհետեւ բովանդակ ազգը մի կուսակցութիւն լինել չի կարող – ազգը այլազան շահերի, մտայնութեանց եւ տիպարների մի զանգուած է – եւ կազմակերպութիւնը չի կարող պետական կազմ լինել, քանի որ պետութիւնը շատ աւելի այլազան գործառնութիւններ ունի, քան կուսակցութիւնը։ Նա կարող է ներկայացնել զանգուածային շահեր, բայց ոչ բոլոր շահերը։ Նա կարող է հանդէս բերել հանրային ծաւալուն մտայնութիւն եւ համախմբել ազգութեան որոշ տիպարները, բայց ոչ բոլոր մտայնութիւններն ու տիպարները։ Իշխանութեան հասած կուսակցութիւնը մի մասն է երկրի ազգաբնակութեան եւ կոչ-ւած է ոչ թէ ամենքին թեքելու իր լուծի տակ, այլ ամենքի հետ միասին գտնելու շահերի եւ ուժերի միջինը եւ նրանց ընթացք տալու։ Իշխանութեան հասնելով՝ կուսակցութեան գործը չի դադարում, այլ ծաւալում ու բարդանում է. նա հիմա կարող է աւելի շատ բեմերից խօսել եւ աւելի տիրաբար, աւելի շատ ուժեր համախմբել եւ աւելի ընդարձակ գործերի ձեռնարկել, բայց նա չի կարող նոյնանալ բովանդակ ազգի հետ, թէեւ կարող է շահել զօրեղ մեծամասնութիւն։ Մեծամասնութիւնը, սակայն, յարում է ոչ թէ Ծրագրի ամբողջութեան, այլ նրա այս կամ այն կէտին եւ այնքան ժամանակ «կուսակցա-

կան» է, որքան կուսակցութիւնը հետամուտ է այդ կէտերի իրացման։ Բաւական է, որ կուսակցութիւնը հետամուտ լինի իր Ծրագրի լիակատար եւ արմատական իրացման՝ որ համակիր մեծամասնութիւնը գնալով հալուի եւ կուսակցութիւնը մնայ իր հին սահմանների մէջ։ Իսկ եթէ կամենայ յամառիլ եւ մնալ իշխանութեան գլուխ՝ նա ստիպուած է դիմել բռնութեան եւ գործել անհամակիր բազմութեան մէջ – իր քարոզն ու յորդորը դարձնելով սաստ եւ իր խօսքի համոզիչ ուժին ընկեր տալով սուին ու մտրակ։ Այստեղ վերջանում է յեղափոխութիւնը եւ սկսում է բռնակալութիւնը։ Այն անփառունակ վախճանից խուսափելու համար կուսակցութիւն եւ պետութիւն պէտք է խստօրէն տարբերուեն «դաշնակցականի» գիտակցութեան մէջ։ Դաշնակցութիւնը հետամուտ է հայ պետութիւն ստեղծելու եւ ոչ թէ ինքը հայ պետութիւն դառնալու։ Պետութիւնն ազգի քաղաքական կերպարանքն է եւ ոչ թէ կուսակցութեան։ Կուսակցութիւնը պետութեան ազդակներից մէկն է, բայց պետութիւն չէ եւ լինել չի կարող։ Նրանք, որ կարծում են, թէ անկախ Հայաստանը Դաշնակցութեան մարմնացումն է լինելու, նրա նահանգները՝ շրջաններ, նրա վարչութիւնները՝ կոմիտէներ, շատ թիւր ըմբռնում ունեն ե՛ւ կուսակցութեան, ե՛ւ պետութեան մասին։ Այս մտածումը «դաշնակցական» չէ, այլ եթէ կ'ուզէք՝ «մեծամասնական» է։ Նրանք է, որ պետութիւն եւ կուսակցութիւն շփոթում են իրար հետ եւ ստեղծած են անօրինակ բռնութիւն, որ ժխտում է շահերի եւ մտածման ամէն տարբերութիւն։ Մտածման մի եղանակ է նա ճշմարիտ համարում, որ իր իրաւունքն է. եւ նոյն եղանակն է ամենքին պարտադրում, որ բռնութիւն է։ Նա իրան չի նկատում պատմական եւ ընկերային ազդակներից մէկը, այլ համարում է միակը։ Այս մտայնութիւնը խորթ է Հ. Յ. Դաշնակցութեան եւ խորթ պիտի մնայ։ Նա չի բռնանում, այլ յորդորում է յանձնառութեան։ Նա պայքարում

է անիրաւութեան դէմ եւ խուսափում է անիրաւութիւնից: Նա հրաւէր է կարդում, որ հայ մարդը քաղաքական ազատութեան ձգտէ եւ իր Ծրագիրն է առաջադրում իբր լաւագոյն լուծում հայ ժողովրդի հիմնական պահանջների, բայց նա չի բռնադատում, որ ամէն ոք իր մտածումն ու գործելակերպն ունենայ: Դաշնակցականն ինքն է բռնանում իր վրայ եւ ոչ կուսակցութիւնը նրա վրայ: Նա կարգապահ է ներքին համոզումով եւ ոչ արտաքին բռնութեամբ: Նա կուսակից է որոշ քաղաքական կացութեան եւ որոշ տնտեսական կարգի ոչ այն պատճառով, որ ստիպում են նրան, այլ որովհետեւ այդ է իր համոզումը:

Այս հանգամանքը պէտք չէ մոռանալ մանաւանդ ազգային գործերի մէջ, որ դաշնակցականը յաճախ իշխանութեան մաս է կազմում: Պէտք է որոշապէս տարբերել կուսակցութիւն եւ իշխանութիւն: Կուսակցութիւնն իշխանութիւն չէ, այլ իշխանութեան ազդակներից մէկն է միայն: Նա կարող է իշխանութեան հասնել, բայց պէտք է իր ինքնութեանը գիտակից լինի: Նա պէտք է միշտ հաշուի առնի այն «անտարբեր» զանգուածները, որոնց լուռ համամտութեամբ անցած է իշխանութեան գլուխ: Նա պէտք է հաշուի առնի ոչ միայն կուսակցական քուէները, այլ եւ այն մարդկանց, որ նրան քուէ տուած են առանց կուսակցական լինելու: Նա պէտք է հաշուի առնի, ոչ միայն նրանց, որ քուէարկած են թեր, այլ եւ նրանց, որ քուէարկած են դէմ եւ պայքարած են իբրեւ կատաղի հակառակորդ, որովհետեւ իշխանութիւնը ազգի եւ համայնքի վարչական կամքն ու կերպարանքն է եւ ոչ կուսակցութեան: Անցնելով իշխանութեան գլուխ՝ նա դառնում է ազգի եւ համայնքի բերան եւ ոչ միմիայն իր կուսակցութեան: Նա պէտք է աշխատէ իր Ծրագրի այն կէտերը իրացնել, որ յուսալի է, թէ հանրութեան հաւանութեան

կ'արժանանան։ Սա չի նշանակում Ծրագրից հրաժարուել – քանի որ ձեռնարկած գործերը Ծրագրից են բխում կամ նրա մի մասն են կազմում – սա նշանակում է յարմարուել միջավայրին եւ Ծրագրի հետապնդումը արդիւնաւոր դարձնել։

«ԴՐՕՇԱԿ», 1928, թիւ 8, 9, 10, 11, 12, 1930 թիւ 1, 2։
Առանձնատիպ՝ 1930 Փարիզ (Մատենաշար «Դրօշակ»ի, թիւ 68)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Ա.

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Հ. Յ. Դաշնակցութեան կանոնագրի առաջին յօդուածն իրաւունք է տալիս ամէն մի չափահաս Հայի անդամակցելու մեր կուսակցութեան, պայմանով սակայն, որ նա ընդունէ մեր ծրագիրն ու կանոնագիրը եւ երդուէ հաւատարիմ մնալ նրանց: Այս մասին բաւական խօսած եմ իմ մէկ գրութեան մէջ, որի անունն է. «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին»: Այս անգամ ես պիտի խօսեմ յատկապէս մեր կանոնագրի մասին, աշխատելով պարզել նրա դերն ու նշանակութիւնը մեր կուսակցութեան համար: Նիւթի բնոյթն այնպէս է, որ ստիպուած եմ մի քանի կրկնութիւններ անելու, որի համար ընթերցողի ներողամտութիւնն եմ խնդրում: Աշխատած եմ մտածումներս վճիտ ու որոշ ձեւակերպել, որ մատչելի դառնան մեր բոլոր շարքային ընկերներին:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երբ մի քանի մարդ կեանքի որեւէ երեւոյթի մասին միատեսակ կարծիք ունին՝ նրանց ասում են համամիտ մարդիկ: Սրանք կարող են շատ կամ քիչ լինել, մէկ կամ մի քանի երեւոյթների մասին միատեսակ կարծիք ունենալ, բայց նրանք միշտ համամիտ են եւ համամիտ կը համարուին, քանի դեռ նոյն երեւոյթների մասին տարակարծիք չեն

դարձած։ Կարող է պատահել, որ մի խումբ մարդիկ այս ինչ երեւոյթների մասին համակարծիք լինեն ուրիշ խմբի հետ, բայց նրանք պարզապէս համամիտ կը նկատուին եւ ուրիշ ոչինչ։

Շատ անգամ մարդիկ ոչ միայն իրար համամիտ են, այլ եւ յաճախ գործակից են, այսինքն միասնաբար նոյն գործն են անում կամ նոյն նպատակին են ծառայում։ Մարդկանց այս կամ այն խումբը միաժամանակ կարող է գործակցել մի քանի խմբերի հետ. այսպէս օրինակ՝ իբր մարդիկ՝ անդամ լինել այս ինչ միութեան, իբր հաւատացեալ՝ այս ինչ դաւանութեան, իբր քաղաքացի՝ այս ինչ կուսակցութեան, իբր բարեսէր՝ այս ինչ ընկերութեան եւ այլն։ Նրանք կարող են նաեւ այսօր գործակցիլ այս ինչ խմբին, վաղը՝ մի ուրիշ խմբի, բայց մէկ խմբի գործակցին թէ մի քանի խմբերի՝ նրանք միշտ կը համարուին գործակիցներ։ Այսպիսով տեսնում ենք թէ մարդկային ընկերութեան մէջ անհատներն ու խմբերը կարող են իրար համակարծիք գտնուիլ եւ ուրեմն՝ համամիտ նկատուիլ եւ միասնաբար գործեր կատարել եւ ուրեմն՝ գործակից համարուիլ։

Կուսակցութիւնը համամիտ եւ գործակից մարդկանց միութիւն է։ Այս համամտութիւնն ու գործակցութիւնը սակայն տեւական բնոյթ ունին։ Յաճախ որեւէ ձեռնարկի շուրջ համախմբւում են մարդիկ, որ իրար հետ առժամապէս կապուած են այդ ձեռնարկը յաջողացնելու համար. եւ երբ յաջողում կամ ձախողում են՝ ցրւում են, որովհետեւ նրանց կապը առժամեայ բնոյթ ունէր։ Կուսակցութեան կամ ընկերութեան անդամներն այդպէս չեն. նրանց կապը տեւական է։ Այս տեւական կապն է, որ մարդկային խմբերը դարձնում է ընկերութիւն, կուսակցութիւն կամ միութիւն։

Նրանք կապուած են իրար եւ համամիտ ոչ թէ կարճ ժամանակի եւ մի որոշ ձեռնարկի համար, այլ երկար ժամանակի եւ շատ գործերի համար։ Այսպէս են օրինակ Հայ Կարմիր Խաչը, Համազգայինը, Բարեգործականը, ինչպէս նաեւ առեւտրական, գործակցական եւ այլ կարգի միութիւնները։ Այդ ընկերութեանց եւ միութեանց անդամները կապուած են տեւապէս որոշ նպատակների համար եւ որոշ ձեւով։ Նրանց նպատակները եւ փոխադարձ կապի ձեւը նախորոշում է նրանց կանոնագիրը։ Այդ կանոնագիրն է, որ համամիտ մարդկանց խմբերը դարձնում է կազմակերպութիւն, որոշելով անդամների եւ մարմինների փոխադարձ կապերը։ Այս տեսակ մի կազմակերպութիւն է եւ մեր կուսակցութիւնը, որ ունի որոշ նպատակ եւ որոշ կանոնագիր։

Ընկերութիւնները եւ միութիւնները, ինչպէս նաեւ կուսակցութիւնները տարբերում են իրենց նպատակներով եւ փոխադարձ կապերի ձեւով։ Այսպէս՝ առեւտրական ընկերութեան նպատակն է ապրանքների փոխանակութեամբ դրամ շահեցնել իր անդամներին, գործակցական ընկերութեան նպատակն է աժան եւ ընտիր ապրանք մատակարարել իր անդամներին կամ միասնաբար ապրանք արտադրելով՝ շահը հաւասար բաշխել արտադրողներին։ Բարեսիրական ընկերութեանց նպատակն է օգնութեան հասնիլ կարօտներին։ Այս ընկերութեանց կանոնագիրը նախորոշում է անդամների եւ մարմինների իրաւունքն ու պարտականութիւնն այն ձեւով, որ նպաստաւոր լինի իրենց նպատակի իրագործման։ Ինչպէս տեսնում էք ընկերութեանց եւ միութեանց նպատակները կա՛մ շահասիրական են, կա՛մ շահակցական, կա՛մ բարեսիրական. կան, որ նպատակ ունին ժողովուրդը լուսաւորելու, կան որ հետամուտ են մարզանքն ընդհանրացնելու, կան որ ձգտում են գիտութիւն մշակել,

ուրիշներ՝ այս կամ այն կրօնը տարածել եւայլն։ Սրանցից ոմանք իրենց անդամների նիւթական շահն ունին նկատի, ոմանք՝ ուրիշների բարեկեցութիւնը, մի քանիսը մարդկութեան բարձրագոյն շահերը։ Այս կարգի կազմակերպութիւն են եւ քաղաքական կուսակցութիւնները եւ նրանց շարքին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Հ. Յ. Դաշնակցութեան նպատակն է վերադարձնել հայոց ազգին իր պատմական հայրենիքը եւ հաստատել այնտեղ ընկերվարական կարգեր՝ հայ պետութեան հովանու տակ։ Այսպիսով մեր կուսակցութիւնը ոչ շահասիրական եւ ոչ մահակցական միութիւն է. միաժամանակ նա բարեսիրական ընկերութիւն չէ։ Շահասիրական եւ շահակցական ընկերութիւնները մտածում են իրենց անդամների նիւթական շահերն ապահովել. բարեսիրական միութիւնները ձգտում են իրենց անդամներից դուրս գտնուած կարօտեալներին օգնել։ Քաղաքական կուսակցութիւնները, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը հետամուտ են պաշտպանելու այն դասակարգի տնտեսական եւ քաղաքական շահերը, որի գիտակից անդամները իրար գործակցելով՝ կազմած են կուսակցութիւնը։ Ուրեմն ոչ թէ կուսակցութեան անդամների շահերն է, որ պաշտպանում է Դաշնակցութիւնը, այլ այն դասակարգի շահերը, որին պատկանում են դաշնակցականները։ Հ. Յ. Դաշնակցութիւնը հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւնն է։ Այդ դասակարգը իր բովանդակ զանգուածով մեր կուսակցութեան անդամ չէ. բայց այդ հանգամանքն արգելք չէ, որ մեր կուսակցութիւնը այդ զանգուածի շահերը պաշտպանէ եւ նրա քաղաքական եւ տնտեսական բարեկեցութիւնը իր գերագոյն նպատակը համարէ։ Այս նպատակին հասնելու համար է, որ իրար մօտ եկած են աշխատաւոր դասակարգի

գիտակից անդամները եւ որոշ կանոնագրով ստեղծած են մի որոշ կազմակերպութիւն եւ տեւապէս գործակցում են իրար հետ։ Կանոնագիրն է այսպիսով, որ ցրիւ անհատներն ու խմբերը տեւապէս կապում է իրար հետ եւ դարձնում կազմակերպութիւն։ Առանց կանոնագրի, որ նախորոշում է անդամների եւ մարմինների փոխադարձ կապը՝ համամիտ եւ գործակից անհատներն ու խմբերը չէին կարող կուսակցութիւն համարուիլ։ Կանոնագիրը կուսակցութեան ողնաշարն է, որով կանգուն է նա եւ գործունակ։ Այս է պատճառը, որ ամէն ընկերութիւն, միութիւն եւ կուսակցութիւն աշխատում է իր կանոնագիրը անխախուտ պահել եւ խստիւ գործադրել, որովհետեւ գիտէ եւ համոզուած է, թէ կանոնագիրն է իր գոյութեան պայմանը եւ յարատեւութեան խարիսխը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԻՐՆ ՈՒ ԱՆԴԱՄԸ

Մեր կուսակցութիւնն ունի շատ մը համակիրներ ու գործակիցներ եւ աւելի շատ ատեցողներ եւ հակառակորդներ։ Համակիրն ու գործակիցը առանձին առած՝ պատահական անձեր են եւ ցրիւ ուժեր, որոնց բերած նպաստը արժէք է ստանում կուսակցութեան գործի շնորհիւ։ Նրանք տեւապէս կապուած չեն մեզ հետ եւ կուսակցութեան արժէքն ու հեղինակութիւնը նրանցից չէ կախուած։ Նրանք ո՛չ մէկ պարտականութիւն ունին մեր հանդէպ ինչպէս նաեւ ո՛չ մէկ իրաւունք, որ նախատեսուած լինի մեր կանոնագրով։ Մեր կապերը նրանց հետ կենցաղական են եւ ոչ կանոնագրական։ Իրենք են որոշում իրենց նպաստի եւ օժանդակութեան չափն ու ժամանակը. նրանք այսօր կարող են համակիր ու գործակից լինել, իսկ վաղը անհամամիտ եւ հակառակորդ. այսօր անձնուիրութեամբ աշխատել, վաղը մատը մատին

չզարկել։ Համակիրը մեր կազմակերպութեան անդամ չէ, հետեւապէս ազատ է իր վարմունքի եւ մտածողութեան մէջ։ Մինչդեռ կուսակցութեան անդամը տեւապէս կապուած է մեզ հետ եւ իր իրաւունքն ու պարտականութիւնը նախորոշած է մեր կանոնագրով։ Մեր փոխադարձ կապը մեր անդամների հետ կանոնագրական է եւ այդ սահմանների մէջ՝ ընկերա-կան։ Կուսակցութեան անդամը պարտաւոր է համամիտ լինել ծրագրին եւ գործակցել կուսակցութեան ձեռնարկներին եւ պարտաւոր է ո՛չ թէ մի որոշ ժամանակ եւ մի որոշ ձեռնարկի համար, այլ այնքան ժամանակ, որ կը մնայ կուսակցութ-եան անդամ եւ այն բոլոր ձեռնարկների համար, ուր կը պահանջուի իր մասնակցութիւնը։ Նա երդուած է հաւատարիմ լինել կուսակցութեան ծրագրին եւ կանոնագրին։ Այն օրը, որ դադարի համամիտ լինել եւ գործակից՝ դրժած կը նկատուի իր երդմանը եւ կը դադրի կուսակցութեան անդամ համարուել։ Պարզ համամիտը կարող է համակիր լինել մեր ծրագրին եւ հակառակ՝ մեր գործին, կամ թէ՝ գործակցել մեզ հետ մեր այս կամ այն ձեռնարկութեան մէջ եւ հակառակ լինել մեր ծրագրին։ Այդ իր իրաւունքն է. նա ազատ է լիովին։ Բայց կուսակցութեան անդամը չէ կարող մեր ծրագրին ու կանոնագրին համամիտ լինել եւ մեր գործին հակառակ. կամ գործն ընդունել եւ մերժել ծրագիր ու կանոնագիր։ Նա պարտաւոր է ե՛ւ մեր ծրագիրն ու կանոնագիրն ընդունել ե՛ւ մեր գործին մասնակցիլ, այլապէս մեր կանոնագրի առաջին յօդուածով կը դադրի կուսակցութեան անդամ համարուել։

Պարզ համակիրն ու գործակիցը մեր կուսակցութեան անդամ չլինելով՝ ազատ է ինչպէս մեր կանոնագրի պաշտպանութիւնից, այնպէս եւ հետապնդումից։ Համակիր-ները մեզ բարեկամ են եւ ոչ թէ ընկեր. եւ մեր վերաբերումը նրանց հանդէպ կարող է եւ պէտք է լինի բարեկամական եւ ոչ

ընկերական։ Նրանց վրայ չէ, որ յենուած է կուսակցութիւնը իր քաղաքական պայքարի մէջ։ Նրանց օժանդակութիւնը պէտք է միշտ գնահատել եւ նկատի ունենալ, բայց ձեռնարկների ժամանակ կուսակցութեան անդամների թիւն ու կշիռը պէտք է իբր հիմք առնել։ Նրանց համար մեր ծրագիրն ու կանոնագիրը պարզ առիթներ են իրենց համակրանքն ու գործակցութիւնը ցուցադրելու, մինչդեռ կուսակցութեան համար ծրագիրն ու կանոնագիրը գոյութեան պայման են եւ կեանքի իմաստ։ Ծրագրով նախատեսնւած նպատակների համար է, որ կազմուած է կուսակցութիւնը եւ կուսակցութիւնը կայուն ու տեւական է իր կանոնագրով։ Թէեւ համակամ եւ համամիտ մարդիկ են, որ իրար մօտ գալով մշակած են մեր ծրագիրն ու կանոնագիրը, բայց մի անգամ մշակուելուց եւ ընդունուելուց յետոյ՝ նրանք շատ աւելի կայուն ու տեւական են դարձած, քան նրանց մշակող եւ ընդունող ընկերները։ Տարիները սահում են իրար ետեւից, հազարաւոր մարդիկ մտնում են կուսակցութեան շարքերը, իրար հետ գործակցում, ապրում ու մեռնում կամ նահատակւում՝ բայց ծրագիրն ու կանոնագիրը մնում են հաստատուն եւ իշխում են ու ղեկավարում մեր կուսակցութեան անդամներին։ Կանոնագրի հիման վրայ է, որ մտնում են նորերը, կանոնագրով են ընտրւում մարմինները, կանոնագրով են պատժւում անկարգները եւ վտարւում անսաստողները։ Եւ դա բնական է եւ հասկանալի, որովհետեւ այն օրը, որ ծրագիր ու կանոնագիր վերանան՝ կազմակերպութիւնը կը քայքայուի եւ կուսակցութիւնը կը լուծուի։ Անդամները կը մնան իբր սոսկական անձեր, բայց կուսակցութիւնը կը չքանայ։ Նրանց զօդող կապը կը խզուի եւ այլեւս չեն կարող տեւապէս եւ միասնաբար քաղաքական նպատակ հետապնդել։ Մինչ այդ՝ կուսակցութեան համախմբւած մարդիկ մտածելու մի եղանակ ունէին, որ նախորոշուած էր ծրագրի

մէջ եւ փոխադարձ կապի եւ ստորադասութեան մի ձեւ ունէին, որ նախորոշուած էր կանոնագրի մէջ. ամենքը կ'ընդունէին այդ նպատակը եւ կը պահէին այդ կապը։ Բայց երբ չքանան ե՛ւ ծրագիր ե՛ւ կանոնագիր՝ կը չքանայ եւ կուսակցութիւնը եւ նրա անդամները կը դառնան անհամամիտ եւ անկապակից անձերի ցրուած բազմութիւն։

Մի անգամ եւս կրկնենք, որ պարզ համակիրն ու գործակիցը չեն կարող կուսակցութեան անդամ համարուիլ։ Նրանք կարող են շատ յարգելի մարդիկ լինել, շատ խելացի, հայրենասէր եւ ազգասէր, շատ պարկեշտ եւ գիտուն, բայց նրանք միշտ կը մնան համակիր, երբեք կուսակցութեան անդամ, քանի դեռ կազմակերպուած չեն, այսինքն՝ քանի մեր ծրագիրն ընդունելով՝ կանոնագրական կապով միացած չեն մեզ հետ իբր նոյնիրաւ ընկերներ։ Նրանք կարող են մեր կուսակցութեան մեծամեծ ծառայութիւններ մատուցած լինել, բայց իրաւապէս մեր կուսակցական կեանքի, մեր ծրագրի եւ կանոնագրի վրայ ազդել չեն կարող։ Համեստագոյն անդամի ձայնը մեր կուսակցութեան մէջ աւելի կշիռ ունի, քան մեծատաղանդ համակիր մարդու կարծիքը։ Համակիրը դուրս է մեր կուսակցութիւնից եւ պէտք է դուրս համարուի։ Թէեւ արժէքաւոր՝ բայց նա պատահական գործակից է եւ համամիտ։ Նա ոչ պարտականութիւն ունի մեր հանդէպ եւ ոչ իրաւունք։ Նա կարող է այսօր նպաստել մեր գործին, վաղը հեռանալ մեզանից. այսօր հիանալ մեզ վրայ, վաղը վարկաբեկել։ Իր վարմունքի մէջ նա ազատ է եւ անկախ։ Նա մեր գործակիցն է իր քմայքի կամ շահերի բերումով. այսօր այդ քմայքն ու շահերը նրան մեր գործակիցը կարող են դարձնել, վաղը՝ մեր հակառակորդը։ Իր անձնական նկատումները մեր հակակշռին ենթակայ չեն։ Նա պարտական չէ մեզ հաշիւ տալու իր ընթացքի մասին եւ ոչ մե՛նք իրաւունք ունինք

պահանջելու: Նա ենթակայ չէ մեր կանոնագրին, հետեւապէս ենաթակայ չէ նաեւ մեր հսկողութեան եւ հակակշռին Մեր ընկերը մեր լծակիցն է. համակիրը ազատ է լուծից:

Ընկերները սակայն պէտք է մի բան միշտ նկատի ունենան: Ով դուրս է մեր կուսակցութիւնից՝ դեռ չի նշանակում որ անպիտան մէկն է: Մեր շարքերից դուրս կան եւ կարող են լինել շատ պիտանի, պարկեշտ եւ տաղանդաւոր մարդիկ, որ կարող են մեր այս կամ այն ձեռնարկին մեծապէս օգտակար լինել: Առանց մերժելու նրանց արժանիքը եւ երախտագէտ լինելով նրանց մատուցած ծառայութեան համար՝ ընկերները պէտք չէ շփոթեն համակիր ու գործակից անձերը մեր կուսակցութեան անդամների հետ եւ պէտք է միշտ յիշեն թէ դաշնակցական է այն մարդը, որ ընդունում է մեր ծրագիրն ու կանոնագիրը:

Ինչպէս համակիրն ու գործակիցը ազատ են մեր կուսակցութեան հանդէպ՝ մեր կուսակցութիւնն իր հերթին ազատ է նրանց հանդէպ: Ինչպէս նա իր համակրանքն ու գործակցութիւնը չի զլանում մեր կուսակցութեան՝ քանի մեր գործը նպաստաւոր է համարում իր նկատումներին, մենք նոյնպէս չենք զլանալու մեր յարգն ու երախտիքը նրան, քանի ծառայում է մեր նպատակին: Մեր կապը նրանց հետ տեւական չէ, այլ ժամանակաւոր: Այդ կապն այնքան կարող է տեւել, որքան մեր շահերն ու նկատումները իրար չեն խաչաձեւում: Կուսակցութիւնը եւ իր անդամները պէտք է աշխատեն շատ համակիր անձեր շահել, բայց մազաչափ չշեղուիլ մեր կանոնագրից ու ծրագրից: Մեր իսկական համակիրն ու գործակիցը նա է, որ իր համակրանքն ու գործակցութիւնը չի սակարկում, այլ մեզ հետ է՝ ինչպէս որ կանք: Չի կարելի ծրագրի որեւէ կէտ փոխել եւ կանոնագրի

որեւէ յօդուած անտեսել՝ համակիրներ շահելու համար։ Կուսակցութեան նպատակը համակիրներ շահելը չէ, այլ կուսակցութեան անդամներ պատրաստելը եւ կանոնագրի անխախտ պահպանումով՝ իր ծրագրած նպատակին ձգտելը։ Եթէ այս անշեղ ընթացքին համակիր եւ գործակից անձեր գտնուին՝ լա՛ւ. նրանք մեր բարեկամներն են, մեր գնահատանքին եւ յարգանքին արժանի։ Այս տեսակէտից նայելով խնդրին՝ մեր շարքերի մէջ կան մարդիկ, որ իսկապէս համակիրների դասի մէջ պիտի լինէին եւ ընդհակառակն կան համակիրներ, որ մեր ընկերների շարքի մէջ պիտի դրուէին։ Բայց քանի որ մէկն ընդունած է ծրագիրն ու կանոնագիրը իսկ միւսը՝ ոչ,– մէկն ընկեր է նկատւում, միւսը՝ համակիր։ Եւ ուրիշ կերպ լինել չի կարող, քանի պահում ենք մեր կազմակերպութիւնը։

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԸ

Կուսակցութեան ծրագիրը մեր նպատակի մասին է խօսում եւ նպատակն է հիմնաւորում, իսկ կանոնագիրը խօսում է մարմինների եւ անդամների փոխադարձ կապի մասին։ Կուսակցութեան ընթացիկ կեանքի մէջ ծրագիրը նուազ է յիշւում քան կանոնագիրը, որ յարատեւ գործում է։ Ծրագիրը հասկանալու համար պահանջւում է մի որոշ կրթութիւն եւ մտքի մեծ ճիգ, մինչդեռ կանոնագիրը ըմբռնելու համար պարզ մեկնութիւնը բաւական է, որովհետեւ կազմակերպութեան ընթացիկ կեանքը ամէն օր գործնական դաս է տալիս կանոնագրի մասին։ Այս հանգամանքը ոմանց այն կարծիքին է բերած թէ Դաշնակցութիւնը պարզապէս կազմակերպութիւնն է հայութեան, մոռանալով, որ ամէն կազմակերպութիւն մի որոշ նպատակ ունի եւ ինքնանպատակ լինել չի կարող։ Մեր կազմակերպութիւնը ծրագրի իրագործութեան

համար է, հետեւապէս մեր ծրագիրը գերադաս է կանոնագրից, թէեւ կանոնագրի պարտադրանքը մենք շատ աւելի յաճախ ենք զգում քան ծրագրի գոյութիւնը:

Վերից նայելով մեր կուսակցութեան շէնքին, ինչպէս որ այդ շէնքն երեւում է մեր կանոնագրի միջից՝ նրա հիմքը ժողովներից է սկսւում եւ ժողովով է վերջանում: Իրաւասութիւնը մեր կուսակցութեան մէջ ժողովների ձեռքին է: Մարմինները ժողովներից են բխում եւ ժողովներին ենթակայ են: Ժողովները գերադաս են, իսկ մարմինները ստորադաս: Ժողովներն օրինադրում են եւ մարմինները իրագործում: Ոչ մէկ մարմին կարող է իր գերադաս ժողովը լուծել, բայց ժողովները կարող են ստորադաս մարմինները լուծել, երբ տեսնեն թէ նրանք իրենց որոշման հակառակ ընթացք ունին: Մարմինների եւ անդամների իրաւունքները կշիռ ու արժէք ունին, որովհետեւ ժողովները այդպէս են նախատեսած:

Կուսակցութեան հիմքը կազմում է խմբական ժողովը, իսկ շէնքի կատարը՝ Ընդհանուր ժողովը, որից գերադաս ժողով չունի Դաշնակցութիւնը: Այս հանգամանքը բնորոշում է մեր կուսակցութեան կերպարանքը. Դաշնակցութիւնը մենատիրական չէ, այլ ռամկավարական կազմ ունի, այսինքն այնտեղ իշխել չի կարող որեւէ անհատի կամքը, որքան եւ այդ անհատը տաղանդաւոր եւ անձնուէր լինի. այնտեղ իշխում է ժողովների կամքը, որ կարող է անհատներին բարձրացնել եւ իջեցնել՝ նայելով նրանց ընթացքին ու գործին: Այդ իսկ պատճառով դաշնակցական ընկերները ոչ թէ կապուած են այս կամ այն անձի հետ, այլ կապուած են իրար հետ եւ դաշնակցութիւն ասելով ոչ թէ այս ու այն մարմինն է հասկացւում կամ այս ու այն ընկերների խումբը,

այլ բոլոր ընկերների համագումարը։ Բոլոր ընկերները, ինչ գործ եւ կատարած լինեն կամ ինչ շնորհ եւ ցուցադրեն՝ իբրեւ կուսակցութեան անդամներ նոյնիրաւ են, այսինքն նոյն իրաւունքներն ունին եւ իրար հաւասար են։ Ոչ մէկը նրանցից գերադաս է միւսից եւ ոչ մէկն իրաւունք ունի բռնանալու միւսի վրայ։ Բոլոր ընկերները միասին առած կազմում են դաշնակցութիւնը եւ բոլոր ընկերների հաւաքական կամքն է, որ իշխում է կուսակցութեան մէջ։ Այդ հաւաքական կամքին ենթակայ են ե՛ւ մարմինները ե՛ւ ընկերները։ Այդ կամքն է տնօրինում կուսակցութեան ճակատագիրը։ Նա է տէրն ու տնօրէնը բովանդակ կազմակերպութեան։ Բայց այդ գերագոյն իրաւունքը ընկերներն ստանում են կանոնագրի հիման վրայ։ Այդ կանոնագրի հիմնական պայմանն ընդունելով է, որ սոսկական մի հայ իրաւունք է ձեռք բերում դաշնակցութեան բախտը տնօրինելու իր նման ընկերների հետ միասին եւ համագումար։ Նա երդումով խոստացած է հաւատարիմ մնալ մեր ծրագրին եւ կանոնագրին, ուստի եւ տիրացած է այդ մեծ իրաւունքին։ Այն օրը, որ նա անտեսէ իր կանոնագիրը՝ կը դադրի կուսակցութեան անդամ նկատուել եւ կը զրկուի կուսակցութեան կեանքը տնօրինելու մեծ ու բարձր իրաւունքից։

Մեր կուսակցութեան յօրինուածքի մէջ ժողովներն ու մարմինները յաջորդում են իրար եւ իրար գերադասւում։ Խմբական ժողովը ընտրում է իր վարիչ մարմինը՝ – խմբապետը, գանձապահն ու քարտուղարը,– որոնք խմբի հակակշռին ենթակայ են եւ կարող են փոխուիլ նոյն խմբի կամքով։ Մի քանի խմբեր (3-4) միասնաբար ժողով գումարելով՝ ընտրում են ենթակոմիտէ. իսկ աւելի շատ խմբեր (50 եւ աւելի ընկերներ), եթէ նոյն վայրի մէջ են ապրում՝ միասնաբար ընտրում են այդ վայրի կոմիտէն։ Եթէ

այդ 50 ընկերները տարբեր վայրերի մէջ են՝ ընտրութեան ուրիշ եղանակ են կիրարկում. խմբերն ընտրում են մէկ կամ մի քանի պատգամաւոր, որ իրաւունք ունին խօսելու խումբի անունից եւ որ իրար քով գալով՝ կազմում են ժողով եւ ընտրում են կոմիտէ: Այսպէս է ընտրւում եւ մի շրջանի Կենտրոնական կոմիտէն, ինչպէս նաեւ Դաշնակցութեան Բիւրօն: Կոմիտէութեան ընտրական ժողովը կոչւում է Պատգամաւորական, կենտրոնական կոմիտէի ընտրող ժողովը՝ Շրջանային, որին մասնակցում են կոմիտէների եւ նրանց շրջանի պատգամաւորները, իսկ Բիւրօն ընտրւում է Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի կողմից, որին մասնակցում են բոլոր կենտրոնական կոմիտէների եւ նրանց շրջանի պատգամաւորները: Չկայ դաշնակցութեան մէջ աւելի բարձր եւ իրաւասու ժողով քան Ընդհանուր ժողովը, ինչպէս չկայ աւելի բարձր եւ իրաւասու մարմին քան Բիւրօն: Բոլոր մարմինները համարատու են իրենց ընտրող ժողովներին եւ պատասխանատու են նրանց առջեւ: Բոլոր մարմինները պարտաւոր են իրենց ընտրող ժողովների որոշումներն իրագործել: Բոլոր ժողովները համարատու են իրենց ընտրած մարմինների հանդէպ եւ իրաւունք ունին պատիժ ու պատուհաս տնօրինելու նրանց մասին: Խումբը կարող է փոխել իր ընտրած մարմինը եւ պատժել իր անսաստող ընկերը: Ընկերների ընդհանուր ժողովը կարող է իր դիտողութիւնն անել ենթակոմիտէին եւ կոմիտէին եւ դժգոհութեան պարագային չվերընտրել մարմինը: Շրջանային ժողովը իրաւունք ունի համար պահանջելու կենտրոնական կոմիտէից եւ նրան պատասխանատուութեան հրաւիրելու: Նոյնը կարող է անել Ընդհ. ժողովը Բիւրօյի վերաբերմամբ: Խմբի որոշումները պարտադիր են իր անդամների եւ իր ընտրած մարմնի համար. ընկերական ընդհանուր ժողովի կամ պատգամաւորական ժողովի որոշումները պարտադիր

են ենթակոմիտէի եւ կոմիտէի համար։ Շրջանային ժողովի որոշումները օրէնք են կենտրոնական կոմիտէի համար, իսկ Ընդհանուր ժողովի որոշումները՝ Բիւրոյի համար։ Բոլոր ժողովների որոշումները սակայն պէտք է կանոնագրի հիման վրայ տրուին եւ չհակասեն կուսակցութեան ծրագրին եւ որդեգրած գործելակերպին։ Միմիայն այդ պայմանով որոշումները կարող են պարտադիր համարուել եւ օրինական ոյժ ստանալ։

Ինչպէս տեսնում էք՝ ժողովներն են որ մարմիններ են ընտրում են նրանց պատասխանատուութեան կանչում։ Մարմինների անդամները քանի դեռ ժողովական են եւ մարմնի անդամ չեն ընտրուած՝ ոչ մէկ առաւելութիւն ունին միւս ժողովական ընկերների հանդէպ։ Բայց երբ ընկերների մեծամասնութեան հաւանութեամբ մի քանիսը ընտրուին մարմնի անդամ՝ կացութիւնը կը փոխուի. ընտրուածները կը դառնան գործադիր իշխանութիւն եւ վարիչ, իսկ ընտրողները կը մնան ենթակայ։ Շարքային պարզ ընկերը սակայն իրաւասու վարիչ կը դառնայ ոչ թէ իր կամքով, այլ ընկերների մեծամասնութեան հաւանութեամբ եւ ոչ թէ ընկերների քմայքով, այլ կանոնագրի հիման վրայ։ Կանոնագիրն է, որ նախորոշած է թէ ի՞նչպէս պիտի ընտրուին մարմինները եւ կանոնագիրն է, որ որոշած է մարմինների իրաւասութեան սահմանը եւ ուրեմն ընկերները ենթարկւում են ոչ թէ մարմնի անդամներին, այլ կուսակցութեան կանոնագրին, երբ կատարում են մարմնի կարգադրութիւնները։ Շարքային ընկերները երդում տուած են ընդունել կանոնագիրը եւ ենթարկուել նրան. այս երդումի ուժովն է, որ շարքային ընկերը պարտաւոր է ենթարկուիլ իր գերադաս մարմինների եւ ժողովների որոշումներին։ Այս կամ այն ընկերը չէ, որ իրաւունք է համարում նրան հրամայելու, այլ մարմինը,

որի մէկ անդամն է այս կամ այն ընկերը, իսկ մարմնին կանոնագիրն է տուած հրամայելու եւ հրահանգելու իրաւունքը։ Այսպիսով մարմինների կանոնական որոշումներին չենթարկուիլ՝ կը նշանակէ կանոնագիրն անտեսել եւ ընկերների մեծամասնութիւնը անարգել, քանի որ այդ մեծամասնութեան կամքով է, որ մի քանի պարզ շարքային ընկերներ ընտրուած են իբր իրաւասու եւ ղեկավար մարմին։ Այս է պատճառը, որ կանոնագիրը պատիժներ սահմանած է անսաստող ընկերների համար՝ պարզ յանդիմանութիւնից սկսած մինչեւ վտարումը կուսակցութեան շարքերից։ Քանի որ կանոնագիրը կուսակցութեան ողնաշարն է, առանց որի նա քայլել ու գործել չի կարող՝ ինքնին պարզ է, որ կանոնագիրն անտեսողը սպառնում է խորտակել կուսակցութեան ողնասիւնը, քայքայել նրա յօրինուածքը եւ անգործութեան դատապարտել։ Բնական է որ կուսակցութիւնը իր շարքերից հանէ այդ կարգի անսաստող ընկերը, որ չի գիտակցում թէ իր առաջին եւ նուիրական պարտականութիւնն է պահպանել կուսակցութեան շէնքը, որի սիւներն են կանոնագրի յօդուածները եւ որի շնորհիւ միայն նա ընդունուած է կազմակերպական շարքերի մէջ։

Միմիայն Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովն է, որ իրաւունք ունի ծրագիր եւ կանոնագիր փոփոխելու եւ միմիայն այդ ժողովի որոշումներին է, որ պարտաւոր են ենթարկուել բոլոր դաշնակցականները ուր եւ գտնուին, բոլոր ժողովները՝ ուր եւ գումարուին եւ բոլոր մարմինները՝ ուր եւ գործեն։ Այս իսկ պատճառով բոլոր դաշնակցականները պարտաւոր են ենթարկուել կուսակցութեան կանոնագրին որովհետեւ նրա մէջ խտացած է Ընդհանուր ժողովի կամքը, որ պարտադիր է բովանդակ Դաշնակցութեան համար։ Իսկ Ընդհանուր ժողովն իր հերթին բոլոր դաշնակցական ընկերների կամքն է, որ

արտայայտում է իր որոշումներով։ Այսպիսով կանոնագրին չենթարկուել՝ կը նշանակէ համայն Դաշնակցութեան կամքն անտեսել եւ բազմահազար ընկերների հաւանութիւնն անարգել։ Բովանդակ Դաշնակցութեան ձայնն է, որ հնչում է կանոնագրի մէջ եւ ասում է մեր շարքերը մտնողին.– Բարեկա՛մ, մենք դաշնակցականներս այ՛ս կանոնագրով կապուած ենք իրար հետ եւ այ՛ս կանոնագրին ենթակայ են մեր բոլոր ընկերները, ժողովները եւ մարմինները. եթէ փափաք ունես մեր շարքերը մտնելու եւ մեզ ընկեր դառնալու՝ պէտք է պատուիդ վրա երդուես, որ ընդունում ես այս կանոնագիրը եւ խոստանում ես ենթարկուել նրան, այլապէս՝ ազատ ես։ Եւ մի անգամ երդում տուողը, եթէ պատիւ ունի, պարտաւոր է ենթարկուել կանոնագրին եւ պաշտպանել նրա բարձր հեղինակութիւնը։ Ահա թէ ինչու դաշնակցական գիտակից մարմիններն ու ընկերները խստօրէն կառչած են կանոնագրին եւ նախանձախնդիր են նրա պաշտպանութեան։ Մարմինները կոչում ունին պահակ կենալու կանոնագրի պահպանութեան, որովհետեւ բովանդակ Դաշնակցութեան կամքն է խտացած նրա մէջ. թերացումը նրա հանդէպ՝ անարգանք է այդ կամքին։ Կազմակերպութեան համար չկայ գերագոյն ուղեցոյց քան իր ծրագիրը։ Կանոնագիրը բարձրագոյն հեղինակութիւնն է կուսակցութեան համար. նա գերիշխան կամքն է բովանդակ դաշնակցութեան, նրան ենթակայ են եւ պէտք է ենթարկուին բոլոր ընկերները, ժողովներն ու մարմինները՝ սկսած խմբից մինչեւ Ընդհանուր ժողով եւ խմբապետից մինչեւ Բիւրո։ Կուսակցութեան կանոնական կեանքը այն դպրոցն է, ուր անգիտակից հայ աշխատաւորը գործնապէս դառնում է օրինապահ եւ իրաւազգաց քաղաքացի։ Այստեղ է, ուր նա յանգէտս, տեւական մարզանքով՝ սովորում է իրաւունք ճանաչել, պարտականութիւն կատարել, օրինապէս հնազանդել եւ իրաւապէս ենթարկել։ Աւանդական քմա-

հաճոյքի գերեզմանն է կանոնագիրը եւ շարքերի իրաւասոյց ղեկավարը։ Նրա պաշտպանութիւնը բոլոր դաշնակցական ընկերների իրաւունքն է, ինչպէս նրան հնազանդելը՝ բոլորի պարտականութիւնը։

Այստեղ ես ընդհատում եմ իմ զրոյցը։ Դեռ առիթ կ'ունենամ խօսելու։ Առայժմ այսքան։

1987, Մայիս

Բ.

ԿՐԿԻՆ ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

«Մեր Կանոնագիրը» կոչուած պրակիս մէջ ես խօսած եմ մեր կանոնագրի դերի եւ յօրինուածքի մասին, ինչպէս նաեւ այն տարբերութեան մասին, որ ունին մեր կուսակցութեան անդամներն ու համակիրները։ Այս պրակի մէջ ես շարունակում եմ իմ զրոյցը ընկերների հետ։ Լաւ կը լինէր, որ այս պրակից առաջ՝ ընթերցողը կարդացած լինէր առաջին տետրակը, բայց այս հանգամանքն արգելք չէ, որ կարդան այս պրակը։ Մտածումներս թէեւ նոյն նիւթին են վերաբերում, բայց անջատ են իրարից։ Սա մի գիտական հետազօտութիւն չէ եւ ոչ մի ուսուածք, այլ ընկերական մի պարզ զրոյց է, որ կարելի է լսել այս կամ այն կէտից եւ ընդհատել ուզած ժամանակ։

ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Մեր կուսակցութեան չպատկանող մարդիկ, տեսնելով մեր կարգապահ շարքերը գործի ժամանակ եւ մտածումի նոյնութիւնը ժողովների եւ մամուլի մէջ՝ կարծում են թէ Դաշնակցութիւն մի բռնապետական կազմակերպութիւն է, որ կաշկանդում է իր անդամների մտածումն ու կամքը եւ պատրաստում է հլու եւ հնազանդ հետեւորդներ: Մենք գիտենք սակայն թէ այդ կարծիքը մի թիւրիմացութիւն է եւ թերամտութեան արդիւնք: Թիւրիմացութեան պատճառն է, որ այդպէս կարծողները լաւապէս ծանօթ չեն մեր կուսակցութեան ոգուն ու կեանքին, իսկ թերամտութիւնը պարզ երեւում է, երբ տեսնում ենք թէ նրանք ծանօթ չեն ընկերային երեւոյթների գիտական մեկնութեան եւ քաղաքական պայքարների հոգեբանական կողմին, նրանց պատմական անցեալին եւ ներկայ վիճակին: Լինելով անկազմակերպ մի զանգուած՝ նրանք չեն կարող կարողանում հասկանալ կազմակերպութեան արժէքն ու բնոյթը. լինելով սահմանափակ կամ մասնակի իմացութեան տէր՝ նրանք չգիտեն, որ քաղաքական պայքարի մէջ յաջողելու համար անհրաժեշտ է մտածումների, բայց մանաւանդ կամքերի տեւական համադրութիւն:

Մի կէտ ճշմարիտ է. դաշնակցականը պէտք է ընդունի կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրը եւ երդումով հաստատէ իր համամտութիւնն ու հնազանդելու յօժարութիւնը: Բայց այս պարագան ո՛չ թէ բռնութիւն է, այլ պայման, ինչպէս թատրոնի տոմսը յաճախորդի համար. առանց տոմսի թատրոն մտնողը չի կարող բռնութիւն համարել, երբ

դռնապանը նրան ներս չառնէ։ Ոչ ոք չի ստիպում, որ մէկն անպատճառ դաշնակցական լինի, բայց եթէ փափաք ունի դաշնակցական դառնալու պէտք է ընդունէ կուսակցութեան ծրագիրն ու կանոնգիրը եւ իր յօժարութիւնը երդումով հաստատէ։ Երբ մէկն իբր հաւասար եւ նոյնիրաւ ընկեր անցնի կազմակերպութեան շարքերը այնուհետեւ նա լիովին ազատ է իր կարծիքը յայտնելու մեր կուսակցութեան թէ՛ ծրագրի, թէ՛ կանոնագրի, թէ՛ գործի մասին. նա ազատ է խնդիր յարուցանել ծրագիրն աւելի որոշ ու լրիւ ձեւակերպելու, կանոնագրի այս կամ այն կէտը զեղչելու կամ փոխելու, կուսակցութեան հերթական գործին այս կամ այն նոր ընթացքը տալու մասին. մի խօսքով նա իրաւունք ունի իր կուսակցականի հանգամանքը լիովին արժեցնելու։

Բայց այստեղ մի կարեւոր հանգամանք կայ, որ պէտք է խստօրէն ուշադրութեան առնել։ Այո՛, ընկերն ազատ է իր կարծիքները յայտնելու, բայց ազատ չէ իր կարծիքի համեմատ գործելու։ Պէտք է նախ՝ որ իր կարծիքին ընկերների մեծամասնութիւնը համամիտ լինի. պէտք է, որ այդ համամտութիւնը ընկերների մեծամասնութեան հաւանութեամբ դառնայ ժողովական որոշում եւ պարտադրուի մարմիններին գործադրել այդ որոշումը. այս դէպքում միայն ընկերը կարող է իր կարծիքի համեմատ գործել։ Սակայն այս դէպքում նա այլեւս ոչ թէ իր կարծիքի համեմատ գործած կը լինի, այլ ժողովրդական որոշման հնազանդած կը լինի. ոչ միայն ինքն է, որ հնազանդած կը լինի, այլեւ բոլոր այն ընկերները, որոնց վրայ կը տարածուի այդ որոշման պարտադրանքը։ Այսպիսով անհատ ընկերների կարծիքը՝ մեծամասնութեան հաւանութեամբ՝ դառնում է վճիռ ու որոշում, եւ նրան պարտաւոր են հնազանդել թէ՛ նրանք, որ այդ կարծիքին էին եւ թէ՛ նրանք, որ այդ կարծիքը չունէին եւ

մնացին փոքրամասնութիւն։ Ընկերների մեծամասնութեան կարծիքը կուսակցութեան կարծիքն է այն շրջանի համար, ուր այդ մասնաւոր կարծիքը դարձած է վճիռ ու որոշում։ Եթէ խումբն է այդ վճիռն արձակողը եւ որոշումը կայացնողը՝ որոշումը պարտադիր է խմբի բոլոր անդամների համար. եթէ պատգամաւորական ժողովն է վճիռ արձակած՝ այդ վճիռը պարտադիր է կոմիտէութեան բոլոր ընկերների համար ինչպէս նաեւ կոմիտէի համար. եթէ Շրջանային ժողովն է որոշում հանած՝ այդ որոշման ենթակայ են կենտրոնական կոմիտէն եւ նրա շրջանի բոլոր ընկերները՝ թէկուզ եւ շատերը համամիտ չլինեն այդ որոշման. եթէ Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովն է, որ մեծամասնութեամբ հաւանութիւն տուած է անհատ պատգամաւորի անձնական կարծիքին՝ այդ կարծիքը պարտադիր է բովանդակ Դաշնակցութեան համար, ոչ միայն բոլոր ընկերների այլ եւ բոլոր մարմինների համար, ուր եւ գտնուին։ Այսպիսով դաշնակցական ընկերներն ազատ են իրենց գործաձեւերն առաջադրելու, բայց քանի դեռ մեծամասնութեան հաւանութիւնը շահած չեն, ոչ իրաւունք ունին իրենց կարծիքը պարտադրելու եւ ոչ իրենց կարծիքի համեմատ գործելու։ Դաշնակցականը պարտաւոր է որոշումների հնազանդել եւ ոչ թէ կարծիքների հետեւիլ, նա պարտաւոր է ժողովական վճիռներ իրագործել եւ ոչ թէ իր կամ ուրիշի կամքը կատարել։ Ոմանց այս վիճակը ծանր է թւում. բայց այդ նշան է, թէ դեռ գիտակից եւ մարզուած կուսակցական չեն, որովհետեւ այնտեղ ուր անհատական կարծիքն ու կամեցողութիւնը փորձւում են գործ դառնալ առանց մեծամասնութեան օրինական համամտութեան, այնտեղ այլեւս կազմակերպութիւն չկայ, այլ կայ միայն անկարգ ամբոխ, ուր ամէն ոք իր քմայքին է հետեւում եւ շունը տիրոջ չի ճանաչում։

Կայ եւ մի ուրիշ կարեւոր հանգամանք, որ նոյնպէս պէտք է նկատի ունենան մարմիններն ու ընկերները։ Մեր կանոնագրով միմիայն Հ. Յ. Դ. Ընհանուր ժողովն իրաւունք ունի ծրագիր եւ կանոնագիր փոփոխելու. ստորադաս մարմինները իրաւասու չեն այս կէտի մէջ։ Նրանք կարող են միայն առաջարկներ անել Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովին, որ եթէ մեծամասնութեամբ համամիտ գտնուի՝ վճիռ կը տայ գործադրելու։ Այստեղից ինքնին հետեւում է, որ ստորադաս մարմիններն ու ժողովները, ինչպէս եւ անհատ ընկերները իրենց շրջանների մէջ՝ այնպիսի կարծիքներ եւ առաջարկներ կարող են բերել, որ չեն հակասում կուսակցութեան ծրագրին եւ կանոնագրին։ Ու նաեւ՝ ստորադաս ժողովներն ու մարմինները կարող են այնպիսի կարծիքներ եւ առաջարկներ ընդունել եւ վճիռ ու որոշում դարձնել, որ հակառակ չեն կուսակցութեան ծրագրին ու կանոնագրին։ Մարմիններն ու ժողովները գործում են կանոնագրի սահմանների մէջ, իրենց պարտականութիւնն է, այդ կանոնագիրրը պաշտպանել։ Նրանք չեն կարող այնպիսի վճիռներ արձակել, որ հակասէ այն կանոնագրին, որի պաշտպանութիւնը առաւելապէս նրանց է յանձնած ընկերների մեծամասնութիւնը։ Մարմինը կարող է տարբեր տեսակէտ ունենալ կանոնագրի այս կամ այն յօդուածի մասին, ինչպէս նաեւ գործերի այս կամ այն ընթացքի մասին, բայց այդ տեսակէտն աւելի չէ իր արժէքով, քան անհատ ընկերների անձնական կարծիքը։ Քանի դեռ այդ տեսակէտը Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովի հաւանութեան չէ արժանացած՝ նա գործնական եւ գործադրական արժէք չունի։ Այն տեսակ դէպքերում մարմին եւ սոսկական ընկեր պարտաւոր են իրագործել Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովի որոշումները, ինչպէս նաեւ իրենց գերադաս ժողովների վճիռները։ Պէտք չէ մոռանալ, որ բոլոր ընկերները իրենց պատուի վրայ երդում են արած ընդունել կուսակցութեան

ծրագիրն ու կանոնագիրը եւ հաւատարիմ մնալ նրանց, հետեւապէս նախ քան որեւէ կարծիք յայտնելը եւ վճիռ արձակելը՝ ընկեր թէ մարմին՝ պարտաւոր են հաշիւ տալ իրենց թէ մինչեւ ո՞ր աստիճան այդ կարծիքն ու վճիռը համաձայն են մեր կուսակցութեան ծրագրին եւ կանոնագրին։ Մտքի ազատութեան ջերմ պաշտպան է դաշնակցութիւնը, հետեւապէս նա չի կարող բռնանալ կարծիքների վրայ, բայց կազմակերպութեան իրաւունքն է եւ սրբազան պարտականութիւնը պահանջել ընկերներից, որ յարգեն իրենց հանդիսաւոր երդումը եւ անսաստողներին, իբր անհաւատարիմ եւ անպատիւ տարրեր՝ վտարել իր շարքերից։

Այս կէտի մէջ եւս պէտք է տարբերութիւն դնել ազատ համամատութեան ու գործակցութեան եւ կուսակցական համամտութեան ու գործակցութեան միջեւ։ Քաղաքական կուսակցութիւնը չի կարող խիստ կարգապահութիւն չպահանջել իր անդամներից եւ չպարտադրել, որ կանոնագիրը գործադրուի տեւապէս։ Անկանոնական ընթացքը քայքայում կը բերի կազմակերպութեան, հետեւապէս կը խորտակէ այն ոյժը, որի միջոցով մենք յոյս ունինք մեր ծրագիրն իրագործելու։ Մինչդեռ կուսակցութիւնը իր անդամներից պահանջում է հնազանդութիւն իր ծրագրին ու կանոնագրին՝ մնացած հայութեան նա յորդորում է եւ համոզում, որ աջակցին իր գործին։ Նա պատիժներ է տնօրինում այն ընկերների համար, որ հաւատարիմ չեն մնում իր ծրագրին եւ կանոնագրին, մինչդեռ մնացած հայութիւնն ազատ է պատժից ու պատուհասից։ Դրսի մարդիկ ազատ են մեզ համակրելու կամ հակակրելու, բարեկամ կամ թշնամի լինելու՝ մինչդեռ մեր ընկերը մեզ թշնամի լինել չի կարող եւ ոչ մեր գործին հակակիր, որովհետեւ դրսի մարդն

ազատ է, իսկ մեր ընկերը կապուած է իր երդումով։ Դրսի մարդիկ կարող են ազդել մեր կուսակցութեան վրայ այն չափով, որքան ընկերների մեծամասնութիւնը համամիտ գտնուին նրանց քարոզած գաղափարներին. այսպէս են մեծ գիտունները, ընկերվարութեան նշանաւոր առաջնորդները։ Նրանք վարդապետում են բովանդակ մարդկութեան եւ նրանց հետեւում են բազմահազար ունկնդիրներ եւ ընթերցողներ։ Նրանց գաղափարները թափանցում են եւ մեր մտաւորական ընկերների մէջ, դառնում են համոզում, քարոզւում են մեր շարքերին, շահում են մեծամասնութեան համամտութիւնը եւ ժողովական կարգով դառնում են վճիռ ու որոշում եւ պարտադրւում բոլոր ընկերներին։ Բայց նոյնիսկ այստեղ՝ դուք տեսնում էք թէ կանոնագիրն է, որ հնար է տալիս դրսի ազդեցութեան մուտք գործելու մեր կուսակցութեան մէջ եւ ժողովական որոշումն է, որ այս կամ այն նոր տեսակէտը, գործաձեւը կամ կազմակերպական եղանակը պարտադիր է դարձնում մեր շարքերի համար։ Այսպէս է, որ մեր կուսակցութիւնը չի լճանում եւ մեր ծրագիրն ու կանոնագիրը չեն քարանում, այլ կեանքի զարկին զուգահեռ՝ տրոփում է եւ մեր կուսակցութեան զարկերակը եւ նա մնում է կենդանի եւ դիմացկուն՝ չնայած ահաւոր փորձութիւնների։ Նա գնում է ժամանակի հետ, որովհետեւ ընկերների մտածումը հետեւում է ժամանակի ընթացքին եւ առնում ու իւրացնում է դրսից այն ամենը, որ յարմար եւ պիտանի է համարում իր կենսունակութեան համար։ Ընկերների վերափոխուած եւ թարմացած մտածումը յօրինում է տեսական ու գործնական նոր գաղափարներ, որ վարի խաւերից բարձրանում են վեր եւ իրաւասու ժողովների մէջ դառնում են վճիռ ու որոշում։

Այստեղից հետեւում է ինքնին, որ ծրագրի եւ կանոնագրի քննութիւնը ինչպէս նաեւ մարմինների եւ ընկերների

ընթացքի լաւ ու վատ գնահատանքը կարող է եւ պէտք է լինի կուսակցութեան ներսը, որ կարենայ շահիլ մեծամասնութեան հաւանութիւնը եւ վճիռ դառնալով՝ ազդէ կազմակերպութեան կեանքին վրայ։ Դրսի աշխարհի համար մենք կանք եւ պէտք է մնանք իբր միաձոյլ եւ կարգապահ կուսակցութիւն, ուր իշխում է մի կամք, մէկ մտայնութիւն եւ որ ունի մի որոշ ընթացք։ Իսկ մեր ժողովների մէջ մենք ոչ միայն իրաւունք այլ մանաւանդ պարտականութիւն ունինք մեր ծրագրային եւ կանոնագրական թերիները մատնանշելու եւ մեր մարմինների եւ ընկերների ընթացքը քննադատելու՝ լաւագոյն վճիռների եւ որոշումների հասնելու համար։ Քննական ոգին շինարար է ներսը եւ քայքայիչ, երբ դրսից է գործում։ Դրսից մեզ ու մեր գործը կարող է քննադատել հակառակորդն ու թշնամին, նաեւ բարեացակամ համակիրը. իսկ մեր ընկերները պարտաւոր են կազմակերպութեան ներսը քննադատել, եթէ նպատակ ունին կուսակցութեան կեանքը բարելաւելու եւ լաւագոյնին հասնելու։

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Մեր կանոնագիրը նախատեսած է այնպիսի վիճակներ, երբ մարմինները՝ հանգամանքների բերումով՝ ստիպուած են շեղելու գերադաս ժողովների որոշումներից։ Այսպիսի վիճակներ շատ անգամ պատահած են մեր կուսակցութեան պատմութեան մէջ, երբ պատասխանատու մարմինները կեդրոնական վարիչ մարմնից հեռու լինելով եւ արտաքին արգելքների հանդիպելով նրանց հետ կապ պահելու՝ ստիպուած են եղել կանխորոշուած մի շարժում յետաձգելու իր ժամկէտից կամ փոփոխելու որեւէ կանխատեսած ձեռնարկի բնոյթն ու ծաւալը։ Կանոնագիրն իրաւունք տալով այսպիսի շեղում անելու՝ անմիջապէս կցում է թէ մարմինն այդ շեղումը կարող

է կատարել՝ սակայն «իր պատասխանատուութեամբ»։ Այս վերապահումը ցոյց է տալիս, որ կանոնագիրը նախատեսելով ստիպողական հարկը շեղելու՝ գերադաս մարմինների որոշումներից, միաժամանակ այդ շեղումը կատարող մարմնին պատասխանատու է նկատում իր շեղումի համար. այսինքն՝ մարմինը իր շեղումը կատարելուց յետոյ՝ պէտք է հաշիւ տայ գերադաս ժողովին թէ ի՞նչ ստիպողական պատճառներ ունեցած է այդ շեղումը կատարելու։ Սա նշանակում է թէ կանոնագիրը պահանջում է, որ մարմինները անպայման ենթարկուին գերադաս ժողովների որոշումներին եւ դուրս չգան նրանց գծած սահմանից, այլապէս պատասխանատու են իրենց շեղ ընթացքի համար։ Միմիայն ստիպողական պարագաների մէջ թոյլ տրուած է շեղում կատարել եւ մարմինը պարտաւոր է իր քայլն արդարացնելու համար ապացուցանել թէ ստիպուած էր այդպէ՛ս վարուելու,– այլապէս յանցաւոր կը նկատուի։

Կանոնագրի այդ կէտը ոմանք օգտագործում են չարաչար՝ իրենց քմահաճոյքին ընթացք տալու համար եւ օգտուելով այն հանգամանքից, որ գերադաս ժողովները ուշ-ուշ են գումարւում՝ խելքին փչած մի վայրկեանին կամ ինչ-ինչ նկատումներով՝ շեղում են կանոնագրից եւ չեն իրագործում գերադաս մարմինների որոշումները։ Անտեսելով կանոնագիր եւ ժողովական որոշում՝ նրանք անտեսում են համայն դաշնակցութեան կամքը, մոռանալով թէ այդ կանոնագրի հիման վրայ եւ նրա շնորհիւ է, որ իրենք, որ պարզ շարքային ընկերներ են՝ դարձած են ղեկավար եւ պատասխանատու մարմին. նրանք մոռանում են, որ իրենց առաջին պարտականութիւնն է խստիւ պահպանել կանոնագրի տրամադրութիւնները եւ հնազանդել ժողովական որոշումներին՝ օրինակ դառնալու համար իրենց ենթակայ

ընկերներին եւ մարմիններին։

Այս կարգի երեւոյթները ջլատում են կազմակերպութիւնը եւ խանգարում են կուսակցութեան կեանքի բնականոն եւ կանոնական ընթացքը. վերից եկած օրինակը վարակում է ստորադաս մարմիններն ու շարքերը։ Մեր շարքերը տեսնելով թէ կանոնագիրն ու որոշումները չեն գործադրւում եւ շեղումները յաճախ են պատահում՝ թէեւ ստիպողական պարագաներ չկան՝ իրե՛նք նոյնպէս թերանում են իրենց պարտականութեան մէջ եւ ըմբոստանում են աւելի շատ, քանի որ կանոնագրին նուազ տեղեակ են եւ անձամբ նուազ մարզուած կուսակցական. եւ մարմինները փոխանակ կուռ եւ կարգապահ շարքեր ստեղծելու եւ պահելու՝ մի օր իրենց դէմ տեսնում են ծառացած անկարգապահ ընկերներ եւ օրինազանց ստորադաս մարմիններ ու ժողովներ։ Մի որոշ չափով դեռ կարելի է ներողամիտ աչքով դիտել շարքային ընկերների եւ խմբերի անկարգութիւնը. նրանք կարող են բաւականաչափ հրահանգուած չլինել. բայց անկարելի է անտարբեր մնալ մարմինների հանդէպ, որ իրենց անկանոնական որոշումներով եւ անհիմն շեղումներով սպառնում են քայքայել կազմակերպութիւնը. անհնարին է անտարբեր դիտել թէ ինչպէս այնտեղ, ուր կանոնագիրն ու որոշումները պէտք է իշխէին եւ ղեկավարէին՝ քմահաճոյքն է սանձարձակ ձիավարում։

Այս կարգի երեւոյթների հանդէպ իսկական դաշնակ-ցականի պարտքն է ծառանալ եւ պահանջել, որ մարմինները հնազանդին դաշնակցութեան գերագոյն կամքին, որ արտայայտուած է կանոնագրի մէջ։ Մարմինները չե՛ն Դաշնակցութիւնը եւ ոչ ընկերների այս կամ այն խումբը։ Դաշնակցութիւնը մարմինների եւ խմբակցութիւնների

սեփականութիւնը չէ։ Դաշնակցութիւնը բոլոր ընկերների համագումարն է, որ իր կամքն արտայայտում է Հ. Յ. Դ. Ընդհանուր ժողովների մէջ եւ խտացնում նրա որոշումների եւ կանոնագրի մէջ։ Դաշնակցութիւնն ապրում ու գործում է իր կենդանի ընկերների կանոնական կապով եւ նահատակ ընկերների հմայքով։ Դաշնակցութեան կամքի իրագործումը բոլոր ընկերների եւ մարմինների պարտականութիւնն է։ Մարմիններն ընտրւում են կանոնագիր ու ծրագիր պաշտպանելու եւ իրագործելու համար։ Եթէ նրանք թերանան այս պարտականութիւնն ու յանձնառութիւնը կատարել՝ դրանով իսկ կը կորցնեն իրենց գոյութեան իրաւունքը եւ ընկերների սրբազան պարտականութիւնն է հեռացնել ասպարէզից այդ տեսակ մարմինները, ստեղծելու համար աւելի պարկեշտ եւ նուազ քմահաճ մարմիններ, որ գիտակցեն կուսակցութեան գերագոյն շահերը եւ քմահաճոյքը չշփոթեն կանոնագրի հետ։

Պատմական չարաղէտ իրադարձութեանց հետեւանքով մեր ժողովուրդը ժառանգած է ստրկական հոգեբանութիւն, ուստի անիշխանական է եւ քմահաճ։ Կարգն ու կանոնը նրան թւում է բռնութիւն թէ՛ այն ժամանակ երբ վարիչ է, թէ՛ այն ժամանակ երբ ենթակայ է վարչութեան։ Երբ նա վարիչ է՝ ձգտում է ո՛չ թէ կարգի հետեւիլ եւ կանոնով գործել՝ այլ իր քմահաճոյքն արժեցնել եւ բրտօրէն բռնանալ, իսկ երբ ենթակայ է՝ նա ճգնում է իր քմահաճոյքով վարած տեսնել կուսակցութեան գործերը եւ ո՛չ թէ կանոնագրով։ Այս ապականոն ընթացքը անցեալում ստեղծած է եւ ներկայիս շարունակում է ստեղծել աղէտալի կացութիւն թէ՛ ազգային եւ թէ՛ կուսակցական կեանքի մէջ, որ մեր քաղաքական տհասութեան հետեւանք է։ Կարգի եւ կանոնի չհնազանդող անհատներն ու խմբակները հնազանդում են սակայն այս կամ

այն անձին եւ խմբակին եւ ստեղծում են կողմնակցութիւն (թայֆա), իսկ անհատներն իրենց շուրջը համախմբում են ուրիշ անձեր ու խմբակներ՝ քայքայելով այն շարքերի կանոնական ընթացքը, որ կոչուած են հայ աշխատաւոր զանգուածին ապահովել ազատ եւ անկախ հայրենիք, այսինքն՝ մի իրաւական եւ կանոնական կացութիւն։ Թրքական, Քրդական եւ Պարսկական ցեղային հոգեբանութիւնը, որ դարերով ազդած է մեր ժողովուրդի վրայ, յամառաբար արմատախիլ չի լինում նոյնիսկ մեր շարքերի միջից, որով ժողովական որոշումները եւ կանոնագրի տրամադրութիւնները յաճախ ձեւական արժէք են ստանում եւ ընկերների եւ մարմինների քմահաճոյքն աշխատում է գործել ու վարել այդ որոշումների եւ կանոնների սահմաններից դուրս եւ իր ուզածին պէս մեկնել կանոնագիր ու որոշում։ Դժբախտաբար այս յետամնաց հոգեբանութիւնը դեռ բաւական զօրաւոր է մեր ընկերական խաւերի մէջ, ուր պայծառօրէն չեն գիտակցում թէ ո՞րն է կանոնական հակամարտութիւնը եւ ո՛րը քմահաճ ըմբոստութիւնը, որով շատ անգամ կազմալուծւում է ամէն գործ ու ձեռնարկ եւ ստեղծում է շփոթ ու դժգոհանք։ Այս իսկ պատճառով կանոնագրի հիմնական ծանօթութիւնը դաշնակցականի առաջին պարտականութիւնն է, նրա պաշտպանութիւնը՝ իր սրբազան իրաւունքն է եւ պարտքը, նրան յօժարական հնազանդելը՝ իր կուսակցական պատիւը եւ նրա անշեղ գործադրութիւնը եւ ուղիղ մեկնութիւնը գիտակից ընկերների եւ մարմինների առաջին հոգսը։

Կուսակցական մարմիններն ու ընկերները պէտք է ամուր կառչին մեր կանոնագրին, որ միակ եւ գերագոյն վարիչն է մեր կազմակերպական կեանքի եւ պիտի զգուշանան քմահաճ կարգադրութիւններ անել եւ որոշումներ հանել, բայց մանաւանդ «պատասխանատուութեան» ապաւինելով՝ խան-

գարեն կարգ ու կանոնը կուսակցութեան մէջ։ Միշտ պէտք է յիշել, որ կուսակցութիւնը տեւական է, իսկ մարմիններն անցաւոր եւ կուսակցութիւնը տեւական է իր ծրագրով ու կանոնագրով։ Պէտք չէ երբեք մոռանալ, որ երէկուան շարքային պարզ ընկերները կանոնագրո՛վ է, որ այսօր դարձած են ղեկավար մարմին եւ որ այնքա՛ն ժամանակ կարող են վարիչ մնալ, որքան չեն սղոցում այն ճիւղը, որի վրայ նստած են։ Կանոնագիրն ստեղծուած է շինարար աշխատանք կատարելու եւ ո՛չ թէ քմահաճոյք արժեցնելու համար։

Ո՞Վ Է ՄԵՐ ԸՆԿԵՐԸ

Այն մարդուն, որ ապրում ու գործում է ընթացիկ բարոյականի համեմատ՝ ասում են «պարկեշտ մարդ»։ «Պարկեշտ ընկեր» կարող ենք ասել կուսակցութեան ա՛յն անդամին, որ իբր կուսակցական՝ գործում է կանոնագրի համեմատ, այսինքն՝ կատարում է այն պարտականութիւնը, որ կանոնագրով դրուած է նրա վրայ եւ օգտւում է այն իրաւունքից, որ ունի նոյն կանոնագրով։ Բայց կուսակցութեան անդամները բազմաթիւ են եւ բազմազան բնաւորութեան տէր եւ մեր կապերն իրար հետ բազմատեսակ են, իսկ մեր կանոնագիրը մի վտիտ գրքոյկ է եւ ոչ թէ մի ստուար օրէնսգիրք։ Նա չի կարող եւ պէտք չունի ամէն դէպք ու պատահար նախատեսելու եւ կանոնագրելու։ Ձիւն շատ եկող երկիրների մէջ, ճամբաների քովերը բարձր ձողեր կան տնկուած, որ ձմեռը, երբ ձիւնը ծածկում է դար ու փոս՝ ուղեւորին ցոյց են տալիս ճամբի ուղղութիւնը՝ վեր մնալով ձիւնի երեսից։ Մեր կանոնագրի յօդուածները այդ երկար ձողերի պաշտօն են կատարում, վեր մնալով մեր բազմատեսակ վարմունքներից։ Նրանք մեզ մատնանշում

են մեր վարմունքի ընդհանուր ուղղութիւնը, մնացածը թողնելով մեր սրտին ու կամքին եւ մեր ողջամտութեան: Կուսակցութիւնը պետութիւն չէ: Պետութիւնը գործ ունի բազմատեսակ եւ տարամերժ տարրերի հետ եւ պարտաւոր է նրանց անհամար բախումները կարգաւորել իր օրէնքներով: Մեր կանոնագիրը բարեացակամ խորհրդատու է եւ խստապահանջ, բայց զուսպ վերահսկող. նա մատնանշում է մեր ընթացքը առանց մանրամասնութեան եւ անսաստողին պատուհասում է առանց մարնակրկիտ ձեւականութեան: Ընդարձակ բացեր թողած է նա գործադրողի կամքին, որ եթէ չարեացակամ մէկն է եւ ձեւապաշտ բծախնդիր՝ կարող է բարեացակամ կանոնագիրը դարձնել պատուհաս եւ անարժէք բախումները՝ դատ ու վէճ: Կանոնագիրը համառօտ է եւ էական, որովհետեւ նրա մշակողն եղած է Դաշնակցութեան ընտրանին եւ մշակած է ոչ թէ հպատակների, այլ ընկերների համար: Դաշնակցութիւնը համակամ եւ համամիտ անձերի տեւական միութիւն է, որ երբեմն կարող են իրար հետ բախումներ ու գժտութիւն ունենալ, բայց երբեք չեն կարող տարամերժ եւ հակադիր լինել, եթէ իրօք դաշնակցական են: Դաշնակցականներն ընկեր են իրար եւ ընկերական ոգին շատ յաճախ տեղ չի թողնում կանոնագրի միջամտութեան:

Այո՛, Դաշնակցութեան անդամներն ընկեր են իրար եւ իրար կանչում են «ընկե՛ր»: Բայց ի՞նչ սահմանների մէջ եւ մինչեւ ո՞ւր ընկեր են իրար: Բազմահազար մարդիկ այսօր դաշնակցական են աշխարհի չորս կողմը, որոնց ոչ տեսած ենք, ոչ ճանաչում ենք: Բայց բաւական է, որ մէկը նրանցից իր մարմնի հաստատագիրը ձեռքին երեւայ մեր մէջ, որ մենք նրան տարիների ընկեր նկատենք: Ի՞նչն է այս սրտագին վարմունքի դրդիչն ու պատճառը: Հաստատագրին նայելով՝ մենք իսկոյն հասկանում ենք,

որ նորեկը ժամանակին երդուած է մեզ նման հաւատարիմ լինել մեր ծրագրին ու կանոնագրին, հետեւապէս նա մեր համամիտն է եւ գործակիցը։ Այսպիսով մենք «ընկեր» ենք իրար կանոնագրի սահմանների մէջ եւ նրա՛ն ենք համարում «ընկեր», որ մեզ նման ձգտում է մեր ծրագրի իրագործման եւ հնազանդում է մեր կանոնագրին։ Ընկերական կապն ու շփումը ամրապնդում են մեր կանոնագրական եւ ծրագրային սերտութիւնը եւ փոխադարձաբար՝ կանոնագրական եւ ծրագրային կապը առատ սնունդ է տալիս մեր ընկերական զգացումին։ Այստեղից պարզ է ինքնին, որ մենք կարող ենք եւ պէտք է ընկերական կապ ու վերաբերում ունենանք մեզ ծանօթ եւ անծանօթ անձերի հետ միմիայն այն պատճառով, որ նրանք՝ ինչպէս ասում են՝ մեր հաւատի մարդիկ են, մեզ պէս են մտածում ու գործում, այլապէս ոչ մէկ հիմք կայ ծանօթ եւ անծանօթ՝ բայց մեզ ոչ համամիտ եւ ոչ գործակից մարդկանց ընկեր նկատելու եւ նրանց հանդէպ ընկերական վերաբերում ունենալու։ Երբ մէկն իր ծրագիրը չի ընդունում, իմ կանոնագրին չի ենթարկւում, իմ կուսակցական աշխատանքին չի գործակցում այլ եւս ի՞նչ ընկեր։ Նա արժանի չէ այդ մեծարժէք անունին։ Նա կարող է լինել ու մնալ շատ յարգելի բարեկամ, շնորհալի խօսակից, ուրախ ըմպակից, պարկեշտ խաղակից, եւայլն, եւայլն, բայց ընկե՞ր– բնա՛ւ եւ երբեք։ Մեր ընկերը նա՛ է, որ նո՛յն նպատակին է ձգտում ինչ որ մենք եւ նո՛յն կանոնագրին է ենթարկւում ինչ որ ամենքս եւ հետեւապէս ուխտած եւ երդուած է միշտ մեզ հետ լինել մեր թէ՛ լայն եւ թէ՛ նեղ օրին։ Անկարգապահը մի որոշ չափով կորցնում է իր ընկերական արժանիքը. անպարտաճանչը կորցնում է դրանից շատ աւելին. իր թերութեանց մէջ յամառողը դառնում է անվստահելի եւ անվստահութեան մէջ յարատեւողը՝ վտարելի, որ եւ կատարում է մարմինը խղճի յանդորրութեամբ։ Ընկերների

եւ մարմինների պարտականութիւնն է ընկերաբար յորդորել, մեծի պէս խրատել, փորձուածի պէս զգուշացնել, իբրեւ մարմին՝ ազդարարել եւ վերջապէս իբր օրինապահ՝ պատժել ու վտարել։ Ոչ մէկ մարմին իրաւունք ունի պահանջելու աւելին քան կանոնագիրն ու կանոնական որոշումը, բայց եւ ոչ մէկ ընկեր իրաւունք ունի անսաստելու կանոնագրին եւ կանոնական որոշումներին։ Ընկերոջ իրաւունքն է ծառանալ ապականոն պահանջի դէմ, բայց եւ իր պարտականութիւնն է կատարել կանոնական պահանջը։ Կանոնագիրը սանձն է թէ՛ ընկերների, թէ՛ մարմինների։

Մեր ընկերական յարաբերութիւնները աւելի աւանդական սովորոյթով են ղեկավարւում, քան կանոնագրի յօդուածներով. բայց այսպէս է այնքան ժամանակ, որքան կուսակցութեան անդամն աւելի ընկեր է զգում իրան, քան իրաւատէր անդամ։ Երբ ընկերը շեղում է կանոնագրից՝ ընկերական կապերին ապաւինելով եւ անկարգապահ քայլեր է անում՝ բարեացակամ վերաբերում յուսալով՝ մարմինների պարտականութիւնն է զգաստութեան հրաւիրել այդ ընկերը, որ շեղումով չմոլորուի եւ ծուռ քայլերով՝ չսայթաքի գահավէժ։ Աւանդական սովորոյթին պէտք է փոխարինէ օրինապահ վերաբերումը այդ կարգի ընկերների հանդէպ, որովհետեւ անկարգապահ ընթացքը սառցնում է ընկերական ջերմութիւնը եւ սովորոյթի մեղմութիւնը դառնում է կարծր պաշտօնականութիւն։ Սովորոյթը հանդուրժումի այն չափն է, որ կարող է թոյլ տալ մարմինը ընկերի հանէպ. այդ հանդուրժումը սակայն չի կարող հասնիլ մինչեւ կանոնագրի անտեսումը։ Սովորոյթն այնքան արժէք ունի եւ հանդուրժելի է, որքան դէմ չէ մեր կանոնագրին, որին պատկանում է վերջին ու կտրուկ խօսքը երբ բախւում են իրար ընկեր ու մարմին։ Ինչ-ինչ բարի դիտումներով

մարմինը կարող է յետաձգել կանոնագրի միջամտութիւնը բախումների ժամանակ. նոյն տեսակ բարի դիտումներով ընկերները կարող են առժամապէս համբերատար գտնուիլ մարմինների թերացման հանդէպ, բայց մարմինները չեն կարող հանդուրժել մինչ այն աստիճան, որ կուսակցական բարքն ապականուի, ինչպէս եւ ընկերներն իրաւունք չունին համբերատար լինել մինչ այն աստիճան, որ զեղծում եւ ապօրինութիւն տիրապետեն: Սովորոյթը չի կարող կանոնագրի տեղը գրաւել: Սովորոյթը աւանդութեան հմայք ունի եւ գրաւիչ է յաճախ, բայց նա անորոշ է ընդհանրապէս եւ միատած է մեղկութեան: Ընկերական սէրը շինարար է կանոնագրի սահմանների մէջ եւ քայքայիչ ու լոյծ՝ երբ դուրս է գալիս այդ սահմաններից: Սովորոյթը սպեղանի է մանր վէրքերի, բայց փթախտը կանոնագրի դանակը կարող է բուժել: Վարիչ մարմինը պէտք է ջերմ սէր ունենայ դէպի ընկերները, բայց կանոնագրի հատու հարուածը միշտ պէտք է պատրաստ լինի իր ձեռքին, որովհետեւ հին ու ճշմարիտ խօսք է թէ. «Որ ոչ լուիցէ անկամբ՝ լուիցէ թիկամբ»(*):

Այսպիսով ընկերական սէրն ու կանոնագիրն իրար չեն ժխտում, այլ լրացնում են իրար. երբ չի ազդում առաջինը միջամտում է երկրորդը: Բայց երկրորդը պէտք է միջամտէ այ՛ն ժամանակ, երբ առաջինն անզօր է եւ ապարդիւն: Մարմինները առաջին հերթին պարտաւոր են յորդոր ու խրատ կիրարկել՝ ընկերական սէրը գործի կանչելով եւ վերջին վայրկեանին կանոնագրի հեղինակութեան դիմեն, երբ յորդորն ու սէրը անզօր գտնուին: Կանոնագրի գործադրութեան յետաձգումը մարմինների իրաւունքն է եւ պարտականութիւնը, որովհետեւ նրանք գործ ունին ո՛չ թէ հպատակների, այլ ընկերների հետ, բայց կանոնագրի անտեսումը յանուն ընկերութեան՝ նշան է մարմինների մեղկութեան: Վերջին

(*) Ով չի լսի ականջով՝ կը լսի թիկունքով (այսինքն ծեծով):

հաշուով՝ կանոնագիրն է, որ ղեկավարն է կուսակցութեան եւ ոչ ընկերական վերաբերումը կամ աւանդական սովորոյթը։ Որքան թեթեւամիտ է այն մարմինը, որ բախումի պարագային անմիջապէս քաշում է կանոնագրի սուրը, նոյնքան մեղկ է այն մարմինը, որ ուր պէտք է սուր քաշել՝ յորդոր ու խրատ է կիրարկում։

1987, Մայիս

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

(ՈՒՐՈՒԱԳԾԵՐ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ)

հատուած

Նիկոլ Աղբալեան ծնած է 1873 թուին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի հայաբնակ Հալաբար թաղը, աղքատ ընտանիքի մէջ։ Հայրը համեստ փռապան մըն էր, մայրը՝ ռամիկ եւ նահապետական բարքերով ապրող, բայց գրասէր կին մը, իր զաւակին մօտ ուսման սէրը արթնցնող առաջին անձը կ'ըլլայ։

Նախնական կրթութիւնը իր թաղի վարժարանին մէջ ստանալէ յետոյ, Ն. Աղբալեան կը յաճախէ Թիֆլիսի Ներսէսեան դպրոցը, որուն ընթացքը չաւարտած՝ կը մտնէ Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որ ժամանակի հայ իրականութեան մէջ իբրեւ երկրորդական ուսման կեդրոն՝ բացառիկ տեղ մը կը գրաւէր։

Դուրս գալով ճեմարանէն, Ն. Աղբալեան ոտքով կը շրջի Արեւելեան Հայաստանի մէկ կարեւոր մասը եւ ամսուան ընթացքին քանի մը տասնեակ գիւղ ու քաղաք անցնելէ եւ Հայոց աշխարհի այդ մասին լաւապէս ծանօթանալէ յետոյ կը հասնի Թիֆլիս։

1900ական թուականներուն Ն. Աղբալեան Թիֆլիսի մէջ յայտնի մտաւորական գրող մըն է արդէն, եւ մաս կը կազմէ գրողներու այն խմբակին, որոնք յաճախ կը հաւաքուին

առաջնորդ Գարեգին Վարդապետ Յովսէփեանի (յետագային Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) մօտ, զրոյցներ եւ ելոյթներ կունենան մշակութային հարցերու շուրջ։

Գրականութեան եւ գիտութեան հանդէպ, սակայն, Ն. Աղբալեանի ծարաւը անյագ է, իսկ իր ունեցածը՝ անբաւարար։ Կովկասը աւելին տալ չէր կրնար իր սահմանափակ հորիզոնով։ Այդ իսկ պատճառով կ'անցնի Ռուսաստան՝ Փեթերպուրկ, ուր կը ջանայ հետեւիլ փրոֆ. Ն. Մառի լեզուագիտական դասընթացքներուն, բայց կարելի չըլլար նիւթական դժուարութիւններու պատճառով։ Կը ստիպուի մէկ կողմէն Հայոց եկեղեցիին մէջ դպրութիւն ընել, միւս կողմէ հանրային մատենադարան յաճախել եւ ձեռնարկել ռուսա-հայ պարբերական մամուլի ցանկի կազմութեան, սակայն այս աշխատանքն ալ երկար շարունակել կարելի չըլլար՝ կանցնի Մոսկուա, ուր մէկ կողմէ կը հետեւի համալսարանական դասընթացքի, միւս կողմէ անվերջ կը կարդայ ռուսական գրականութեան առաջնակարգ գրողներու երկերը, մօտէն հաղորդակից կըլլայ Ռուսաստանը յուզող գրական, ընկերական-հասարակական շարժումներուն եւ ռուսերէն լեզուի միջոցով կը ծանօթանայ Եւրոպական, առանձնապէս ֆրանսական եւ մասամբ՝ անգլիական գրականութիւններուն։

Կարճ ժամանակ յետոյ Ն. Աղբալեան կ'անցնի Եւրոպա։ Փարիզ ժամանակ մը կը հետեւի Սորպոնի մէջ Պերկսոնի եւ ուրիշ անուանի դասախօսներու գրական-իմաստասիրական-հասարագիտական նիւթերու նուիրուած դասախօսութիւններուն։ Փարիզէն կ'անցնի Ջուիցերիա, ապա՝ Պալքաններ, անկէ Եգիպտոս։ Նոյն տարին կը վերադառնայ Կովկաս եւ 1905-ին մաս կը կազմէ Յովհ. Թումանեանի

Վերնատան խմբակին։

1909-ին Ն. Աղբալեան կրթական եւ հանրային գործերով կը մեկնի Պարսկաստան՝ Թեհրան, ուր կը մնայ մինչեւ 1912 թուականը, ունենալով մշակութային եւ հանրային բեղուն գործունէութիւն մը։

1912-ին կը վերադառնայ Թիֆլիս ու կ'անդամակցի Հայ Գրողներու Ընկերութեան, դառնալով միաժամանակ այդ ընկերակցութեան ամենէն հեղինակաւոր դէմքերէն մէկը։ 1912 թուականին եւ յաջորդող քանի մը տարիներուն, Ն. Աղբալեան աշխատակցութեան լայն բաժին մը կ'ունենայ Թիֆլիսի «Հորիզոն» թերթին բազմաթիւ քննադատական, վերլուծական յօդուածներով, ընկերային-քաղաքական քրոնիկներով՝ արձագանք հանդիսանալով ազգային թէ միջազգային իրադարձութիւններուն։

1914-ին կը պայթի առաջին համաշխարհային պատերազմը։ Հայութեան երկու հատուածներն ալ կը բերեն իրենց մասնակցութիւնը այս պատերազմին։ Արեւելահայ հատուածը իր բախտը կը կապէ ռուսական զէնքերուն, կը կազմուի Հայոց Ազգ. Պիւրօ եւ Հայ Կամաւորական Գունդերու Կազմակերպիչ Մարմին։ Ն. Աղբալեան այս երկու մարմիններուն մէջ ալ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ. կռուող զօրքին հետ կը մեկնի ճակատ, կը բաժնէ ճակատին վրայ հայ զօրքին կրած դառնութիւնները։ Հայ զօրքին հետ կը մտնէ Վան, Պիթլիս։ Ճակատի գործողութիւններուն հետեւելով մէկտեղ, առիթ կը գտնէ հետաքրքրուելու եւ փրկելու բազմահազար գրքեր կիսափուլ վանքերու, տուներու փլատակներու մէջէն, որոնց մէջ կը գտնուէին բազմաթիւ ձեռագիրներ եւ թանկարժէք հրատարակութիւններ։

Մօտ հինգ տարի տեւող պատերազմի վերջաւորութեան, բուռն ճակատամարտերու գնով, հայութիւնը կը տիրանայ իր անկախութեան։ Կը հռչակուի Հայաստանի Հանրապետութիւնը։ Առաջին անգամ հայոց հողին վրայ հայութիւնը կ'ունենայ հանրապետական վարչակարգ եւ խորհրդարան։ Ն. Աղբալեան ազատ Հայաստանի առաջին խորհրդարանի անդամ կ'ընտրուի եւ այդ հանգամանքով կը մնայ մինչեւ հանրապետութեան վախճանը, հանդիսանալով խորհրդարանի ամենէն կարկառուն դէմքերէն մէկը։

1919-ին Ն. Աղբալեան կը վիճակուի Հայաստանի Հանրային Լուսաւորութեան Նախարարի պատասխանատու պաշտօնը, որ կը տանի իր անձին վայել լրջութեամբ։ Իրեն կը վիճակուի նաեւ Ազատ Հայաստանի հողին վրայ առաջին համալսարանի հիմնադրութեան պատիւը եւ կրթական ծրագրի պատրաստութեան հոգը։

Հայաստանի Հանրապետութիւնը երկար չի տեւեր. թրքական ու ռուսական դաւերն ու ոտնձգութիւնները կը հարկադրեն Հայաստանը՝ ընդունելու խորհրդային իրաւակարգ։ Հակառակ նախապէս կայացած համաձայնութեան՝ Հայաստանի բանտերը կը լեցուին պետական գործիչներով, մտաւորականներով։ Ն. Աղբալեան եւս կը նետուի բանտ եւ կը ճաշակէ պոլշեւիկեան բանտին դառնութիւնները։ Բանտին մէջ սկսած էր գործել կացինը, երբ կը պայթի փետրուարեան ապստամբութիւնը, կը խորտակուին բանտերուն դռները, կ'ազատուին կացնահարութենէ զերծ մնացածները եւ երկրէն դուրս կը վտարուին նորեկ իշխանաւորները։

1921-ի Ապրիլին, սակայն, Ն. Աղբալեան ուրիշ հազարաւորներու հետ կը բռնէ տարագրութեան ճամբան,

նախ Պարսկաստան, ապա Եգիպտոս, ուր Աղեքսանդրիոյ Ազգ. Պօղոսեան վարժարանի տեսչութիւնը կը ստանձնէ ու կը վարէ մինչեւ 1928 թուականը։

1928-ին իր վաղեմի ընկերոջ՝ Լ. Շանթի եւ խումբ մը մտաւորական եւ հանրային գործիչներու հետ կը հիմնեն Հայ Կրթական եւ Հրատարակչական «Համազգային» ընկերութիւնը, որուն մշակութային ծրագրի պատրաստութեան մէջ մեծ բաժին կ'ունենայ ինք։ Ջանցած երկու տարի, 1930-ին Ն. Աղբալեան եւ Լ. Շանթ կը հիմնեն Հայ Ճեմարանը, որուն մինչեւ մահ կը դառնայ տնօրէն խորհուրդի անդամ եւ նոյն հաստատութեան բարձրագոյն կարգերուն մէջ կը դասաւանդէ գրաբար եւ Հայ գրականութեան պատմութիւն։

1928-ին «Դրօշակ»-էն արտատպուելով առանձին հատորով կը հրատարակուի իր «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին» անուն գործը, 1937-ին երկու փոքրիկ տետրակներ՝ նուիրուած Դաշնակցութեան կանոնագրի պարզաբանման։

Արտասահմանի մէջ, իր գրական-մանկավարժական գործունէութեան զուգահեռ, Ն. Աղբալեան կը դառնայ Հայ մշակոյթի շրջուն քարոզիչը՝ Պարսկաստանէն Եգիպտոս, Ֆրանսա, Սուրիա, բայց մանաւանդ Լիբանան։ Անզուգական հռետոր մըն էր եւ ներհուն դասախօս մը, որ խօսած է որքան մտաւորականին, նոյնքան հասարակ ժողովուրդին, միշտ մատչելի հաղորդական ու առինքնող շունչով մը։

Իր կեանքի վերջին տարիները Ն. Աղբալեան կ'ապրէր քայքայուած առողջութեամբ. արնախռնումը եւ շնչատութիւնը կը հարկադրեն զինքը հրաժարելու մանկավարժական եւ հանրային ամէն աշխատանքէ, գրեթէ մեկուսացած իր

Շթորայի բնակարանին մէջ։ Իր աչքերը ընդմիշտ կը փակէ 1947 Օգոստոս 15-ի առտեան դէմ, 74 տարեկան հասակին մէջ։

ԳԱՌՆԻԿ ԲԱՆԵԱՆ



Նիկոլ Աղբալեան

Այլ Հրապարակումներ



www.arfd.am/lib/

Էլեկտրոնային այս հրապարակման գրաշարութիւնը, էջադրումն ու կողքի ձեւավորումը կատարեց
ՍԵՒԱԿ ԱՐՈՅԵԱՆ:

Դաշնակցականը
Ընկերական զրոյցներ
Ա. Մեր կանոնագիրը
Կանոնագրի դերը կազմակերպութեան մէջ
Կուսակցական համակիրն ու անդամը
Մեր կանոնագրի յօրինուածքը
Բ. Կրկին մեր կանոնագիրը
Կանոնագիր եւ ազատութիւն
Կանոնական շեղումներ
Ո՞վ է մեր ընկերը
Նիկոլ Աղբալեան (Ուրուագծեր կեանքի եւ գործի մասին)
Գառնիկ Բանեան

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
2020